1. Դասավանդման և ուսումնառության մեթոդների գնահատման կառուցակարգերն ու գործիքները,
2. Ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունների և ցուցաբերվող աջակցության գնահատումը,
3. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության արդյունավետության գնահատման կառուցակարգերն ու մեթոդները,
4. Առաջավոր բուհերի հետ իրականացվող վերլուծական համադրությունը՝ որպես բուհի զարգացման կառուցակարգ,
5. Բուհերում կրթական ծառայությունների գնի հաշվարկի մեթոդաբանությունը,
6. Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացի արդյունավետության գնահատման կառուցակարգերը:

Կրթության որակի ապահովման միջազգային չափանիշների, գործող համակարգերի, կառուցակարգերի ուսումնասիրման, տեղայնացման և կիրարկման, միջազգային ծրագրերի գծով իրականացվող աշխատանքների համակարգման, նոր նախագծերին համալսարանի մասնակցության աշխատանքների իրականացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժինը համալրվեց միջազգային ծրագրերի գծով մասնագետով:

Հաշվետու ժամանակահատվածում ևս շարունակվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից ուսումնական նյութերի հրատարակման աշխատանքները, մասնավորապես ԳՊՀ գիտխորհրդի կողմից տպագրության է երաշխավորվել Ա.Ղարագոյանի հեղինակած «Հայոց պատմության հիմնահարցեր» աշխատությունը:

Համալսարանում, կարևորելով տարբեր հաստատությունների հետ համագործակցությունը, հաշվետու ուստարում հուշագրեր և նոր պայմանագրեր են կնքվել հանրապետության և արտերկրի տարբեր հաստատությունների հետ:

Կրթադաստիարակչական, ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության ոլորտներում համատեղ փոխշահավետ ծրագրերի մշակման և իրականացման, դասախոսների և ուսանողների ակադեմիական փոխանակման, համատեղ փաստաթղթերի մշակման և ընդունման, ստորագրման, տեղեկատվական և մարզամշակութային միջոցառումների կազմակերպման նպատակով համագործակցության հուշագիր կնքվեց ԳՊՀ-ի և Արցախի պետական համալսարանի միջև:

ՀՀ կառավարության կողմից հաստատված «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու» կարգի համաձայն՝ համապատասխան մասնագիտությունների գծով ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և կատարելագործման նպատակով հաշվետու ուստարում պայմանագրեր են կնքվել նաև Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան, Վարդենիսի «Բաղեյան» պետական և Հայաստանում եվրոպական քոլեջների հետ՝ այս ոլորտում համագործակից հաստատությունների թիվը հասցնելով 20-ի:

Ելնելով ՀՀ կրթական համակարգին ներկայացվող արդի պահանջներից՝ աշակերտների հակումներին, նախասիրություններին, կարողություններին համապատասխան՝ ապագա մասնագիտության ընտրության հարցում աջակցելու, համալսարանում գործող մասնագիտությունների վերաբերյալ սովորողների մոտ պատկերացումներ և կողմնորոշում ձևավորելու նպատակով հաշվետու ուստարում կնքվեցին համագործակցության հուշագրեր համալսարանի և «Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Հ. Խաչատրյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոց», «Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոց», «Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց», «Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց», «Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց», «Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց», «Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի միջնակարգ դպրոց», «Գավառի Ս. Քոչարյանի անվան հիմնական դպրոց», «Մարտունու Մնաց Շահունյանցի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների միջև: Ըստ կնքված հուշագրերի՝ համալսարանը պարտավորվում է նշված ուսումնական հաստատություններին անհատույց տրամադրել ուսումնամեթոդական ձեռնարկներ, գիտական պարբերականներ, ուղեցույցեր, այլ նյութեր, մեթոդական աջակցություն ցուցաբերել ուսուցիչներին, կազմակերպել կարճաժամկետ վերապատ-

րաստման դասընթացներ, աշակերտների համար կազմակերպել «Բաց դռների օրեր», ճանաչողական այցեր համալսարան՝ նրանց հնարավորություն ընձեռելով հանդիպելու համալսարանի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, ծանոթանալու համալսարանի ֆակուլտետներին, ամբիոններին, ուսուցանվող մասնագիտություններին և ուսումնառության առկա հնարավորություններին, նախապատրաստելու բուհ ընդունվելուն: Կարևորվել են բուհ-դպրոց կապի հետևողական ամրապնդման և արդյունավետության բարձրացման աշխատանքները: Շարունակվել են համալսարանականների այցելությունները մարզի հիմնական և ավագ դպրոցներ, թվով 454 աշակերտների շրջանում անցկացվել են հարցումներ, ամփոփվել արդյունքները, նրանցից 127-ը ցանկություն էր հայտնել սովորել ԳՊՀ-ում:

Համալսարանի ուսանողների ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների արդյունավետ անցկացման, մասնագիտությանը համապատասխան հաստատություններին, դրանց կառուցվածքային ստորաբաժանումներին և փաստաթղթերին ծանոթանալու նպատակով պայմանագրեր են կնքվել Գեղարքունիքի մարզի համայնքների թվով 40 գյուղապետարանների, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի հետ՝ այս ոլորտում համալսարանի հետ համագործակցող կազմակերպությունների թիվը հասցնելով 87-ի:

Ընդունելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ու պաշտպանունակության հրամայականը, ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովման, զինծառայողների համար կրթական, տեղեկատվական, ճանաչողական, մշակութային տարբեր ծրագրերի իրականացման, ինչպես նաև ուսանողներին զինվորական ծառայության նախապատրաստման կարևորությունը՝ համալսարանը եռակողմ համագործակցության հուշագիր է կնքել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և ՀՀ պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ-ն իր պատրաստակամությունը հայտնելով անդամակցելու հանրապետությունում բարձրագույն մասնագիտական կրթության կառավարման համակարգին և մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման աշխատանքներին, համալսարանում տեղադրվեց Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական «Թեմիս» համակարգը (ՄԿԿՏՀ): Հաշվետու ուստարում ՄԿԿՏՀ մուտքագրվել են ֆակուլտետների և ամբիոնների տվյալները, մասնագիտական կրթական ծրագրերը՝ ըստ կրթական աստիճանների, համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի տվյալները, ԳՊՀ ուսանողների տվյալները, ավարտին է հասցվում մասնագիտական կրթական ծրագրերի, ամբիոնների և դասախոսների անունների համապատասխանեցման աշխատանքները: Սակայն ծրագրի ոչ կատարյալ լինելու պատճառով դեռևս համակարգը հնարավորություն չի ընձեռում համալսարանում ունենալ տեղեկատվության հավաքագրման և պահպանման առավել արդյունավետ համակարգ, որն էլ իր դրական ազդեցությունը կունենա կրթության կազմակերպման, կրթության որակի վերահսկման, կրթական ծրագրերի մշտադիտարկման, որակի ներքին գնահատման և ակադեմիական գործընթացների էլեկտրոնային կառավարման գործընթացում:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման, Բոլոնիայի գործընթացի ընթացակարգային պահանջների կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված, կրթական գործընթացի միջազգայնացման, եվրոպական փորձի ուսումնասիրման, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակադեմիական շար-

Ժուճուքային ապահովման նկատառումներից ելնելով՝ իրականացված հետևողական աշխատանքների շնորհիվ հաշվետու ուստարում մեկնարկեցին Եվրոպական Միության Տեմպուսի ևս 7 և մեկ Սևծովյան տարածաշրջանային համագործակցության ծրագրեր՝ VERITAS (Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կառուցվածքային զարգացում՝ Չալցբուրգի սկզբունքների հիման վրա), GOVERN (Ինքնավարության և հաշվետվողականության խթանում. բարձրագույն կրթության ոլորտում Բոլոնիայի սկզբունքներին համահունչ արդյունավետ փոփոխությունների կառավարման արդի համակարգի զարգացում), ARMENQA (Ազգային և սեկտորիալ որակավորումների շրջանակների իրականացում (Ճանաչում ազգային և միջազգային աշխատանքային շուկայում Հայաստանում), LeAGUe (Համագործակցության ցանց՝ Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև կրթության զարգացման համար), PICASA (Բուհերի միջազգայնացման խթանում արևելյան հարևանության երկրներում՝ մշակութային և կառուցվածքային փոփոխությունների միջոցով), RETHINK (Կրթության բարեփոխում՝ գիտելիքի միջազգային փոխանակման միջոցով), PACT (Կովկասյան տարածաշրջանում գիտահետազոտական նախագծերի մասնակիցների գիտական ներուժի վերապատրաստում), Սևծովյան համագործակցության՝ Tourism Paths of the Black Sea Region (Սևծովյան տարածաշրջանի զբոսաշրջության ուղիների որոնում), ուսանողների շարժունության և ակադեմիական փոխանակման Էրասմուս Մունդուս– Hermes ծրագրերը:

Միջազգային 15 ծրագրերին անդամակցումը ընձեռում է նաև լավ հնարավորություններ կրթության որակի ապահովման գործընթացներում լավագույն փորձի ուսումնասիրման և տեղայնացման համար:

Հետևողական աշխատանքներ են ծավալելվել ՀՀ օրենքների, ԿԳՆ կանոնակարգերի, այլ իրավական ակտերի փոփոխություններին համապատասխան ԳՊՀ կանոնակարգային փաթեթի համաձայնեցման ուղղությամբ: Լրամշակվել և փոփոխվել են Գավառի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման, Գավառի պետական համալսարանի ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգերը, Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և վարձն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու, Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կանոնակարգերը՝ փոփոխություններն ու լրամշակումները իրագրելով ուսանողներին, աշխատակիցներին, ԳՊՀ պաշտոնական կայքի միջոցով նաև այլ շահառուներին:

Շարունակվել են աշխատանքները կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային փոփոխությունների իրականացման, կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ՝ հաշվի առնելով ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում նախորդ ուստարում կատարված հարցումների արդյունքները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից արված առաջարկություններն ու նկատառումները: Մշակվել են նոր կրթական դասընթացներ, արդիականացվել իրականացվող դասընթացների բովանդակությունը: Օտար լեզուների ամբիոնի կողմից մշակվել և իրականացվել են հետևյալ նոր դասընթացները. Գրավոր խոսքի հմտությունների զարգացում, Գրական թարգմանություն, Մասնագիտական օտար լեզվի զարգացում (C1 մակարդակ), Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի կողմից՝ Տվյալներ-

րի բազա՝ SQL, Ծրագրավորման PHP լեզու, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի կողմից՝ Բնագրի լեզվի վերլուծություն, Հայ գյուղագիր գրողներ, Հաշվապահական հաշվառման ամբիոնի կողմից՝ Մտավոր սեփականության իրավունք և արտոնագրային գործ, Անձնակազմի կառավարում դասընթացները: Հասարակական գիտությունների ամբիոնի կողմից մշակվել, սակայն հաշվետու ուստարում չեն իրականացվել հետևյալ դասընթացները՝ Շախմատի տեսություն և պրակտիկա, որը կիրականացվի 2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակից, Ներառական կրթության տեսություն և պրակտիկում, Գործնական մանկավարժություն, Պամության ամբիոնի կողմից՝ Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն դասընթացները: Այս ուղղությամբ դեռևս անելիքները շատ են, իրականացված չէ մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների, նախանշված իրազեկությունների և իրականացվող դասընթացների վերջնարդյունքներով պայմանավորված՝ դրանց իրական ապահովման աստիճանը:

ԳՊՀ ուսանողների գնահատման նոր ձևերի, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման արդի մեթոդների կիրարկման նպատակով համալսարանում մշակված և ներդրված «Examination-GSU» համակարգի միջոցով նախապատրաստվել և կազմակերպվել են միջանկյալ և ամփոփիչ՝ հանրագումարային քննություններ: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 16 խմբի թեստային քննություն՝ 9 դասընթացների գծով, համակարգը համալրվել է 2 նոր դասընթացների թեստերի բազայով, վերախմբագրվել է 1 դասընթացի թեստերի բազան: Սակայն արդյունքները դեռ բավարար չեն, դեռևս լուրջ աշխատանքներ կան իրականացնելու: Գնահատման մեթոդները ոչ միշտ են համաձայնեցված առարկայական ծրագրերում նախապես սահմանված կրթական վերջնարդյունքներին: Բավարար չափով մշակված չէ դասընթացների թեստերի բազա՝ ուսանողների ակադեմիական շարժունության կազմակերպման պարագայում նրանց գիտելիքների ստուգման և գնահատման համար:

Կրթության որակի ապահովումը համարելով գերնպատակ՝ համալսարանը ապահովել է մշտական մասնակցություն հանրապետության, ինչպես նաև արտերկրի գործընկեր բուհերում կազմակերպվող կրթության որակին նվիրված տարբեր համաժողովներին, սեմինարներին, գիտաժողովներին՝ նվիրված բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներին, ակտիվորեն մասնակցել է ծավալված քննարկումներին, ներկայացրել առաջարկություններ:

Համալսարանը սերտորեն համագործակցել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կերտրոնի, Բաց հասարակության հիմնադրամի, Հայաստանում «ՏԵՄՊՈՒՍ» ծրագրի ազգային գրասենյակի, հանրապետության բոլոր պետական բուհերի, գիտակրթական այլ հաստատությունների հետ:

Հաշվետու ուստարում համալսարանում կազմակերպվեց ամենամյա (16-րդ) գիտաժողովը՝ նվիրված բուհի հիմնադրման 20-ամյակին: Գիտաժողովին զեկուցումներով հանդես են եկել 91 գիտաշխատողներ, տպագրության է պատրաստվում թվով 110 հեղինակների 86 հոդվածներ, որոնց թվում՝ զեկուցումներ Վրաստանից: Գիտական-հետազոտական աշխատանքների իրականացվող քանակը դեռևս գոհացուցիչ չէ. հոդված- դասախոս առկա հարաբերությունը 0.69-ն է, որը մտահոգիչ է:

Հաշվետու ժամանակահատվածում ևս հետևողական աշխատանքներ են կատարվել բուհում կրթության որակի ուսումնասիրման, վերահսկման և շարունակական բարձրացման, եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակի ապահովման չափանիշներին և ուղեմիշներին համապատասխան՝ որակի ապահովման ներբուհական հա-

մակարգի ստեղծման, ինքնավերլուծության անցկացման, բուհի կրթական ծրագրերի ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրմանը նախապատրաստվելու նպատակով:

2014թ. մարտին ավարտվեց «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ԿԳ նախարարության կողմից հայտարարված «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում կամ դրանց հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրի աշխատանքները, որի շրջանակներում զգալի նյութական, ուսումնամեթոդական ռեսուրսներ ձեռք բերվեցին ինչպես գրասենյակային կահույքի, համակարգիչների և սարքավորումների, համալսարանի մուտքի վերահիսկման անվտանգության համակարգի, գրեմական պիտույքների, ուսումնամեթոդական գրականության, համակարգչային ծրագրերի և էլեկտրոնային ռեսուրսների տեսքով, այնպես էլ տեղական և միջազգային խորհրդատվական ծառայությունների գնման, սեմինարների, խորհրդակցությունների, վերապատրաստումների կազմակերպման, բուհի իրականացրած կրթական ծրագրերի որակի, ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ հանրության շրջանում տեղեկատվության տարածման, հրապարակայնության ապահովման նկատառումներով տպագրության, էթերաժամի կամ տպագիր մամուլում տարածքի գնման և համապատասխան աշխատանքների իրականացման ձևերով: ԳՊՀ աշխատանքային խմբի կողմից լրացվեց ինքնավերլուծության սահմանված ձևաչափը, ներկայացվեց ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբին և ստացանք դրական արձագանք: Դրամաշնորհի իրականացման ընթացքում բուհի աշխատակազմի, ուսանողների շրջանում անցկացված խորհրդատվությունների, միջազգային ծրագրերին անդամակցության շնորհիվ ձեռք բերված փորձառությունը բավարար հիմք է համալսարանի հավատարմագրման գործընթացի անցկացման համար:

Կարևորելով կրթական միջավայրը, մասնավորապես ուսումնական ռեսուրսները՝ հաշվետու ուստարում մշակվեց և գործարկվեց համալսարանի մասնագիտական էլեկտրոնային գրադարանի «E-Library GSU» կայքը, որը համալրվեց արդի էլեկտրոնային մասնագիտական գրականությամբ՝ այն առայժմ հասցնելով շուրջ 550–ի, մուտքի հնարավորություն ստեղծելով համալսարանի բոլոր ուսանողների և աշխատակիցների համար, ինչպես նաև օգտակար հղումներ՝ այլ գիտակրթական հաստատությունների էլեկտրոնային գրադարաններից օգտվելու համար: Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ գրադարաններում գրքերի քանակը համալրվեց 850 նոր գրքերով, գրքերի ընդհանուր քանակը հասնում է 40800–ի, դասագիրք-ուսանող հարաբերակցությունը կազմում է 2,7: ԳՊՀ գրադարանը, լինելով Հայաստանի գրադարանային ասոցիացիայի անդամ, համագործակցում է ՀՀ ազգային և այլ հայաստանյան գրադարանների հետ: Համալրման աշխատանքները շարունակվում են: Թարմացվում և նորացվում են «E-learning GSU» համակարգում դասընթացների տիրույթներում նոր ուսումնական նյութերի տեղակայման աշխատանքները: «E-learning GSU» համակարգում ստեղծվել և գործարկվել է թվով 1118 դասընթացների փաթեթների տիրույթ, ավելացել է 64 օգտատերերի նոր տիրույթ: Սակայն «E-learning GSU» համակարգում մուտքագրված դասընթացների բովանդակային, ծրագրային մշտադիտարկում (մոնիթորինգ) լիարժեք իրականացված չէ, այդ ուղղությամբ ծրագրվում է աշխատանքներ իրականացնել ընթացիկ ուստարում: Կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ուսուցման կազմակերպման գործընթացում՝ համալսարանի Տեխնիկական շահագործման բաժինը վերակազմակերպվեց և ստեղծվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը, մշակվեց և գիտ-

խորհրդի հաստատումը ստացավ «ԳՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի» կանոնակարգը:

Մասնագիտական բարձրագույն կրթության որակի ապահովման նպատակով համալսարանի և ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների, ծնողական համայնքի միջև հետադարձ կապերի ապահովման, ԳՊՀ-ում որակի մշակույթի շարունակական զարգացման նպատակով մշտապես կատարվել են հարցումներ ուսանողների, շրջանավարտների շրջանում, ամփոփվել են արդյունքները, ներկայացվել ԳՊՀ գիտխորհրդի քննարկմանը, գիտխորհրդի կողմից ենթակառուցվածքային ստորաբաժանումներին տրվել են հանձնարարականներ՝ համապատասխան ուղղություններով ցուցանիշների բարելավման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են տարբեր հարցաթերթեր՝ ուղղված ուսանողների շրջանում խնդիրների վերհանամանը և համալսարանում մշակված և ներդրված ուսանողների շրջանում հարցումների, թիրախային այլ խմբերի կարծիքների հավաքագրման և արդյունքների մշակման համակարգչային ծրագրի միջոցով կրթական ծրագրերի իրականացման որակից բավարարվածության վերաբերյալ թվով 397 ուսանողների շրջանում իրականացվել են էլեկտրոնային հարցումներ, ամփոփվել արդյունքները: Կրթական ռեսուրսների արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցումներ են անցկացվել ուսանողների շրջանում, և բավարարվածության աստիճանը կազմում է 74%:

Աշխատանքներ են կատարվել, որպեսզի ֆակուլտետային, համալսարանական զարգացման հայեցակարգերում առաջնահերթությունները ամրագրելիս, դրանց բարելավման աշխատանքները «քարտեզագրելիս»՝ հաշվի առնվի ուսանողական հարցումների արդյունքները: Դեռևս բավականաչափ ուսումնասիրություններ կատարված չեն պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում կրթական ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ: Այս ուղղությամբ ծրագրում ենք աշխատանքներ իրականացնել ընթացիկ ուստարում:

Շարունակվել են աշխատանքները հանրության շրջանում համալսարանի կրթական, գիտական, լուսավորչական, դաստիարակչական գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում «Գեղամա» հեռուստաընկերությամբ եթեր է հեռարձակվել «Համալսարանական ժամի» 11 տեսանյութ: Դիմորդների, հանրակրթական դպրոցների աշակերտների, ծնողների, հանրության այլ շրջանակներում համալսարանի գործունեության, իրականացվող կրթական գործընթացների, ծրագրերի վերաբերյալ համակողմանի տեղեկատվության տրամադրման նպատակով համալսարանի գրադարաններում առկա են բուհում իրականացվող երկու կրթական աստիճանների բոլոր կրթական ծրագրերի տեղեկագրքերը, մասնագիտությունների հայեցակարգերը, դրանք տրամադրվում են նաև գործընկեր հաստատություններին:

ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինները համագործակցել են տարածաշրջանի և հանրապետության երիտասարդական կառույցների, հասարակական կազմակերպությունների հետ: Բուհում կազմակերպվել են ուսանողական գիտաժողովներ, ինչպես նաև գեղարվեստական միջոցառումների շարք՝ նվիրված ազգային տոներին, անվանի գրողներին, քաղաքական գործիչներին, բուհի հիմնադրման 20-ամյակին:

Ուսանողները ակտիվորեն մասնակցել են հանրապետության այլ բուհերում կազմակերպվող ուսանողական հանրապետական գիտաժողովներին, մշակութային, սպորտային միջոցառումներին:

**2013-2014 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի
ուսումնագիտական զարգացման ռազմավարական ուղղությունները**

ԳՊՀ զարգացման և բարեփոխման (2011-2016 թթ.) հայեցակարգին համապատասխան՝ 2014-2015 ուստարում ծրագրում ենք իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Հետևողական աշխատանքներ ծավալել ՀՀ օրենքների, ԿԳՆ կանոնակարգերի, այլ իրավական ակտերի փոփոխություններին ԳՊՀ կանոնակարգային համապատասխան հիմքերի ուղղությամբ:
2. Ներդնել ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության առավել թափանցիկ և նորարարական մեխանիզմներ՝ բուհում սահմանված առաջնահերթությունների իրականացման, դրանց համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորման և համալրման գործընթացի գնահատման համար:
3. Շարունակել կրթական ծրագրերի մշտադիտարկումը՝ համաձայն ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների:
4. Շարունակել ուսանողների և դասավանդողների օտար լեզուների իմացության մակարդակի, դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքները:
5. Բարձրացնել համացանցի մատչելիության աստիճանը ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար:
6. Պլանավորել և իրականացնել համալսարանում պարբերաբար անցկացվող ուսանողական հարցումների արդյունքների, թիրախային խմբերի արձագանքի, ինչպես նաև բազմագործոն (ինքնագնահատում, ղեկավարի կողմից գնահատում) գնահատման արդյունքների հաշվառմամբ՝ դասախոսների փորձնական վարկանիշավորում, որի իրականացումը միտված կլինի դասախոսների արդյունավետ աշխատանքի շահադրդմանը (մոտիվացմանը):
7. Կազմակերպել տարբեր ծրագրերով վերապատրաստում անցած մասնագետների փորձի փոխանակման, լավագույն մեթոդների, կրթական նորագույն տեխնոլոգիաների տեղայնացման և կիրարկման արդյունավետ գործընթաց:
8. Մշտական աշխատանքներ ծավալել մասնագիտական կրթության որակի ապահովման և վերահսկման նպատակով նոր կառուցակարգերի, գործիքների մշակման և գործարկման ուղղությամբ հանրապետությունում և եվրոպական կրթատարածքում իրականացվող զարգացումներին իրազեկվելու և մասնակցելու նպատակով:
9. Աշխատանքներ ծավալել ԳՊՀ գրադարաններում առկա ուսումնական նյութերի թվայնացման ուղղությամբ:
10. Հետևողական աշխատանքներ ծավալել էլեկտրոնային գրադարանային ֆոնդի համալրման ուղղությամբ, ապահովել ուսանողներին հանձնարարվող ինքնուրույն աշխատանքների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման համար անհրաժեշտ գրականության առկայությունը:
11. Մշակել վերահսկման նոր, գործունե կառուցակարգեր ուսանողների ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների արդյունավետ անցկացման համար:

12. Մշակել, ընդունել և ներդնել համալսարանում կրթության որակի ապահովման ձեռնարկ:
13. Աշխատանքներ ծավալել, որպեսզի ֆակուլտետային, համալսարանական զարգացման հայեցակարգերում առաջնահերթություններն ամրագրելիս՝ հաշվի առնվեն ուսանողական հարցումների արդյունքները, «քարտեզագրել» դրանց բարելավման աշխատանքները:
14. Անցկացնել ուսումնասիրություններ ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում՝ կրթական ռեսուրսներից բավարարվածության գնահատման վերաբերյալ՝ կրթական միջավայրի մշտական թարմացման և ուսումնական ռեսուրսներից օգտվելու հասանելիության աստիճանի բարձրացման նպատակով:
15. Մշտադիտարկել մասնագիտական կրթական ծրագրերում ներառված դասընթացների առարկայական ծրագրերը, ներկայացնել արտաքին փորձաքննության:
16. Ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության խթանման, դրա երկկողմանի ուղղվածության ապահովման նպատակով աշխատանքներ ծավալել անգլերենով դասընթացի մշակման ուղղությամբ:
17. Շարունակել համակարգչային եղանակով քննությունների անցկացման թեստերի բանկի մշակման և քննությունների անցկացման աշխատանքները հեռակա և առկա ուսուցման համակարգերում լայնածավալ կիրարկելու նպատակով:
18. Անփոփել համալսարանի ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման նպատակով իրականացված ինքնավերլուծությունը, ներկայացնել հայտադիմում 2015թ. արտաքին փորձաքննության նպատակով:
19. Շարունակել աշխատանքները բուհ-հասարակություն կապերի ամրապնդման, հասարակությանը մատուցվող լրացուցիչ, շարունակական կրթական և խորհրդրդատվական ծառայությունների, «բուհ-շրջանավարտ-գործատու» կապերի ամրապնդմանն ուղղված միջոցառումների բազմազանեցման ուղղությամբ:
20. Հետևողական աշխատանքներ ծավալել բուհի մասին տեղեկատվության տարածման և հետադարձ կապի կառուցակարգերի բազմազանեցման ուղղությամբ (սոցիալական ցանցեր, առցանց ֆորումներ, քննարկումներ, կլոր- սեղաններ):
22. Ընդլայնել ԳՊՀ անդամակցումը միջազգային ծրագրերին և բուհական կոնսորցիումներին:
21. Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին կազմակերպել և իրականացնել ԳՊՀ ամենամյա (17-րդ) գիտաժողովը:
22. Կրթության միջազգայնացման նպատակներից ելնելով՝ հասարակությանը մասնագիտական կրթական ծրագրերի որակի, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության, համալսարանի միջազգային համագործակցության ծրագրերի վերաբերյալ պատշաճ իրազեկման համար աշխատանքներ ծավալել համալսարանի պաշտոնական կայքի անգլերեն բաժնի տեղեկատվության համալրման ուղղությամբ:

Ն. Ա. Կուտուզյան

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒՆԵՏ

Դեկան՝ *Ասոյան Թաթուլ Արտիկի,*
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Դեկանի տեղակալ՝ *Բաղայան Մարինե Միքայելի*

ՖԱԿՈՒՆԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
031300	Անգլերեն լեզու և գրականություն

Մասնագիտացումներ՝

բակալավր՝ բանասիրության բակալավր

մագիստրոս՝ բանասիրության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 192

Շրջանավարտների թիվը՝ 83

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2013-2014 ուսումնական տարում ԳՊՀ բանասիրական ֆակուլտետը աշխատանքներ է իրականացրել համալսարանական գործունեության բոլոր ուղղություններով:

Վիճակագրության համաձայն՝ տարեցտարի նվազում է բուհ ընդունվողների քանակը: Այսպես, եթե 2012-2013 ուստարում Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 109 ուսանող (բակալավր՝ 76, մագիստրատուրա՝ 33), ապա 2013-2014 ուստարում՝ 58-ը (բակալավր՝ 30, մագիստրատուրա՝ 28): Այլ բուհերից Բանասիրական ֆակուլտետ տեղափոխված ուսանողներ չեն եղել, ինչպես նաև Բանասիրական ֆակուլտետից այլ բուհեր տեղափոխվածներ չկան: Կատարվել են ներբուհական տեղափոխություններ. հեռակա ուսուցման ֆակուլտետից եկել են 3 ուսանողներ, այլ բաժիններ են տեղափոխվել 5-ը, հեռացվել են 8, վերականգնվել՝ 4, տարկետում են ստացել 2 ուսանողներ:

Ուսանողների առաջադիմության ցուցանիշները ներկայացնում ենք ըստ կուրսերի՝ ձմեռային և գարնանային քննաշրջանների համեմատությամբ:

Բակալավրիատ

1-ին կիսամյակ / 2-րդ կիսամյակ

Բաժինը	1-ին կուրս	2-րդ կուրս	4-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս
Հայոց լեզու և գրականություն	66,67	70	70,83	100	73,68
Ռուսաց լեզու և գրականություն	40	80	91,67	100	100
Անգլ. լեզու և գրականություն	68,75	84	53,85	62,50	91,67
Ընդամենը	63	78	67,74	80	85,42
Ընդամենը ըստ բակալավրիատի			70,42		83,33

1-ին կիսամյակի համեմատ 2-րդ կիսամյակի արդյունքները տոկոսային հարաբերությամբ աճել են: Այսպես, Հայոց լեզվի և գրականության, Ռուսաց լեզվի և գրականության բաժինների 1-ին կուրսերի առաջադիմությունը կազմել է 100 %, իսկ Անգլերեն լեզվի և գրականության բաժնի 1-ին կուրսի առաջադիմությունը 2-րդ կիսամյակում իջել է 6,25 %-ով՝ կապված 1 հարգելի բացակայության և 5 անբավարար գնահատականներ ստանալու հետ: Այնուամենայնիվ 1-ին կուրսերի ընդհանուր առաջադիմությունը 1-ին կիսամյակի 63 %-ի դիմաց 2-րդ կիսամյակում կազմել է 80 %՝ արձանագրելով 17 % աճ: 2-րդ կուրսերում ևս նկատելի է առաջադիմության աճ: Այսպես.

Հայոց լեզու և գրականություն՝ 70 % և 73,68 % +3,68 %

Ռուսաց լեզու և գրականություն՝ 80 % և 100 % +20 %

Անգլերեն լեզու և գրականություն՝ 84 % և 91,67 % +7,67 %:

Ընդհանուր առմամբ 1-ին կիսամյակի 78%-ի դիմաց 2-րդ կիսամյակում ունենք 85,42% առաջադիմություն: Աճը կազմում է 7,42%: Նշենք, որ այս կուրսերի ընդհանուր առաջադիմությունը նախորդ ուստարում եղել է 75, 93%, աճը կազմել է 10%:

1-ին կիսամյակի քննաշրջանի ընդհանուր պատկերը՝ ըստ ուսանողների մասնակցության և ստացած գնահատականների հետևյալն է. 1-ին կուրսի բոլոր ուսանողները (30) քննություններին մասնակցելու թույլտվություն են ունեցել, որոնցից 3-ը (ՂԳ՝ 2, ՌԼԳ՝ 1) հարգելի պատճառով չեն ներկայացել քննություններին: Բոլոր քննությունները հանձնել են 19-ը, 1 առարկայից անբավարար են ունեցել 8 ուսանող, գերազանց գնահատականներ են ստացել 9 (ՂԳ՝3, ՌԼԳ՝1, ԱԼ՝5), գերազանց և լավ՝ 5 (ՂԳ՝2, ՌԼԳ՝1, ԱԼ՝2), խառը՝ 4 (ՂԳ՝1, ԱԼ՝3) ուսանող: 2-րդ կուրսերի 50 ուսանողներից քննությունները հանձնելու թույլտվություն են ունեցել 48-ը: Հարգելի պատճառով չեն մասնակցել 7-ը (ՂԳ՝2, ՌԼԳ՝1, ԱԼ՝4): Բոլոր քննությունները հանձնել են 39-ը: 1 առարկայից անբավարար գնահատական են ստացել Հայոց լեզվի և գրականության բաժնի 2 ուսանող, գերազանց՝ 12 (ՂԳ՝ 9, ՌԼԳ՝ 1, ԱԼ՝ 2), գերազանց և լավ՝23 (ՂԳ՝ 5, ՌԼԳ՝ 3, ԱԼ՝ 15), խառը՝ 4 (ԱԼ) ուսանող: 1-ին կիսամյակում 4-րդ կուրսի 62 ուսանողներից քննությունները հանձնելու թույլտվություն են ունեցել 56-ը, հարգելի պատճառով չեն մասնակցել 14-ը (ՂԳ՝ 6, ՌԼԳ՝ 1, ԱԼ՝ 7): Այսպիսով, բոլոր առարկաներից քննություններ հանձնել են 42 ուսանող. գերազանց՝ 18 (ՂԳ՝ 7, ՌԼԳ՝ 5, ԱԼ՝ 6), գերազանց և լավ՝18 (ՂԳ՝ 10, ՌԼԳ՝ 5, ԱԼ՝ 3), խառը՝6 (ԱԼ՝ 5, ՌԼԳ՝ 1): Անբավարար գնահատականներ չեն եղել:

2-րդ կիսամյակում բակալավրիատում ունենք հետևյալ ցուցանիշները. 1-ին կուրսի 30 ուսանողներն էլ ունեցել են քննություններին մասնակցելու թույլտվություն, հարգելի պատճառով չի ներկայացել 1 ուսանող (ԱԼ), բոլոր քննությունները հանձնել են 24 ուսանող, որից գերազանց՝ 13 (ՂԳ՝ 5, ՌԼԳ՝ 3, ԱԼ՝ 5), գերազանց և լավ՝ 8 (ՂԳ՝ 4, ՌԼԳ՝ 2, ԱԼ՝ 2), խառը՝ 3 (ԱԼ): Անբավարար գնահատական ստացել է 5 ուսանող «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնից (4-ը միայն 1, իսկ 1-ը՝ 2 առարկայից): Փաստորեն 2-րդ կիսամյակում ավելացել է գերազանց և լավ գնահատականներ ստացող ուսանողների թիվը, սակայն այս որակական առաջընթացի հետ կան նաև անբավարար ստացողներ: 2-րդ կուրսի բոլոր 48 ուսանողները ևս ստացել են քննություններ հանձնելու թույլտվություն, որոնցից 2-ը չեն ներկայացել, անբավարար են ստացել Հայոց լեզվի և գրականության բաժնի 5 ուսանող, որոնցից 4-ը 1 առարկայից, իսկ 1-ը՝ 2: Բոլոր քննությունները հանձնել են 41 ուսանող, որից գերազանց՝10 (ՂԳ՝ 3, ՌԼԳ՝ 2, ԱԼ՝ 5), գերազանց և լավ՝20 (ՂԳ՝ 9, ՌԼԳ՝ 3, ԱԼ՝ 8), խառը՝ 11 (ՂԳ՝ 2, ՌԼԳ՝ 0, ԱԼ՝ 9): 1-ին կիսամյակի համեմատ 2-ով պակասել է միայն գերազանց, իսկ 3-ով՝ միայն գերազանց և լավ գնահատականներ ունեցողների թիվը, ուստի որոշ չափով ունենք որակի անկում: Այսպիսով, ի մի բերելով ներկայացված տվյալները, կարող ենք ընդհանրացնել կիսամյակային ցուցանիշներն ըստ բակալավրիատի: Չմեռային քննաշրջանի սկզբում ուսանողների թիվը եղել է 142, 134-ը թույլտվություն է ստացել մասնակցելու քննություններին: Հարգելի պատճառով չեն մասնակցել 24-ը: Բոլոր առարկաներից քննությունները հանձնել է 100 ուսանող, որոնցից գերազանց՝ 39 (ՂԳ՝ 19, ՌԼԳ՝ 7, ԱԼ՝ 13), գերազանց և լավ՝ 46 (ՂԳ՝ 17, ՌԼԳ՝ 9, ԱԼ՝ 20), խառը՝ 14 (ՂԳ՝ 1, ՌԼԳ՝ 1, ԱԼ՝ 12): Միայն բավարար ստացել է 1, իսկ անբավարար՝10 ուսանող (ՂԳ՝ 3, ՌԼԳ՝ 2, ԱԼ՝ 5, բոլորն էլ 1 առարկայից): Գարնանային քննաշրջանին ուսանողների թիվը եղել է 78 (քննություններին չեն մասնակցել 4-րդ կուրսեցիները), և բոլորն էլ մասնակցել են քննություններին՝ բացառությամբ 3-ի, որոնք չեն ներկայացել հարգելի պատճառով: Բոլոր առարկաներից քննությունները

հանձնել են 65 ուսանող. միայն գերազանց՝ 23 (ՂԼԳ՝ 8, ՈԼԳ՝ 5, ԱԼ՝ 10), գերազանց և լավ՝ 29 (ՂԼԳ՝ 14, ՈԼԳ՝ 5, ԱԼ՝ 10), խառը՝ 14 (ՂԼԳ՝ 2, ԱԼ՝ 12), անբավարար՝ 10, որոնցից 8-ը 1, 2-ը՝ 2 առարկայից:

Մագիստրատուրա

Աղյուսակում բերված են մագիստրատուրայում սովորող ուսանողների առաջադիմության ցուցանիշները՝ ըստ բաժինների և կուրսերի:

Բաժինը	1-ին կիսամյակ / 2-րդ կիսամյակ			
	1-ին կուրս	2-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս
Հայոց լեզու և գրականություն	71,43	70	66,67	-
Ռուսաց լեզու և գրականություն	66,67	50	83,33	-
Անգլերեն լեզու և գրականություն	77,78	90	77,78	-
Ընդամենը	71,43	77,27	77,78	

1-ին կիսամյակում մագիստրատուրայի 1-ին կուրսի 28 ուսանողներից (ՂԼԳ՝ 7, ՈԼԳ՝ 12, ԱԼ՝ 9) քննությունները հանձնելու թույլտվություն են ունեցել 22-ը, որոնցից 2-ը չեն ներկայացել (ՈԼԳ՝ 2): Բոլոր առարկաներից քննություններ հանձնել են 20-ը, որից գերազանց՝ 15 (ՂԼԳ՝ 5, ՈԼԳ՝ 7, ԱԼ՝ 3), գերազանց և լավ՝ 5 (ՈԼԳ՝ 1, ԱԼ՝ 4), խառը և անբավարար գնահատականներ չեն եղել: Մագիստրատուրայի 2-րդ կուրսում 22 ուսանողներից քննություններն հանձնելու իրավունք են ստացել 21-ը: Հարգելի պատճառով չեն ներկայացել 4-ը: Բոլոր առարկաներից քննություններ հանձնել են 17-ը, որից գերազանց՝ 13 (ՂԼԳ՝ 6, ՈԼԳ՝ 1, ԱԼ՝ 6), գերազանց և լավ՝ 4 (ՂԼԳ՝ 1, ԱԼ՝ 3): Այսպիսով, 1-ին կիսամյակում ընդհանուր առմամբ մագիստրատուրայի 50 ուսանողներից քննությունները հանձնելու թույլտվություն են ունեցել 43-ը, որոնցից 6-ը չեն ներկայացել, բոլոր քննությունները հանձնել են 37-ը. միայն գերազանց՝ 28 (ՂԼԳ՝ 11, ՈԼԳ՝ 8, ԱԼ՝ 9), գերազանց և լավ՝ 9 (ՂԼԳ՝ 1, ՈԼԳ՝ 1, ԱԼ՝ 7): 2-րդ կիսամյակում քննաշրջանին մասնակցել է միայն 1-ին կուրսը: 27 ուսանողներից քննությունները հանձնելու թույլտվություն են ունեցել 24-ը, որոնցից 3-ը չեն ներկայացել, բոլոր քննությունները հանձնել են 21-ը. միայն գերազանց՝ 15 (ՂԼԳ՝ 3, ՈԼԳ՝ 9, ԱԼ՝ 3), գերազանց և լավ՝ 5 (ՂԼԳ՝ 1, ՈԼԳ՝ 1, ԱԼ՝ 3), խառը՝ 1 (ԱԼ):

Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը՝ ըստ կիսամյակների, հետևյալ պատկերն ունի. 1-ին կիսամյակի՝ քննաշրջանի սկզբում ունեցել ենք 192 ուսանողներ, որոնցից 177-ին թույլատրվել է մասնակցել քննություններին, 30-ը չի ներկայացել հարգելի պատճառով: Բոլոր առարկաներից քննություններ հանձնել են 137-ը. գերազանց՝ 67, գերազանց և լավ՝ 55, խառը՝ 14, բավարար՝ 1, 1 առարկայից անբավարար՝ 10: Առաջադիմությունը կազմել է 71,35 %: 2-րդ կիսամյակի՝ քննաշրջանին չեն մասնակցել 4-րդ կուրսի ուսանողները: Քննաշրջանի սկզբում ունեցել ենք 105 ուսանողներ, որոնցից 102-ին թույլատրվել է մասնակցել քննություններին: 6-ը բացակայել են հարգելի պատճառով, բոլոր քննությունները հանձնել է 86 ուսանող, գերազանց են ստացել 38, գերազանց և լավ՝ 33, խառը՝ 15, անբավարար՝ 10 ուսանող: 1 առարկայից անբավարար են ստացել 8, 2 առարկայից՝ 2 ուսանող: Առաջադիմությունը կազմել է 81,9%: Անցած ուսումնական տարում առաջադիմությունը կազմել էր 78,68%: Նկատվում է 3% աճ:

Ամփոփիչ ատեստավորման քննություններ

Ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպվել են սահմանված կարգով: Ստեղծվել են համապատասխան աշխատանքային պայմաններ՝ ավարտական

քննությունները պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Բակալավրիատում ավարտական կուրսերի ուսանողների թիվը ուստարվա սկզբում եղել է 62 (ՅԼԳ՝ 24, ՌԼԳ՝ 26, ԱԼ՝ 12), քննությունների սկզբում՝ 61, որոնց թույլատրվել է մասնակցել քննություններին և ավարտական աշխատանքների պաշտպանությանը: Քննություններին մասնակցել են 60-ը: Անգլերեն լեզվի և գրականության բաժնի նախորդ տարվա շրջանավարտներից 1-ին ևս թույլատրվել է մասնակցել: Գերազանց գնահատականներ են ստացել 21 (ՅԼԳ՝ 11, ՌԼԳ՝ 4, ԱԼ՝ 5), գերազանց և լավ՝ 18 (ՅԼԳ՝ 8, ՌԼԳ՝ 4, ԱԼ՝ 6), խառը՝ 11 (ՅԼԳ՝ 4, ՌԼԳ՝ 2, ԱԼ՝ 5), բավարար՝ 10 (ՅԼԳ՝ 1, ԱԼ՝ 9): Ավարտական աշխատանք պաշտպանել են 35 ուսանողներ. գերազանց՝ 18, լավ՝ 12, բավարար՝ 5: Այսպիսով, համալսարանն ավարտել են բակալավրիատի 61 ուսանող, ընդ որում՝ գերազանցությամբ ավարտել են 17 ուսանողներ:

Մագիստրատուրայում սովորող 23 ուսանողներից թեզերի պաշտպանության թույլտվություն են ստացել 22-ը. գերազանց՝ 15, լավ՝ 6, բավարար՝ 1: Այսպիսով, բուհն ավարտել են մագիստրատուրայի 22 ուսանողներ, որոնցից 13-ը՝ գերազանցությամբ:

Ամփոփիչ ատեստավորման, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի, հարցաշարերի, աշխատանքային միջավայրի, ուսանողների ցուցաբերած գիտելիքների վերաբերյալ իրենց կարծիքներն են արտահայտել առարկայական հանձնաժողովների նախագահները: Բարձր գնահատելով կատարված աշխատանքները՝ նրանք արել են նաև որոշ դիտողություններ, որոնք անտեսել չի կարելի, և պետք է նկատի ունենանք հետագայում նման թերությունները բացառելու համար:

1. Ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը պաշտպանության են ներկայացվում տեխնիկական թերություններով:

2. Աշխատանքների պաշտպանության ժամանակ քննարկումը ամբողջական ձևով իրականացնելու համար պետք է ապահովել թե՛ աշխատանքի ղեկավարի, թե՛ ընդդիմախոսի ներկայությունը:

3. Անգլերենի քննության ժամանակ ուսանողները թույլ են տալիս շատ քերականական սխալներ, ուստի անհրաժեշտ է ճշգրտել դասընթացի նկատմամբ եղած մոտեցումները:

4. Գրախոսությունները երբեմն մակերեսային են և խորությամբ չեն վերլուծում աշխատանքները: Ռուսաց լեզվի և գրականության ավարտական աշխատանքներում նկատվում են նաև համացանցից վերցրած տեքստեր:

5. Լեզուների հարցաշարերը պետք է կազմված լինեն համակողմանի՝ ընդգրկելով լեզվական ամբողջ նյութը:

Ուսումնական տարվա մեկնարկին պատրաստվելիս քննարկվել, վերանայվել և թարմացվել են ուսումնական պլաններն ու ծրագրերը և ըստ անհրաժեշտության կատարվել են փոփոխություններ: Այսպես, Ռուսաց լեզվի և գրականության բաժնի 2-րդ կուրսում մտցվել են կուրսային աշխատանքներ, իսկ մագիստրատուրայի 2-րդ կուրսում ավելացվել է «Երկլեզվության հիմնախնդիրները» դասընթացը: Անգլերեն լեզվի և գրականության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսում ավելացվել են «Մասնագիտական օտար լեզվի զարգացում» և «Գրավոր խոսքի հմտությունների զարգացում» դասընթացները: Մշակվել են համապատասխան կրթական ծրագրեր:

ԳՊԴ բանասիրական ֆակուլտետում կրթական ծրագրերն իրականացվում են բարձրակարգ պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից, որը համալրվում է նոր դասախոսներով: Բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան

է շնորհվել Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Գ. Միրիբյանին, դոցենտի գիտական կոչում է ստացել Թ. Ալեքսանյանը: Կան ասպիրանտներ և հայցորդներ: Մեր դասախոսները մասնակցել են վերապատրաստումների և գիտաժողովների: Աշխատանքներ են տարվել ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ Ուսխորհրդի, Ուսանողական գիտական ընկերության հետ: Առավել հատկանշական է Ուսանողական հանրապետական գիտաժողովը, որին ակտիվորեն մասնակցեցին նաև Բանասիրական ֆակուլտետի ուսանողները: Ուստարվա ընթացքում՝ հատկապես 2-րդ կիսամյակում, անցկացվել են բազմաբնույթ միջոցառումներ: Նշենք դրանցից մի քանիսը. շնորհանդես՝ նվիրված ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյանի «Յր. Մաթևոսյան. ստեղծագործությունը» մենագրությանը, որի համար հեղինակն արժանացել է «Յրանտ Մաթևոսյան» հիմնադրամի մրցանակին, միջոցառումներ՝ նվիրված Խոջալուի ազատագրմանը, Կանանց միջազգային օրվան, Յ. Սահյանին, Յովի. Շիրազին: Ֆրանկոֆոնիայի շրջանակներում կազմակերպվեցին 2 միջոցառումներ, որոնցից մեկը՝ հունամիտար մասնագիտությունների ֆակուլտետի հետ համատեղ:

2013-2014 ուսումնական տարվա հայեցակարգով նախատեսված ծրագրերից շատերն իրականացվել են, սակայն կան նաև թերացումներ, որոնք վերաբերում են կուրսային, ավարտական աշխատանքներին և թեզերին, կրթական ծրագրերի նյութերի ներբեռնմանը «E-Learning.gsu» համակարգ: Նոր հայեցակարգում կներառվեն նաև այս աշխատանքները:

2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգային դրույթներն են.

1.Վերանայել և բարեփոխել կրթական ծրագրերը բովանդակային և ժամաքանակային առումներով՝ դրանք համապատասխանեցնելով 16-շաբաթյա կիսամյակային ուսուցման հետ, հաշվի առնելով բանասիրական գիտությունների անընդհատական առաջընթացը և Գավառի պետական համալսարանի առաքելությունը բարձրագույն կրթության իրականացման գործընթացում:

2.Ամբիոնային և միջամբիոնային աշխատանքների բարելավում, կազմակերպչական հնարավորությունների լիարժեք իրացում՝ միտված ուսուցման որակի բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը: Ամբիոնների նիստերի անցկացում, ուսումնական, գիտական, դաստիարակչական աշխատանքների կազմակերպման և իրականացման տարեկան ծրագրերի կազմում ու կատարում:

3.Գիտական ուսումնասիրությունների, ուսումնամեթոդական ձեռնարկների և ուղեցույցների պատրաստում, քննարկում ու հրատարակում: Գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար սեմինարների, խորհրդատվությունների անցկացում:

4.Ուսանող-դասախոս-ամբիոն փոխադարձ կապերի ապահովում, գիտական հետաքրքրություններ ունեցող ուսանողների հետ տարվող աշխատանքների ակտիվացում, նրանց ներգրավում հետազոտական գործունեության ոլորտ, դրա համար համապատասխան միջավայրի և պայմանների ապահովում:

5.Ուսանողների ստեղծագործական ունակությունների բացահայտման և զարգացման նպատակով տարբեր ժանրերի աշխատանքների հանձնարարում և քննարկում: Խորհրդատվությունների անցկացում գրական երկերի գրական-գեղարվեստական, լեզվաոճական հնարավորությունների բացահայտման և յուրացման նպատակով:

6.Յաշվի առնելով արված դիտողություններն ու առաջարկությունները՝ վերանայել ամփոփիչ ատեստավորման քննական հարցաշարերը, դրանք համապատասխանեցնել քննական նյութի պահանջներին:

7.Ուշադրության կենտրոնում պահել կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը՝ պահպանելով հաստատված ժամանակացույցը, տեխնիկական պահանջները, ապահովելով գիտական ղեկավարի, ընդդիմախոսի գրավոր կարծիքների առկայությունը և նրանց ներկայությունը աշխատանքների պաշտպանության ժամանակ:

8.Աշխատանքներ տանել ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ՝ մշակված ծրագրին համապատասխան:

9.Պարբերաբար ստուգել ծրագրային նյութերի յուրացման մակարդակն ու ընթացքը ուսանողների կողմից, հետևել, որ հանձնարարված գրականությունը ժամանակին յուրացվի: Համագործակցել ԳՊՀ գրադարանի հետ՝ մասնագիտական գրականության՝ ուսանողներին տրամադրելու գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար: Ուսանողներին ուղղորդել՝ օգտվելու ԳՊՀ էլեկտրոնային նորաստեղծ գրադարանից:

10. Խրախուսել և ծավալել ուսանողների ընթերցասիրությունը նաև ծրագրային նյութերից դուրս, նրանց հաղորդակից դարձնել ինչպես գիտական, այնպես էլ գեղարվեստական մերօրյա նորություններին, կազմակերպել քննարկումներ և բանավեճեր՝ օգտագործելով Բանավեճի ակումբի հնարավորությունները:

11.Կազմակերպել և անցկացնել գիտաժողով, միջոցառումներ՝ նվիրված Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին և Ընտանիքի տարվան:

12.Համագործակցել ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ֆակուլտետի ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության հետ՝ ուսանողների կրթական կարիքների վերհանման, նրանց հետաքրքրող խնդիրներին լուծում տալու նպատակով:

13.Ուշադրության կենտրոնում պահել բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերին վերաբերող նյութերի ներբեռնման գործընթացը «E-Learning.gsu» համակարգ:

14.Հետևողական աշխատանքներ տանել մարզի կրթական հաստատությունների՝ քոլեջների և դպրոցների հետ համագործակցային կապերն ամրապնդելու ուղղությամբ, կազմակերպել փոխայցելություններ:

15.Ֆակուլտետի խորհրդում պարբերաբար քննարկել ուսումնական գործընթացին վերաբերող հրատապ հարցերը, ԳՊՀ կանոնակարգերն ու ընթացակարգերը, ապահովել վերջիններիս կիրառումը աշխատանքային գործընթացում, ըստ անհրաժեշտության անել առաջարկություններ և ներկայացնել:

16.Համագործակցել ԳՊՀ մյուս ֆակուլտետների հետ:

17. Ուսումնական աշխատանքների արդյունավետության և ուսուցման որակի բարձրացման նպատակով անցկացնել ուսանողական հարցումներ, ստացված պատասխանները մշակել, արդյունքները քննարկել և անել համապատասխան հետևություններ՝ ըստ այդմ ձեռնակելով համարժեք միջոցառումներ:

Թ. Ա. Ասոյան

Բանասիրական ֆակուլտետի դեկան,

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՉՍԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	9	1	3	66.67
2-րդ	20	2	9	70.00
4-րդ	24	-	7	70.83
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	5	2	1	40.00
2-րդ	5	-	1	80.00
4-րդ	12	-	5	91.67
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	16	5	5	68.75
2-րդ	25	-	2	84.00
4-րդ	26	-	6	53.85
ԸՆԴԱՄԵՆՆՂ	142	10	39	70.42
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	7	-	5	71.43
2-րդ	10	-	6	70.00
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	12	-	7	66.67
2-րդ	2	-	1	50.00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	9	-	3	77.78
2-րդ	10	-	6	90.00
ԸՆԴԱՄԵՆՆՂ	50	-	28	74.00

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 1-ին 3-րդ	9 19	- 5	5 3	100 73.68
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին 3-րդ	5 5	- -	3 2	100 100
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին 3-րդ	16 24	5 -	5 5	62.50 91.67
ԸՆԴՀԱՆՈՒՐ	78	10	23	83.33
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	6	-	3	66.67
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	12	-	9	83.33
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	9	-	3	77.78
ԸՆԴՀԱՆՈՒՐ	27	-	15	77.78

**2013/2014 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ**

Դասագիրք	Սենագրու- թյուն	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ձեռնարկ	ՈՒՍՈՒՄՆԱՆԵ- թողական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	1	2	1	33	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 3

ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Վաչագան Գուրգենի բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ասոյան Թաթուլ Արտիկի - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
2. Կատվայան Վիկտոր Լիպարիտի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. Խանդանյան Սիրանուշ Կառլենի - ասիստենտ
4. Վարդանյան Գայանե Լևիկի - ասիստենտ
5. Սարգսյան Ռուզաննա Մարատի - ասիստենտ
6. Իսկանդարյան Լիլիթ Հրաչիկի - դասախոս
7. Ղազարյան Օլգա Ալբերտի - դասախոս
8. Կարապետյան Վիկտորյա Դավթի - դասախոս
9. Ղազարյան Նորիկ Կարապետի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
10. Ղարիբյան Ալինա Ամբիկի - ասիստենտ
11. Բագոյան Ալլա Սահակի-դասախոս

ՀԱՍԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Համբարձումյան Վազգեն Գուրգենի- բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Ալեքսանյան Թամարա Կարապետի - մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ասատրյան Ծովինար Ժորայի - բանասիրական գիտ. թեկնածու
4. Իսկանդարյան Նաիրա Մանվելի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ներսիսյան Վարսիկ Արմենի - բանասիրական գիտ. թեկնածու
6. Առաքելյան Արա Հրաչիկի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
7. Ղռեջյան Լուսինե Խաչատուրի - բանասիրական գիտ. թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց լեզվի պատմության, հայերենի ձևավորման ու զարգացման հարցերի ուսումնասիրություն:
2. Հայերենի բարբառների ուսումնասիրություն, գրական լեզու-բարբառ հարաբերության ճիշտ ընկալում և գնահատում:
3. Գրավոր և բանավոր լեզվական հաղորդակցման մշակույթի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգում և ուսուցում:
4. Արևմտահայերենի պատմության, զարգացման և կիրառության հարցերի ուսումնասիրություն:
5. Մխիթարյանների հայերենագիտական գործունեության, արևմտահայերենի ձևավորման և զարգացման գործընթացում նրանց խաղացած դերի ներկայացում:
6. Ժողովրդական բանահյուսության նյութերի ձեռքբերման, մշակման և ներկայացման գործընթացի կազմակերպում:
7. Հր. Մաթևոսյանի ստեղծագործության լեզվի ուսումնասիրության խնդիրներ:
8. Արդի հայ պոեզիայի և արձակի վերաբերյալ ուսումնասիրություններ:
9. Անկախության շրջանի հայ արձակի ուսումնասիրություն (Լ. Խեչոյան):
10. 20-րդ դարի հայ թատերագրության ուսումնասիրության խնդիրներ:
11. Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության ուսումնասիրության խնդիրներ:
12. Հակոբ Օշականի գեղարվեստական ստեղծագործության և քննադատական գործունեության ուսումնասիրության խնդիրներ:
13. Առասպելաբանության, «Սասնա ծռեր» էպոսի վերաբերյալ ուսումնասիրություններ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	1	-	1	18	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ներսիսյան Վ. Ա.**, Դարձվածքի ըմբռնումը և նրա ուսուցումն իբրև կրտսեր դպրոցականի աշխարհայացքի ընդլայնման և բառապաշարի հարստացման կարևոր գործոն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հ.16, Երևան, 2014:
2. **Ներսիսյան Վ. Ա.**, Հայկական ժողովրդական հանելուկների լեզվաոճական քննություն // Պատմաբանասիրական հանդես, 1, էջ 108-114, Երևան, 2014:
3. **Իսկանդարյան Ն. Մ.**, «Վիպական Ծովինարի և համաշխարհային առասպելաբանության մեջ նրա զուգորդների ընդհանրության շուրջ» // Հայ-ռուսական համալսարանի տարեկան հաշվետու գիտաժողով, 2013թ., նոյեմբեր-դեկտեմբեր:
4. **Իսկանդարյան Ն. Մ.**, Էլիֆ Շաֆաքի աղմկահարույց «Ստամբուլի բիճը» վեպը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հ.16, Երևան, 2014:
5. **Ասատրյան Ծ. Ժ.**, Որակի ապահովման ձեռնարկ, համահեղինակ, Երևան, 2014, 420 էջ:

6. Ասատրյան Ծ. Ժ., Հովհաննես Թումանյանի «Հազարան բլբուլ» և Մորիս Մետերլինկի «Կապույտ թռչուն» ստեղծագործությունների համեմատական վերլուծություն // Հյուսիսային համալսարանի գիտաժողովի նյութեր, հանձնված է տպագրության:
7. Ասատրյան Ծ. Ժ., Արտակ Համբարձումյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «...Ո՛ր արտասվել մազերիդ մեջ...» // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հ.16, Երևան, 2014:
8. Խանդանյան Ս. Կ., Թվական որոշչի արտահայտությունը գոյականական բառակապակցություններում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հ.16, Երևան, 2014:
9. Գրիգորյան Վ. Ռ., Սեյլան // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հ. 16, Երևան, 2014:
10. Ղազարյան Ն. Կ., Հետազոտության արդիականությունը // «Նորք», N 1, 2014, էջ 137-142:
11. Ղազարյան Ն. Կ., Раны Армении-переворотное событие в армянской литературе // Խաչատուր Աբովյան. քաղաքակրթության խաչմերուկներում, միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2013, էջ 23-28:
12. Առաքելյան Ա. Հ., Ֆր. Նիցշեն և նիցշեականությունը Թ. Մանի «Դոկտոր Ֆաուստուս» վեպում, «Համատեքստ-2013», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 4-14:
13. Առաքելյան Ա. Հ., Թոմաս Մանի փիլիսոփայական վեպերը, «Բանբեր Երևանի համալսարանի 2013», 141, 2, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ15-22:
14. Առաքելյան Ա. Հ. 20-րդ դարի առաջին կեսի գերմանական փիլիսոփայական վեպը. Թոմաս Ման // Մենագրություն, Երևան, «Անտարես» հրատ., 2013, 456 էջ:
15. Առաքելյան Ա. Հ., Музыка и немецкий роман первой половины XX века /Т. Манн, Г. Гессе, Ф. Верфель/, Университет российской академии образования, N 1, Москва, 2014, ст.72-77.
16. Ղարիբյան Ա. Ա., Ծովինարի կերպարի համեմատական քննությունն ըստ «Սասնա ծռեր» էպոսի պատումների // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հ. 16, Երևան, 2014:
17. Ղարիբյան Ա. Ա., Խանդութի կերպարի համեմատական քննությունն ըստ «Սասնա ծռերի» պատումների //Հայ բարբառագիտության100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2014:
18. Ղռեջյան Լ. Խ., Հայկական ժողովրդական երգումները և կիրառությունները ժողովրդական բանավոր ավանդության մեջ (ժանրային-տիպաբանական հատկանիշները) // Պատմաբանասիրական հանդես (հանձնված է տպագրության):
19. Բագդյան Ա. Ս., Րաֆֆու «Կայծերը» և Շիլլերի «Ավազակները». գաղափարական առնչություններ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հ. 16, Երևան, 2014:
20. Մկրտչյան Հ. Է., Գրիգոր Նարեկացու «Տաղ Վարդավառի» աղերսները Մովսես Խորենացու «Վարդավառի խորհրդի մասին» ներբողի հետ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հ.16, Երևան, 2014:

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գայանե Ֆրեդիկի Բդեյան, ԳՊՀ պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ասրյան Մադլենա Սերգեյի - ասիստենտ
2. Մուրադյան Սիրանուշ Յովհաննեսի - ասիստենտ
3. Բալազոզյան Անիկ Կարապետի - ասիստենտ
4. Բալազոզյան Կարինե Արամայիսի - ասիստենտ
5. Բադալյան Մարինե Միքայելի - ասիստենտ
6. Ամիրխանյան Սալվինա Սամվելի – դասախոս
7. Խաչատրյան Սիրանուշ Արտիկի - դասախոս
8. Թոռչյան Լիլիթ Գրիգորի - դասախոս
9. Ավագյան Սաթիկ Մարտինի - դասախոս
10. Մովսեսյան Աննա Աշոտի - դասախոս
11. Ռափյան Նանա Լևիկի – դասախոս
12. Մարուխյան Կարինե Յովհաննեսի – լաբորանտ

ՀԱՍԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Մարգարյան Արամ Յայկի - ԳՊՀ պրոֆեսոր
2. Յովսեփյան Անահիտ Իլիչի – մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ
3. Գյուրջյանց Սեդա Միքայելի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
4. Գրիգորյան Սիրվարդ Գրիգորի - դասախոս
5. Եղիազարյան Անդրանիկ Ռաֆիկի - ասիստենտ
6. Տիգրանյան Սաթենիկ Սաշայի - ասիստենտ
7. Յայթյան Սաթենիկ Յայրապետի - ասիստենտ
8. Մարտիրոսյան Արմինե Ժորայի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
9. Աբգարյան Ռուզաննա Ֆրեդիկի - դասախոս
10. Պատվականյան Մարինե Արմանի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դարձվածքների համեմատական ուսումնասիրություն հայերենում, ռուսերենում և անգլերենում և դրանց զուգադրական վերլուծությունը:
7. **Վարդանյան Մարգարետունի Գոռի** - ասիստենտ,
8. **Հովհաննիսյան Օլգա Արտյոմի** - ԳՊՀ դոցենտ,
9. **Շանոյան Վարդան Սերգոյի** - դասախոս,
10. **Մուրադյան Պապին Օնիկի** - ասիստենտ,
11. **Գրիգորյան Տարոն Վրեժի** - ասիստենտ,
12. **Հովսեփյան Արմինե Արկադայի** - դասախոս,
13. **Բախտիկյան Լուսինե Վանիկի** - ասիստենտ:

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Քաղաքացիական հասարակության ձևավորման, ժողովրդավարության, իրավական, սոցիալական պետության կայացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ սահմանադրական, քաղաքացիական և քրեական օրենսդրության բարեփոխման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-		-	12	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հակոբյան Հ. Հ.**, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների լիազորությունների դադարման սահմանադրական հիմքերը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Իրավունք հրատ., N 15, 2013, էջ 657-665:
2. **Հակոբյան Հ. Հ.**, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ պաշտոններում նշանակումներ կատարելու լիազորությունը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N16, 2014:
3. **Հակոբյան Ռ. Խ.**, Իրավունքի փիլիսոփայությունը որպես համալիր գիտություն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Իրավունք հրատ., N 15, 2013, էջ 665-673:
4. **Հակոբյան Ռ. Խ.**, Իրավունքի փիլիսոփայությունը անտիկ աշխարհում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N16, 2014:
5. **Հակոբյան Ռ. Խ.**, Սոցիալական պատասխանատվության ինստիտուտը և դրա նշանակությունը // Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, 2-րդ Պրակ, Երևան, 2014, էջ 266-270:
6. **Խաչատրյան Ս. Ա.**, Վիժելու և նորածնի սպանության հիմնահարցն ըստ «Հաճախապատում ճառքի» // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Իրավունք հրատ., N 15, 2013, էջ 673-689:
7. **Խաչատրյան Ս. Ա.**, Քարշ տալը որպես հանցագործությունների, խախտումների բացահայտման, կանխման ու նախականիման միջոց և պատժատեսակ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Իրավունք հրատ., N 15, 2013, էջ 689-706:
8. **Խաչատրյան Ս. Ա.**, Անհատությամբ լացուկոծ անելն ու ցտելը որպես հին հայկական իրավական նորմ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Իրավունք հրատ., N 15, 2013, էջ 706-722:
9. **Խաչատրյան Ս. Ա.**, Ազատ ընտրության հարցը «Հաճախապատում ճառքում» (վերլուծություն իրավունքի դիրքերից) // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Իրավունք հրատ., N 15, 2013, էջ 722-737:
10. **Խաչատրյան Ս. Ա.**, Կաշին քերելը և քերթելն ըստ գրադաշտական և քրիստոնեական իրավունքի // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N16, 2014:

11. **Խաչատրյան Ս. Ա.**, Արվամոլությունն ըստ հին հայկական գրադաշտական և քրիստոնեական իրավունքի // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 16, 2014:
12. **Հարությունյան Ս. Հ.**, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանում քրեական գործերի վերաքննության սահմանները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Իրավունք հրատ., N 15, 2013, էջ 757-764:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Անիրխանյան Սամվել Գրիգորի,*
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

Դեկանի տեղակալ՝ *Հերզոյան Մարիամ Նորիկի,*
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
080300	Ֆինանսներ
081500	Հաշվապահական հաշվառում
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում

Մասնագիտացումներ՝

բակալավր՝
ֆինանսների բակալավր
ֆինանսների բակալավր
տնտեսագիտության բակալավր

մագիստրոս՝
ֆինանսների մագիստրոս
ֆինանսների մագիստրոս
տնտեսագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 198

Շրջանավարտների թիվը՝ 83

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Արդի ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության բուհերի առջև ծառայել են նոր մարտահրավերներ, որոնց դիմագրավումը պահանջում է կրթության որակի բարձրացում՝ եղած բոլոր հնարավորությունների գործադրման հաշվին: Առաջընթացի ապահովումը կրթության համակարգի հրամայականն է:

ԳԴԴ-ն ավելի քան 20-ամյա կենսագրություն է հյուսել, ուստի անհրաժեշտ է վերլուծել կատարվածը, ուսումնասիրել ուժեղ և թույլ կողմերը, դրա հետ մեկտեղ՝ տիրապետել կրթական նոր տեխնոլոգիաներին, բոլոր ուղղություններով ապահովել դինամիկ աճ: ԳԴԴ տնտեսագիտական ֆակուլտետն անցնելու է ուրույն փորձաշրջան՝ 2014-2015 ուսումնական տարվանից կազմակերպելով արտասահմանցի ուսանողների կրթությունը:

Տնտեսագիտական ֆակուլտետում հետևողականորեն ուսումնասիրվում և գործի են դրվում մասնագիտական կրթության պարտադիր չափորոշիչները, միջազգային ստանդարտները, հաշվի են առնվում աշխատաշուկայի պահանջները՝ շրջանավարտների մասնագիտական լիարժեք կայացման նպատակով:

Ֆակուլտետի համար ուղենիշ է ծառայում գիտելիքների անփոխարինելի իմացաբանական արժեքը: Մեր նպատակն է՝ ուսուցումը սերտորեն զուգակցել պրակտիկային և գիտության նոր նվաճումներին, հարստացնել կրթության բովանդակությունը, ապահովել բարձր որակ:

Ուսումնական գործընթացի համակողմանի վերահսկողությունը դարձել է կրթության որակի ապահովման կարևոր գործոնը:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում սովորել են 197 ուսանողներ: Առաջին կուրս են ընդունվել 28 դիմորդներ: Բակալավրիատում ուսանողների թիվը 139 է, մագիստրատուրայում՝ 58:

Տնտեսագիտական ֆակուլտետում սովորող ուսանողների թիվը

<i>ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ</i>	I	II	III	IV	<i>ԸՆդամենը</i>
Ֆինանսներ	15	31	5	26	77
Հաշվապահական հաշվառում	3	12	0	23	38
Ձեռն. տնտ. և կառավարում	10	4	0	10	24
ԸՆդամենը	28	47	5	59	139
<i>ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ</i>					
Ֆինանսներ	22	10	X	X	32
Հաշվապահական հաշվառում	10	10	X	X	20
Ձեռն. տնտ. և կառավարում	4	2	X	X	6
ԸՆդամենը	36	22	X	X	58
ԸՆդամենը ֆակուլտետում	197				

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների առաջադիմությունը

2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջադիմությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 11,1 %-ով (70,6-ից հասել է 81,7%), իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ աճը կազմել է 17,2 %:

Բակալավրիատում այն աճել է 5,5%-ով և հասել 79,5%-ի, իսկ մագիստրատուրայում աճել է 32%-ով և հասել 87,0%-ի, առաջին կիսամյակի համեմատությամբ ֆակուլտետում աճը կազմել է 17,2%:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

	2012-2013 ուս. տարվա II կիսամյակ	2013-2014 ուս. տարվա I կիսամյակ	2013-2014 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2012-2013 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2013-2014 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆակուլտետ	70,6	64,5	81,7	+11,1	+17,2
Բակալավրիատ	74,0	62,8	79,5	+5,5	+16,7
Մագիստրատուրա	55,0	69,2	87,0	+32	+17,8

Առաջադիմության ցուցանիշների աճը վկայում է ուսման գործընթացի անխափան կազմակերպման, դասավանդման մեթոդների նորացման և նորագույն տեխնոլոգիաների կիրառման մասին: Միաժամանակ, հարկ է նշել, որ արդյունքներն ավելին կլինեին, եթե արդյունավետ ջանքեր գործադրվեին ուսանողի գիտական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Ուսանողը պետք է հասկանա, որ միայն լուրջ իմացական կարողություններով կարելի է բավարարել մասնագիտական կայացման և առաջխաղացման շուկայական պահանջներին:

Ուսման առաջադիմությունը, ըստ մասնագիտությունների, հետևյալն է.

«Ֆինանսներ» մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում երկրորդ կիսամյակի առաջադիմությունը կազմել է 100%, որը առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 13,3%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 14,3%:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

Ֆինանսներ մասնագիտությունում

Կուրսը	2012-2013 ուս. տարվա II կիսամյակ	2013-2014 ուս. տարվա I կիսամյակ	2013-2014 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2012-2013 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2013-2014 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	85,7	86,7	100	+14,3	+13,3
Երկրորդ	50,0	44,4	72,7	+22,7	+28,3
Երրորդ	73,1	40,0	75,0	+1,9	+35

Չորրորդ	-	73,1	-	-	-
---------	---	------	---	---	---

Երկրորդ կուրսի առաջադիմությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 22,7%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ՝ 28,3%-ով և կազմել 72,7%: Նախորդ կիսամյակում կուրսի ցածր առաջադիմությունը պայմանավորված էր բանակից վերադարձած և այդ կուրս տեղափոխված ուսանողների կողմից քննությունները լուծարային շրջանում հանձնելու հանգամանքով:

Երրորդ կուրսում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ առաջադիմությունը աճել է 1,9%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ՝ 35%-ով և կազմել 75%:

Չորրորդ կուրսի առաջադիմությունը առաջին կիսամյակում կազմել է 73,1 %, որը նախորդ տարվա համեմատությամբ ցածր է 7,5%-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

Հաշվապահական հաշվառում մասնագիտությունում

Կուրսը	2012-2013 ուս. տարվա II կիսամյակ	2013-2014 ուս. տարվա I կիսամյակ	2013-2014 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2012-2013 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2013-2014 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	73,3	66,7	66,7	-6,6	0
Երկրորդ	-	69,2	81,8	-	+12,6
Երրորդ	63,6	-	-	-	-
Չորրորդ	-	60,9	-	-	-

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ առաջադիմությունը նվազել է 6,6%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ նույնն է՝ 66,7%:

Երկրորդ կուրսում առաջին կիսամյակի համեմատությամբ առաջադիմությունը աճել է 12,6%-ով և կազմել 81,8%: Իրոք, կա դրական տեղաշարժ:

Չորրորդ կուրսի առաջադիմությունը առաջին կիսամյակում կազմել է 60,9 %, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 10,5%-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությունում

Կուրսը	2012-2013 ուս. տարվա II կիսամյակ	2013-2014 ուս. տարվա I կիսամյակ	2013-2014 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2012-2013 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2013-2014 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	66,7	75,0	-25	+8,3
Երկրորդ	-	50,0	80,0	-	+30
Երրորդ	70,0	-	-	-	-
Չորրորդ	-	72,7	-	-	-

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ առաջադիմությունը նվազել է 25%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 8,3%-ով և կազմել 75%:

Երկրորդ կուրսում առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 30%-ով և կազմել 80%:

Չորրորդ կուրսի առաջադիմությունը առաջին կիսամյակում կազմել է 72,7 %՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 27,7%-ով:

Մագիստրատուրայի «Ֆինանսներ» մասնագիտության առաջին կուրսում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ առաջադիմությունը աճել է 51%-ով և կազմել է 84%: Իսկ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության առաջին կուրսում բարձրացել է 15%-ով և կազմել 88%: «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությունում այն աճել է 50%-ով և կազմել 100%:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

Մագիստրատուրա

Կուրսը	2012-2013 ուս. տարվա II կիսամյակ	2013-2014 ուս. տարվա I կիսամյակ	2013-2014 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2012-2013 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2013-2014 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆինանսներ I կուրս	33	68,4	84	+51	+15,6
Ֆինանսներ II կուրս	-	88,9	-	-	-
Հաշվապահական հաշվառում I կուրս	73	50	88	+15	+38
Հաշվապահական հաշվառում II կուրս	-	60	-	-	-
Ձեռնարկությունների տնտես և կառավարում I կուրս	50	75	100	+50	+25
Ձեռնարկությունների տնտես և կառավարում II կուրս	-	100	-	-	-

Կարևոր է նաև նույն կուրսի առաջադիմության շարժընթացը (դինամիկան)՝ սկսած առաջին կուրսից մինչև ավարտական կուրս: «Ֆինանսներ» մասնագիտության 4-րդ կուրսում 2013-2014 ուս. տարվա առաջին կիսամյակում առաջադիմությունը կազմել է 73,1%, նույն կուրսի առաջին տարվա առաջին կիսամյակի 46,4%-ի դիմաց, աճը կազմել է 26,7%: Այսինքն, կիսամյակների ընթացքում տեղի է ունեցել դինամիկ աճ:

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 4-րդ կուրսում բոլոր կիսամյակներում արձանագրվել է կայուն առաջադիմություն և այն տատանվել է 60,9%-ից 77,8% սահմաններում: Առաջին կուրսում սովորողների թիվը եղել է 9, երրորդ կուրսում թիվն ավելացել է 13-ով, հասել 23-ի՝ ի հաշիվ քոլեջներից և ԳՊՀ հեռակա ֆակուլտետից տեղափոխվածների:

Չորրորդ կուրսերի առաջադիմությունն ըստ կիսամյակների

Կիսամյակներ	Ուսանողների թիվը	Ֆինանսներ IV կուրս %	Ուսանողների թիվը	Հաշվապահական հաշվառում IV կուրս %	Ուսանողների թիվը	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում IV կուրս %
1-ին	28	46,4	9	77,8	8	87,5
2-րդ	26	50,0	9	66,7	7	100
3-րդ	29	79,3	19	78,9	10	90,0
4-րդ	30	63,3	20	75,0	9	100
5-րդ	26	69,2	22	72,7	9	100
6-րդ	26	73,1	22	63,6	10	70
7-րդ	27	73,1	23	60,9	12	72,7

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության 4-րդ կուրսում երեք կիսամյակներում ապահովվել է 100% առաջադիմություն, իսկ 2013-2014 ուստարվա առաջին կիսամյակի առաջադիմությունը կազմել է 72,7%, ինչը հետևանք է նախորդ տարիներից վերականգնված ուսանողների ցածր առաջադիմության: 2013 թ. արդյունքներով կուրսն արժանացավ «Լավագույն կուրս» կոչմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում երկրորդ կուրսի երեք մասնագիտությունների գծով առաջադիմությունը ունի հետևյալ պատկերը.

Երկրորդ կուրսերի առաջադիմությունն ըստ կիսամյակների

Կիսամյակներ	Ուսանողների թիվը	Ֆինանսներ II կուրս %	Ուսանողների թիվը	Հաշվապահական հաշվառում II կուրս %	Ուսանողների թիվը	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում II կուրս %
1-ին	21	57,1	15	53,3	6	66,7
2-րդ	21	85,7	15	73,3	6	100
3-րդ	36	44,4	13	69,2	4	50
4-րդ	33	72,7	11	81,8	5	80

«Ֆինանսներ» մասնագիտության 2-րդ կուրսերի առաջադիմությունը, ըստ կիսամյակների, տատանվել է 44,4%-ից 85,7%-ի սահմաններում: Այսպես, երկրորդ կիսամյակում՝ առաջին կիսամյակի համեմատությամբ աճեց 28,6%-ով և կազմեց 85,7%: Այնուհետև այն նվազեց՝ հասնելով 44,4%-ի, իսկ չորրորդ կիսամյակում աճեց՝ կազմելով 72,7%:

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 2-րդ կուրսերի առաջադիմությունը, ըստ կիսամյակների տատանվել է 53,3%-ից 81,8%-ի սահմաններում: Այն 53,3%-ից աճեց և չորրորդ կիսամյակում կազմեց 81,8%:

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությունում այն տատանվել է 50% -ից 100%-ի սահմաններում, և չորրորդ կիսամյակում կազմել է 80%:

Առանձին դեպքերում առաջադիմության նվազումը վկայում է ֆակուլտետում դեռևս իրեն զգացնել տվող իներցիոն աշխատանքի, ուսանողների անպատասխանատվության, դասախոսների ոչ հետևողական աշխատանքի, տեխնիկական և մեթոդական ոչ պատշաճ զինվածության մասին:

Հաշվետու ժամանակաշրջանում տնտեսագիտական ֆակուլտետում արձանագրվել է ուսանողների 105 շարժ:

**Ուսանողների շարժը տնտեսագիտական ֆակուլտետում
2013-2014 ուսումնական տարում**

	բակալավրիատ	մագիստրատուրա	ընդամենը
Զորակոչվել է բանակ	12	5	17
Զորացրվել է բանակից	14	4	18
Վերականգնել է ուսանողական իրավունքները	9	2	11
Տրամադրվել է տարկետում	-	-	-
Սովորում է արտերկրում	6	2	8
Դեռացվել է ֆակուլտետից	14	5	19
Ազատվել է ֆակուլտետից	3	3	6
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ այլ ֆակուլտետներից	4	-	4
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետից այլ ֆակուլտետ	-	-	-
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետից հեռակա ուսուցման ֆակուլտետ	8	-	8
Տեղափոխվել է այլ բուհից/քոլեջից/ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ	14	-	14
Ներֆակուլտետային տեղափոխություն	-	-	-
Ընդամենը	84	21	105

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվեց այլ ուսումնական հաստատություններից դեպի ԳՊՀ շարժ:

Այլ բուհերից և քոլեջներից Տնտեսագիտական ֆակուլտետ է տեղափոխվել 14 ուսանող, այդ թվում՝ Գավառի Ա. Թամանյանի անվան գյուղատնտեսական քոլեջից՝ 3, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի քոլեջից՝ 2 ուսանող, Գեղարքունիքի տարածաշրջանային քոլեջից՝ 1 ուսանող, «Հայաստանում Եվրոպական քոլեջ» հիմնադրամից՝ 2 ուսանող, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Գավառի մասնաճյուղից՝ 6 ուսանող: Տեղափոխվածները ԳՊՀ-ում արժանացան հոգատար վերաբերմունքի և գոհացնում են իրենց առաջին արդյունքներով:

Հաշվետու ժամանակաշրջանում բանակից վերադարձել են 18 ուսանողներ, որոնցից բակալավրիատում ուսումը շարունակում են 14 ուսանողներ, իսկ մագիստրատուրայում՝ 4 ուսանողներ: Բանակից զորացրվածները ցուցաբերում են կարգապահություն և ակտիվորեն ներգրավված են ուսումնական գործընթացում:

Բանակ է զորակոչվել 17 ուսանող:

Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանությունը, ինչպես նաև ավարտական ամփոփիչ ատեստավորումն անցկացվել է 2014թ. մայիս-հունիս ամսիներին՝ սահմանված կարգով:

**2013-2014 ուսումնական տարվա
ամփոփիչ ատեստավորման արդյունքները**

Բաժինը		Ուսանողների թիվը	A+	A	A-	B+	B	B-	C+	C	C-	F
Ֆինանսներ /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	28	6	9	3	-	2	1	-	-	7	-
	Ամփոփիչ քննություն II	8	-	-	-	-	-	-	-	-	8	-
	Ավարտական աշխատանք	20	8	8	3	-	-	1	-	-	-	-
Ֆինանսներ /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	10	6	1	-	-	2	-	-	1	-	-
Հաշվապահական հաշվառում /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	22	7	-	6	-	1	-	1	2	5	-
	Ամփոփիչ քննություն II	9	-	1	-	-	-	2	1	3	2	-
	Ավարտական աշխատանք	13	7	1	4	1	-	-	-	-	-	-
Հաշվապահական հաշվառում /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	10	5	1	1	-	-	2	1	-	-	-
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	11	4	1	-	1	-	-	-	1	4	-
	Ամփոփիչ քննություն II	5	-	-	-	-	-	-	-	2	3	-
	Ավարտական աշխատանք	6	5	-	1	-	-	-	-	-	-	-
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /մագիստրատուրա /	Մագիստրոսական թեզ	2	2	-	-	-	-	-	-	-	-	-

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բակալավրիատի 61 ուսանողներ, որոնցից 1-ը վերականգնել է ուսանողական իրավունքները:

Ամփոփիչ ատեստավորմանը «Ֆինանսներ» մասնագիտությամբ մասնակցել է 28 ուսանող, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ՝ 22, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ՝ 11 ուսանող:

Հաշվետու տարում բակալավրիատի «Ֆինանսներ» բաժինն ավարտեց 28 ուսանող, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 18 ուսանող:

«Հաշվապահական հաշվառում» բաժինն ավարտեցին 22 ուսանողներ, որոնցից գերազանցության դիպլոմով՝ 11 ուսանողներ:

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժինն ավարտեց 11 ուսանող, 5-ը գերազանցության դիպլոմով:

Բակալավրիատի շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորմանը չներկայացած ուսանող չի եղել:

Մագիստրատուրան ավարտել են 22 մագիստրոսներ, այդ թվում՝ «Ֆինանսներ» մասնագիտությամբ՝ 10 ուսանող, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ՝ 10 ուսանող, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ՝ 2 ուսանող:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքներով առաջադիմությունն ունի հետևյալ պատկերը.

Ամփոփիչ ատեստավորման առաջադիմություն

Մասնագիտությունը	Բակալավրիատ %	Մագիստրատուրա %
Ֆինանսներ	100	100
Հաշվապահական հաշվառում	100	100
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	100	100

Մագիստրատուրան գերազանցությամբ ավարտել են 13 մագիստրոսներ:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի դիտողությունները և առաջարկությունները քննարկվել են համապատասխան ամբիոններում, մշակվել են միջոցառումներ՝ թերությունները վերացնելու և ամփոփիչ ատեստավորումը պատշաճ կազմակերպելու համար:

Անհրաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել գրախոսությունների որակին: Միաժամանակ առաջարկում ենք բակալավրիատում վերանայել ուսումնական պլանները՝ ներառելով շուկայական պահանջներին բավարարող առարկաներ, ավարտական աշխատանքների թեմաներն ընտրելիս հաշվի առնել հետազոտվող օբյեկտի առկայությունը տարածաշրջանում, կազմել և դիպլոմային աշխատանքների հեղինակներին նախապես ներկայացնել մեթոդական ցուցումներ՝ ուղեցույցի տեսքով: Նաև առաջարկում ենք վերանայել «Մարքեթինգի հիմունքներ» առարկայի հարցաշարը և առարկայի ծրագիրը՝ հաշվի առնելով ժամանակի պահանջները:

Մագիստրատուրայի ուսանողների համար արդիականացվել են թեզերի թեմաները:

Մագիստրոսների ավարտական աշխատանքները պետք է առանձնապես գիտահետազոտական բնույթով, ինչին կնպաստեն կիրառական բնույթի ընտրովի դասընթացները:

Անհրաժեշտ է մագիստրոսական թեզերում ավելի մեծ տեղ հատկացնել հեռանկարային զարգացման հաշվարկներին և դրանց գիտական հիմնավորմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի Հաշվապահական հաշվառում ամբիոնը հետևողական աշխատանք է կատարել հեռակա ուսուցման ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտական կրթական ծրագրի արդյունավետ իրականացման, հեռակա համակարգում սովորող ուսանողների մասնագիտական որակների ձևավորման ուղղությամբ:

Անվճար տեղերով ուսուցումը ԳՊՀ-ում սկսվել է 2010-2011 ուսումնական տարվանից, և այդ գործընթացը շարունակվել է անցյալ ուսումնական տարում ևս: Անվճար սո-

վորող ուսանողները դրսևորում են բարձր առաջադիմություն՝ ձգտելով պահպանել իրենց տեղերը:

Ըստ մասնագիտությունների՝ ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում անվճար տեղերում սովորողների քանակը հետևյալն է.

Անվճար սովորողների թիվը և շարժը բակալավրիատում և մագիստրատուրայում

Բակալավրիատ	Ֆինանսներ		Հաշվապահական հաշվառում		Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում		Ընդամենը
	I կուրս	II կուրս	I կուրս	II կուրս	I կուրս	II կուրս	
Ուսանողների թիվը	2	3	2	3	3	3	15
Կորցրել է անվճար սովորելու իրավունքը	-	1	-	-	1	3	5
Մագիստրատուրա	I կուրս	II կուրս	I կուրս	II կուրս	I կուրս	II կուրս	
Ուսանողների թիվը	3	3	2	2	1	1	11
Կորցրել է անվճար սովորելու իրավունքը	1	X	-	X	-	X	1

Անվճար տեղերի առկայությունը բակալավրիատում և մագիստրատուրայում օրինաչափորեն ազդում է ուսանողների ակտիվության և ուսման որակի բարձրացման վրա՝ ապահովելով մրցակցություն: Անվճար սովորելը բարձրացնում է պատասխանատվությունը, յուրաքանչյուր միավորի համար լուրջ ջանքեր են գործադրվում:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում անվճար սովորել են 26 ուսանողներ, որոնցից 15-ը՝ բակալավրիատում, 11-ը՝ մագիստրատուրայում: Ուսումնական տարվա քննաշրջանի արդյունքներով փոխատեղումներ են եղել, բակալավրիատում «Ֆինանսներ» երկրորդ կուրսում՝ մեկ ուսանող, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» առաջին կուրսում՝ մեկ ուսանող և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժնի երրորդ կուրսում՝ 3 ուսանող:

Մագիստրատուրայի անվճար տեղերում սովորող ուսանողների փոխատեղում կատարվել է «Ֆինանսներ» առաջին կուրսում՝ մեկ ուսանող:

Տնտեսագիտական ֆակուլտետի զարգացման հայեցակարգը

Տնտեսագիտական ֆակուլտետի զարգացման հայեցակարգը բխում է բուհի ընդհանուր ռազմավարական ծրագրերի և մրցունակ տնտեսագետներ պատրաստելու հրամայականից:

Դեկանատի խնդիրն է հանդես բերել պատասխանատվություն, հետևողականություն, բարելավել կրթական ծրագրերն ու դրանց իրականացման գործընթացը:

Ֆակուլտետի խորհուրդը, ամբիոնները գործի են դնում հետազոտական կարողություններ մասնագիտական կրթական ծրագրերի զարգացումներն ապահովելու և գիտության արդի ձեռքբերումները կիրառելու նպատակով:

Կրթական ծրագրերի զարգացման նպատակով հաշվի են առնվում գործատուների, դասախոսների, ուսանողների առաջարկությունները, որոնք քննարկվում են ամբիոններում:

Դասավանդման նոր մեթոդների օգտագործումը ֆակուլտետի ամբիոնների մշտական ուշադրության կենտրոնում է:

Դասախոսական կազմը հիմնականում համապատասխանում է իրականացվող մասնագիտական կրթական ծրագրի պահանջներին: Սակայն նոր կադրերի պահանջ կա, որոնք լավագույնս կտիրապետեն նորագույն կրթական տեխնոլոգիաներին:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի դասախոսները կատարել են գիտահետազոտական աշխատանք և ներկայացրել 11 գիտական հոդվածներ:

Հաշվետու տարում ակտիվացան Ուսանողական գիտական ընկերության աշխատանքները: 17 ուսանողներ մասնակցեցին ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին:

Ֆակուլտետի դեկանատն ու ամբիոնները պետք է ավելի եռանդով աշխատեն, ունենան առաջադրված խնդիրների լուծման հստակ կառուցակարգեր և ժամկետներ:

Զարգացման հայեցակարգի առանցքը կրթության որակի ապահովման գործընթացներն են:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում մշակվել են կրթության որակի բարձրացման կառուցակարգեր, որոնք աստիճանաբար գործի են դրվում:

Ֆակուլտետի ուսանողների առաջադիմության բարձրացումը վկայում է կրթության որակի ապահովման մասին, սակայն որակի բարձրացման ուղղությամբ շատ անելիքներ կան: Կարևորվում ենք որակի մշտական վերահսկողությունն ու կառավարումը: Ուսանողի առաջադիմության ցուցանիշը միջին որակական գնահատականն է, որն արտահայտում է ուսման որակի շարժընթացը (դինամիկան):

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ըստ մասնագիտությունների ուսանողների միջին որակական գնահատականների (ՄՈԳ-երի) պատկերը հետևյալն է.

Ըստ մասնագիտությունների և կուրսերի արձանագրված ՄՈԳ-երը՝

2013-2014 ուս. տարում

Մասնագիտություններ, կուրսեր	ուսանողների թիվը	1,7-2,9		3,0-3,5		3,6-4,0	
		ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս
Ֆինանսներ 1-ին	14	5	36	2	14	7	50
Ֆինանսներ 2-րդ	34	14	41	9	26	11	33
Ֆինանսներ 3-րդ	4	2	50	-	-	2	50
Ֆինանսներ 4-րդ	28	8	29	2	7	18	64
Հաշվապահական հաշվառում 1-ին	3	1	33.3	1	33.3	1	33.3
Հաշվապահական հաշվառում 2-րդ	10	1	10	2	20	7	70
Հաշվապահական հաշվառում 4-րդ	22	8	36	1	5	13	59
Ձեռնարկությունների տնտ. և կառ. 1-ին	8	3	38	1	12	4	50
Ձեռնարկությունների տնտ. և կառ. 2-րդ	5	1	20	1	20	3	60
Ձեռնարկությունների տնտ. և կառ. 4-րդ	11	5	45	1	10	5	45

Միջին որակավորման գնահատականը առանձին ուսանողի առաջադիմությունն է, որի առաջընթաց փոփոխությունը դառնում է որակի իսկական ցուցանիշ: Առանձին կուրսերում ունենք միջին որակավորման գնահատականների աճ, որը ցույց է տալիս ուսումնառության բարեհաջող կայուն ընթացք:

Այսպես «Ֆինանսներ» 4-րդ, «Հաշվապահական հաշվառում» 2-րդ և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 2-րդ կուրսերի ուսանողների 60-ից 70 %-ը ապահովել են 3,6-4,0 ՄՈԳ:

3,0-3,5 ՄՈԳ են ապահովել «Հաշվապահական հաշվառում» 1-ին, «Ֆինանսներ» 2-րդ և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 2-րդ կուրսերի ուսանողների 20-33 %-ը:

Որակի օգտին է խոսում այն փաստը, որ առանձին կուրսերի ուսանողների միայն 10-20%-ն է 1,7-2,9 ՄՈԳ հավաքել:

Ուսման որակի բարձրացումը մնում է օրախնդիր: Այս ուղղությամբ ջանքերը շարունակվում են, ձեռնարկվում են բազմազան միջոցառումներ: Սակայն, մասնագիտական գրքերը ոչ բավարար չափով են ուսումնասիրվում սովորողների կողմից, ինչը չի կարող բացասաբար չազդել կրթության որակի վրա: Որոշ ուսանողներ անտարբերություն են դրսևորում այս կարևոր խնդրի նկատմամբ:

Ուսանողը պետք է ինքնուրույն աշխատանք կատարի անհրաժեշտ ծավալով: Դասախոսները երբեմն չեն հետևում արտալսարանային աշխատանքին այն մակարդակով, ինչ պահանջվում է: Կրեդիտների հավաքումը պայմանավորված է նաև ինքնուրույն աշխատանքով: Դասախոսը պետք ուսանողների գիտակցության մեջ ամրապնդի ինքնուրույն աշխատանքի կարևորությունը մասնագետի ձևավորման գործում:

Դասախոսը պետք է հետևի սովորողների կողմից գիտելիքների յուրացման ընթացքին: Դասախոսության հատույցը ամենակարևորն է, ինչը պետք է դասախոսը ստուգի ամփոփումների ժամանակ:

Ուսուցման որակը չափվում և ստուգվում է ուսանողի ստացած գիտելիքների պաշարով, ուստի մեր խնդիրն է ապահովել խոր գիտելիքներ և բարելավել գնահատման համակարգը:

Որոշ ուսանողների մոտ դեռևս մնում է դասախոսությունների տեքստերին նախապես չժանոթանալու պրակտիկան: Այս գործի բարելավմանը մեծապես նպաստեց Elearning.gsu էլեկտրոնային ուսուցման համակարգի կիրառումը:

Ինչպես ռեկտորատի, այնպես էլ դեկանատի և դասախոսների կողմից լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների հաճախումներին: Ամենօրյա հաշվառման արդյունքում որոշ ուսանողներ ենթարկվել են վարչական պատասխանատվության (նկատողություն, խիստ նկատողություն):

Վարչական տույժեր ստացած ուսանողներ

Կրթական աստիճաններ	2013-14 ուս. տարվա I կիսամյակ	2013-14 ուս. տարվա II կիսամյակ
	Նկատողություն	
Բակալավրիատ	10	4
Մագիստրատուրա	4	3
Ընդամենը	14	7
	Խիստ նկատողություն	

Բակալավրիատ	7	5
Մագիստրատուրա	3	3
Ընդամենը	10	8

Այս հանգամանքը նպաստում է կարգապահության բարձրացմանը, և շատ ուսանողներ փոխել են իրենց վարքագիծը՝ ապահովելով կարգապահություն և առաջադիմություն: Հաշվետու ժամանակաշրջանում 41,7%-ով կրճատվել է վարչական տույժեր ստացած ուսանողների թիվը, որը նախորդ տարվա 67-ի դիմաց այս տարի կազմել է 39: Հաշվետու տարում անհարգելի բացակայելու պատճառով բակալավրիատի 14 և մագիստրատուրայի 5 ուսանող հեռացվեցին համալսարանից:

Ֆակուլտետի ղեկանատը սերտ կապ է պահպանում ուսանողների ծնողների հետ՝ որպես ակտիվ շահառուների: Կազմակերպվել է առաջին կուրսերի ծնողների հանդիպում-քննարկում: Ծնողների շրջանում անցկացրել ենք հարցումներ, որոնց արդյունքները խիստ օգտակար են:

Ֆակուլտետում կարևորվում են պրակտիկաների կազմակերպման ու արդյունավետ անցկացման խնդիրները: Հաշվի է առնվում պրակտիկ գիտելիքների դերը մասնագետի ձևավորման գործում: Դեկանատը պրակտիկայի վայրի ղեկավարության հետ նախօրոք համաձայնեցնում է ժամկետները, քննարկվում անցկացման սկզբունքներն ու կարգը:

Պրակտիկաների տեսակների, հաջորդականության, բովանդակության, ձևերի ու միջոցների ճիշտ սահմանման ու կիրառման նպատակով բոլոր կիսամյակների համար ամբիոնների ուժերով մշակվել են ուղեցույցներ:

Պրակտիկայի արդյունավետության բարձրացումը և կազմակերպական նոր մեխանիզմների ներդրումը կնպաստի ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորմանը:

2013 թ. սեպտեմբերի 5-ին «Բի Էս Սի» Բիզնեսի աջակցության կենտրոնի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության» ծրագրի ֆինանսավորմամբ տեղի ունեցավ «Ուսանողների աշխատանքի տեղավորման և պրակտիկայի հնարավորությունների խթանում» ծրագրի ավարտական միջոցառումը, որը մեկնարկել էր 2013թ. մարտ ամսին: Ծրագրի հիմնական նպատակն էր պրակտիկայի «օրինակելի» մոդելի շնորհիվ ստեղծել ամուր կապ բուհերի և գործատուների միջև: Ծրագրի շրջանակներում մշակված ուղեցույց-ձեռնարկը՝ «Ինչպես պրակտիկան դարձնել ավելի արդյունավետ», կօգտագործենք մեր պրակտիկայի ծրագիրը բարելավելու համար:

Պրակտիկայի վայրում՝ բանկում, ուսանողին աշխատանքային գործառույթի վստահումը, վարկառուին այցելելիս նրա ներգրավումը, ուսանողի հետ խորհրդակցելը վկայում են այն մասին, որ բարձր է համալսարանի վարկանիշը: Գործատուները գիտակցում են, որ պրակտիկանտ-համալսարանականների ներգրավումը աշխատանքներին՝ իրենց գովազդի միջոցներից մեկն է: Ուստի, պրակտիկան երկուստեք փոխշահավետ է: Հաշվետու տարում պրակտիկայի ավարտից հետո «Անելիք» բանկում կազմակերպվեց պրակտիկայի արդյունքների քննարկում բանկի, ֆակուլտետի ղեկավարության և ուսանողության հետ, ինչը այսուհետև ևս կկիրառվի:

Ուսանողների առաջարկությամբ նախատեսվում ենք պրակտիկայի արդյունքների ստուգումն ու գնահատումը անցկացնել գործատու կազմակերպություններում՝ դրանց ներկայացուցիչների և շահառուների մասնակցությամբ, ինչը կբարձրացնի պրակտիկայի դերը: Սա իր հերթին կնպաստի «գործարար համայնք-համալսարան» կապի ամրապնդմանը, ինչը երբեմն ձևական բնույթ է կրում: «Համալսարան-ուսանող-գործարար-համայնք» օղակները պետք է գործեն որպես միասնական շղթա՝ հօգուտ որակյալ մասնագետի ձևավորման:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետում կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ:

Հիշարժան է գործարար համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ ֆորումը, որի ընթացքում տարբեր սուբյեկտների տեսանկյունից դիտարկվեցին փոքր ու միջին բիզնեսի խնդիրները: Առաջարկվեցին տարբեր լուծումներ, բիզնեսի զարգացման արդյունավետ ուղիներ:

Ֆորումին մասնակցեցին Գավառի տարածաշրջանի բանկային, վարկային կազմակերպությունների, հարկային տեսչության, Գավառի համայնքապետարանի, զբաղվածության մարզային կենտրոնի աշխատակիցներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գործարարներ, ԳՊՀ դասախոսներ և ուսանողներ:

ԳՊՀ խորհրդի նախագահ Հրանուշ Հակոբյանի նախաձեռնությամբ տնտեսագետ ուսանողների համար վարպետության դաս վարեց ԱՄՆ Կենտրոնական բանկի խորհրդրդական, բանկային վերահսկողության տնօրեն, ամերիկահայ Սարգիս Յողուրտջյանը:

ԳՊՀ մագիստրոսների համար կազմակերպվեց դասախոսություն՝ մագիստրոսական թեզ գրելու հմտությունների և կարողությունների վերաբերյալ: Հրավիրվել էր Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսամաթեմատիկական մոդելների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Թավադյանը: Բանախոսը ներկայացրեց մագիստրոսական թեզեր գրելու սկզբունքները, չափանիշներն ու պահանջները, աշխատանքային պլանի կազմման առանձնահատկությունները:

Արդեն երրորդ տարին է, ինչ Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները այցելում են Կենտրոնական բանկի թանգարան, այցելումների սրահ, լսում դասախոսություններ ՀՀ-ում գների կարգավորման, դրամավարկային քաղաքականության վերաբերյալ, ինչը նպաստում է ուսանողների գործնական գիտելիքների խորացմանը:

Ֆակուլտետի հյուրն է եղել ԳՊՀ շրջանավարտ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գործարար միջավայրի բարելավման» վարչության պետի տեղակալ Կորյուն Գևորգյանը: Նա հանդես եկավ դասախոսությամբ՝ «Արդյունաբերության զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով:

Հաշվետու տարվա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Լեհաստանի Հանրապետության Վարշավայի տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր Աննա Կարմանսկան մեկ ամիս հետազոտական աշխատանք կատարեց ԳՊՀ-ում: Նրա աշխատանքի թեման է «Հաշվապահության զարգացման հիմնարար տեսությունը՝ Հայաստանում կատարած իրավիճակային վերլուծության հիման վրա»: Նա Տնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրոսական խմբերում դասախոսություններ կարդաց և մասնակցեց ուսանողների կազմակերպած դերախաղին:

Համալսարանի ռեկտորատը, դեկանատը մշտապես մտահոգվում են ուսանողների սոցիալական խնդիրներով և այս ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի միջոցառումներ, կիրառվել զեղչեր:

Տնտեսագիտական ֆակուլտետի կրթաթոշակառուները 37-ն են:

Հովանավոր կազմակերպությունը	Ուսանողների թիվը
Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	15
«Վիվա-Սել USU» ընկերություն	10
Թրփանճեան ընտանեկան հիմնադրամ	4
«Օրանժ-Հայաստան» հիմնադրամ	3
Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	3
«Ռոբերտ Ենգիբարյան» հիմնադրամ	2

Ֆակուլտետի ուսանողական խորհուրդը (նախագահ՝ Շողիկ Վիրաբյան) և տնտեսագետների ակումբը (նախագահ՝ Վարդինե Վարդանյան) հաշվետու ժամանակաշրջանում միջոցներ են ձեռնարկել ուսանողների հասարակական ակտիվությունը բարձրացնելու, նրանց առօրյան ավելի հետաքրքիր ու հագեցած դարձնելու ուղղությամբ:

Կարևոր ենք համարում խրախուսել գիտելիքներ ձեռք բերելու ուսանողների ջանքերը, ինչին կարող են նպաստել տարաբնույթ միջոցառումները, ինտելեկտուալ մրցույթները, ցերեկույթները և այլն: Ավանդույթ են դարձել ֆակուլտետում բազմաբնույթ ուսուցողական, տեղեկատվական, գեղագիտական, դաստիարակչական միջոցառումների կազմակերպումը, էքսկուրսիաները դեպի մայրաքաղաքի և հանրապետության տարբեր մարզերի մշակութային և պատմական վայրեր, արտադրական ձեռնարկություններ, բանավեճերը, երիտասարդությանը հետաքրքրող թեմաներով քննարկումները:

Այսպիսով, Տնտեսագիտական ֆակուլտետի զարգացման հիմնական տեսլականը որակյալ մասնագետի պատրաստումն է:

Ս. Գ. Ամիրխանյան՝

*ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան՝
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՉՍԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաչրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ				
1-ին	15	1	4	86.7
2-րդ	36	-	8	44.4
3-րդ	5	-	2	40.0
4-րդ	26	-	16	73.1
Հաշվ. հաշվառում				
1-ին	3	1	-	66.7
2-րդ	13	-	7	69.2
4-րդ	23	-	7	60.9
Ձեռնարկ. տնտ. և կառ.				
1-ին				
2-րդ	9	1	4	66.7
4-րդ	4	-	2	50.0
	11	-	4	72.7
Ընդամենը	145	3	54	62.8
Մագիստրատուրա				
Ֆինանսներ				
1-ին	19	-	7	68.4
2-րդ	9	-	5	88.9
Հաշվ. հաշվառում				
1-ին	8	-	2	50.0
2-րդ	10	-	5	60.0
Ձեռն. տնտես.և կառ.				
1-ին	4	-	2	75.0
2-րդ	2	-	2	100
Ընդամենը	52	-	23	69.2

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ				
1-ին	14	-	5	100
2-րդ	33	5	6	72.7
3-րդ	4	-	2	75.0
Հաշվ. հաշվառում				
1-ին	3	-	-	66.7
2-րդ	11	-	1	81.8
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	8	-	4	75.0
2-րդ	5	-	3	80.0
Ընդամենը	78	5	21	79.5
Մագիստրատուրա				
Ֆինանսներ				
1-ին	19	-	10	84.0
Հաշվ. հաշվառում				
1-ին	8	-	4	88.0
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	4	-	3	100
Ընդամենը	31	-	17	87.0

**2013/2014 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ
ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ**

Դասագիրք	Մեմագրու- թյուն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթո- դական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	8	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ջաքոյան Հրաչյա Սամվելի, տնտեսագիտության թեկնածու,
ԳՊՀ պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հերզոյան Մարիամ Նորիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. Մովսեսյան Դավիթ Մերուժանի - տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ
3. Խաչատրյան Գայանե Արտիկի - տնտեսագիտության թեկնածու
4. Կարապետյան Վարազդատ Ազատի - տնտեսագիտության թեկնածու
5. Թադևոսյան Սամվել Աշոտի - տնտեսագիտության թեկնածու
6. Մուրադյան Գուրգեն Գևորգի - ասիստենտ
7. Շահինյան Վարդուհի Էդիկի - ասիստենտ
8. Բազոյան Սոնա Սահակի - ասիստենտ
9. Հովեյան Աստղիկ Գագիկի - դասախոս
10. Քալոյան Մանվել Խաչիկի - դասախոս
11. Ավետիսյան Աստղիկ Սիմոնի - դասախոս
12. Խլոյան Վարսենիկ Հայկի - դասախոս
13. Սարգսյան Հուսիկ Հայկի- դասախոս
14. Քոլոզյան Արմինե Ռաֆիկի – լաբորանտ, դասախոս

ՀԱՍԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Սահակյան Արմեն Կոլյայի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր
2. Հարությունյան Հարություն Սարգսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. Խաչատրյան Հակոբ Հայկի - տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
4. Նալչաջյան Վահրամ Թորգոմի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
5. Դավթյան Գագիկ Հայկարամի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
6. Բաղդասարյան Արեգ Մերուժանի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

7. Ջամվեյան Վահրամ Սամվելի - տնտեսագիտության թեկնածու
8. Սերգոյան Գեղամ Պարույրի - դասախոս
9. Կիրակոսյան Էդգար Սամվելի - դասախոս
10. Ենգիբարյան Աննա Մարտունի - դասախոս
11. Գզրարյան Հարություն Վաղարշակի - դասախոս
12. Նավոյան Սինարա Գառնիկի - դասախոս

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների մշակման և կատարելագործման հիմնական ուղղությունները:

բ) Աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հնարավորությունները ՀՀ մարզերում:

գ) Տեղական և տարածքային տնտեսական զարգացման հիմնախնդիրներ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	4	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հերզոյան Մ. Ն., Բանկային ռիսկերի կառավարման առանձնահատկությունները «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ» առևտրային բանկի օրինակով// ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 16, 2014, էջ:
2. Նալչաջյան Վ. Թ., Բազմությունների տեսության ստեղծման պատմությունը // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 16, 2014, էջ:
3. Քալոյան Մ. Խ., Ժամանակակից բանկային ծառայությունները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 16, 2014, էջ:
4. Գզրարյան Հ. Վ., Էլեկտրոնային բիզնեսը որպես տնտեսավարման և կառավարման ժամանակակից ձև // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 16, 2014, էջ:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ղուլոյան Հակոբ Մելսիկի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ամիրխանյան Սամվել Գրիգորի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Մարգարյան Հասմիկ Անդրանիկի - ասիստենտ
3. Սարգսյան Պարզև Սուրիկի - դասախոս
4. Եղիազարյան Սամվել Ռադիկի - դասախոս
5. Հակոբյան Անահիտ Ալեքսանի - դասախոս
6. Բադալյան Անի Սամվելի - լաբորանտ, դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Այրումյան Իրինա Գագիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Առաքելյան Վալերի Հովհաննեսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. Մարկոսյան Սևակ Մեսրոպի-տնտեսագիտության թեկնածու

ԱՄԲՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակում և կատարելագործման հիմնախնդիրները:

բ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդոլոգիայի և կազմակերպման կատարելագործման հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	4	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ամիրխանյան Ս. Գ., Առաքելյան Վ. Հ., Ապրանքների խմբաքանակի շուկայում առաջխաղացման ռազմավարության մշակման մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 16, 2014, էջ:

2. Առաքելյան Վ. Ջ., Այրումյան Ի. Գ., Կազմակերպության մրցունակության գնահատման խնդիրները ապրանքային շուկայում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 16, 2014, էջ:
3. Առաքելյան Վ. Ջ., Այրումյան Ի. Գ., Մարգարյան Ջ. Ա., Նորմուծական ռազմավարության արդի հիմնախնդիրները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 16, 2014, էջ:
4. Հակոբյան Ա. Ա., Հաշվապահական հաշվառման մի քանի հիմնահարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 16, 2014, էջ:

ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատասխանատու՝ Կուսուղյան Նելլի Ալբերտի,
 ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
 դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Պասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
030400	Պատմություն
020400	Աշխարհագրություն
051100	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/
030500	Իրավագիտություն
081500	Հաշվապահական հաշվառում
020200	Կենսաբանություն
020800	Բնապահպանություն և բնօգտագործում
230100	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա
100100	Սերվիս
020500	Քարտեզագրություն և կադաստրային գործ
021000	Դեղագործական քիմիա

Մասնագիտացումներ՝	
	Բանասիրության բակալավր
	Բանասիրության բակալավր
	Պատմության բակալավր
	Աշխարհագրության բակալավր
	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ
	Իրավագիտության բակալավր
	Ֆինանսների բակալավր
	Կենսաբանության բակալավր
	Բնապահպանության բակալավր
	Ճարտարագիտության բակալավր
	Սերվիսի բակալավր
	Դեղագործական քիմիայի բակալավր
	Քարտեզագրության բակալավր

Ուսանողների թիվը՝ 1020
 Շրջանավարտների թիվը՝ 162

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2013-2014 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2014-2015 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2014 թվականի ուսումնական տարում Հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթական գործընթացը կազմակերպվել է՝ կարևորելով ուսման որակի շարունակական բարձրացումը, ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանումը, ուսանողների իրավունքների պաշտպանությունը:

Հաշվետու ուստարում ֆակուլտետում սովորող ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշներն են.

- առաջին կիսամյակում՝ 70,3% (նախորդ ուստարում՝ 69,4%),
- երկրորդ կիսամյակում՝ 55,3% (նախորդ ուստարում՝ 53,3%):

Առաջադիմության անկումը մտահոգիչ է և նախանշում է ծրագրավորվող գործողությունների ուղղությունները:

Մասնագիտական ամբիոնները դեկանատի կողմից ստացել են հանձնարարական՝ ներկայացնելու համապատասխան գործողությունների, միջոցառումների իրականացման ծրագրեր՝ ուսանողների ուսման առաջադիմությունը բարձրացնելու, կրթության նկատմամբ ուսանողների հետաքրքրության խթանման, կրթությունը որպես աշխատաշուկայում մասնագիտական մրցունակության ապահովման հիմնական երաշխիքի գիտակցության արմատավորման ուղղությամբ:

Ֆակուլտետում գործող մասնագիտությունների ցանկը հաշվետու ուստարում համալրվեց ներքոհիշյալ 3 մասնագիտություններով.

- Դեղագործական քիմիա,
- Քարտեզագրություն և կադաստրային գործ,
- Սերվիս:

2013թ. դիմորդների գործերի ընդունելությունը կազմակերպվեց 13 մասնագիտությունների գծով, իսկ Աշխարհագրություն, Բնապահպանություն և բնօգտագործում բաժիններում դիմորդներ չեն եղել:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում կատարվել են աշխատանքներ ուսանողներին ակադեմիական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ, կազմակերպվել են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություններ և անհատական աշխատանքներ՝ անհատական, կուրսային աշխատանքների կատարման նպատակով:

2014թ-ին ֆակուլտետն ավարտեցին 162 շրջանավարտ, որից վեցամյա կրթության համակարգում ուսումնառած 28 և բակալավրիատի կրթական աստիճանով 134 շրջանավարտ:

Տարեցտարի ավելանում են ինչպես ֆինանսական աջակցություն ստացած ուսանողների թիվը, այնպես էլ ուսանողներին տրամադրվող ֆինանսավորման աղբյուրները: 2013-2014 ուստարում թվով 88 ուսանողների ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն. ՀՀ պետական ուսումնական հաստատություններում սովորողների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արտոնություններից օգտվելու կարգի համաձայն՝ ֆակուլտետում անվճար սովորում է 13 ուսանող, «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության միջոցներից՝ 6, «Օրանժ.Հայաստան» հիմնադրամից՝ 2, ԱՍՔՈՐ/Հայաստան բարեգործական հա-

սարակական կազմակերպության կողմից հայտարարված «Ուսանողների ուսման վճարների փոխհատուցման» ծրագրի միջոցներից՝ 8, Թրփանճեան ընտանեկան և Ագեան հիմնադրամներից՝ 4, «Ռոբերտ Ենգիբարյան» հիմնադրամից՝ 1, սոցիալապես անապահով և «Փարոս» համակարգում ընդգրկված 18 ուսանողների, ըստ անապահովության միավորների սահմանված չափով տրամադրվեց ֆինանսական աջակցություն, իսկ համալսարանի կողմից ուսման վարձերը գեղչվեցին 36 (ճախորդ ուստարում՝ 22) ուսանողի համար:

2013 թ. նպատակային տեղերում ընդունվել է 4 ուսանող Գեղարքունիքի մարզից: Նշված ուսանողների, մարզպետարանի ու համալսարանի միջև կնքվեցին եռակողմ պայմանագրեր:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ՀՀ ուսումնական այլ հաստատություններից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 10 ուսանող, երկրորդ մասնագիտություն ստանալու համար դիմել և սահմանված կարգով ընդունվել է 28 ուսանող, քոլեջից հետո շարունակական կրթության նպատակներով՝ 16 ուսանող, իսկ ԳՊՀ առկա ուսուցման եղանակից ֆակուլտետ է տեղափոխվել 45 ուսանող:

Համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու, անհարգելի բացակայելու համար 596 ուսանող ստացել է նկատողություն, խիստ նկատողություն՝ 156 ուսանող: Դասերից անհարգելի բացակայելու, ակադեմիական և ֆինանսական պարտքեր ունենալու պատճառով համալսարանից հեռացվել է 149 ուսանող:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողներն իրենց մասնակցությունն են ունենում համալսարանական, հանրապետական տարբեր միջոցառումների, մրցույթների:

Կրթության որակի ապահովման և մշտադիտարկման նպատակով հաշվետու ուստարվա երկու կիսամյակներում ուսանողների և շրջանավարտների շրջանում կատարվել են ուսումնասիրություններ, շարունակվել են աշխատանքները հետադարձ կապի ապահովման տարբեր կառուցակարգերի միջոցով: Բուհում ստացած կրթությունից ուսանողների, շրջանավարտների բավարարվածության աստիճանը ստուգվել է անցկացված էլեկտրոնային հարցումների, քննարկումների, բանավոր հարցումների, «E-learning GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգով յուրաքանչյուր դասախոսի հետ առցանց շփման, ռեկտորի կողմից ամենօրյա ընդունելության և այլ միջոցներով: Ուսանողների կողմից բարձրացված ցանկացած առաջարկ, հարցադրում քննարկման առարկա է դարձել դեկանատում, ապա նաև ռեկտորատի համապատասխան միստերում և ստացել լուծումներ:

Կրթական միջավայրի արդիականացման, կրթության բովանդակության հարստացման նկատառումներից ելնելով՝ մշտադիտարկվել է հեռակա ուսուցման համակարգում սովորողին առավել անհրաժեշտ էլեկտրոնային ուսուցման համակարգում տեղակայված առարկայական տիրույթները և բացթողումների մասին ահազանգվել համապատասխան պատասխանատուներին, վերահսկվել են դրանց շտկման աշխատանքները:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2015 թվականի ուսումնական տարվա զարգացման հայեցակարգ

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի առաքելությունից ելնելով՝ 2015 թվականին նախանշվում են ֆակուլտետի զարգացման հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

1. Շարունակել ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների նորացման, կրթական էլքային արդյունքների վերանայման, ակնկալվող արդի մասնագիտական իրազեկությունների սահմանման, աշխատաշուկայի պահանջներին դրանց համապատասխանեցման աշխատանքները՝ համադրելով համալսարանի առկա ուսուցման կրթական ծրագրերի, ինչպես նաև հանրապետության և արտերկրի առաջավոր բուհերի համանման ծրագրերի հետ:

2. Մշտադիտարկել «E-learning GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի առարկայական տիրույթներում տեղակայված ուսումնական նյութերի բովանդակությունն ու որակը:

3. Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով իրականացնել համակարգված աշխատանքներ՝ բակալավրիատի կրթական աստիճանում բոլոր մասնագիտությունների գծով:

4. Կատարելագործել հեռակա ուսուցման կրեդիտային համակարգում սովորողների գիտելիքների բազմագործոն գնահատման մեթոդը, ճշգրտել գործոններին տրվող արժեքները:

5. Ապահովել բոլոր, մասնավորապես առաջին կուրսերի ուսանողների մուտքի հնարավորությունները էլեկտրոնային ուսուցման, էլեկտրոնային գրադարանի համակարգեր:

6. Կիրառել դասավանդման արդի, փոխներգործուն մեթոդներ, նորարական կրթական տեխնոլոգիաներ՝ ուսանողների գործնական կարողությունների, հաղորդակցման հնարությունների զարգացման նպատակով:

7. Շարունակել մանկավարժական կրթության որակի բարելավման, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի նորացման նպատակով ՀՀ-ում մանկավարժական կրթության բարեփոխումների ծրագրերին մասնակցությունը և մանկավարժի որակավորմամբ մասնագիտությունների կրթական ծրագրերի նորացման հետևողական աշխատանքները:

8. Վերանայել բարձր (նախավերջին և վերջին) կուրսերում ուսուցման կազմակերպման և քննաշրջանի անցկացման ժամկետները՝ ուսանողների ուսումնառության և գիտելիքների գնահատման գործընթացներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

9. Հետևողական աշխատանքներ կատարել ուսանողների շրջանում՝ ակադեմիական բոլոր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածման, իրենց իրավունքների և պարտականությունների, բուհի կանոնակարգային հենքի մասին իրազեկելու նպատակով:

10. Խրախուսել ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքներում հեռակա ուսուցման համակարգում սովորողների ակտիվության բարձրացումը, առաջին կուրսեցիներին համալսարանական կյանքին հնարավորինս արագ ինտեգրումը:

11. Ապահովել ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստական աշխատանքների, ուսանողներին ցուցաբերվող խորհրդատվության, ակադեմիական աջակցության գործընթացների արդյունավետությունը:

12. Հանրությանը ժամանակին և լիարժեք իրազեկել հեռակա ուսուցման համակարգում գործող մասնագիտական կրթական ծրագրերի, դրանց իրականացման որակի,

համալսարանի կողմից հանրությանը մատուցվող լրացուցիչ կրթական ծառայությունների, այլ նախագծերի վերաբերյալ:

13. Կրթության որակի ապահովման և դրա շարունակական բարձրացման նպատակով ապահովել մշտական հետադարձ կապ ուսանողների, շրջանավարտների հետ, բազմազանեցնել դրա ձևերը, կատարելագործել արդյունքների մշակման և ռազմավարական պլանավորման գործընթացների զուգորդման կառուցակարգերը:

14. Հեռակա ուսուցման համակարգում նպատակային տեղերում ուսուցման կազմակերպման նպատակներից ելնելով՝ ակտիվացնել համագործակցությունը Գեղարքունիքի մարզպետարանի, մարզի ավագ և հիմնական դպրոցների հետ:

Ն.Ա. Կուտուզյան

ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր

ՔՆՆԱՇՐՁԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ / ՉՍԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՁԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	12	-	-	100
2-րդ	7	-	-	77,8
3-րդ	14	-	1	87,5
4-րդ	15	-	-	100
5-րդ	32	-	1	100
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	6	2	-	50
2-րդ	13	-	2	84,6
3-րդ	12	-	1	83,3
4-րդ	15	-	3	86,7
5-րդ	20	-	5	95,2
Պատմություն				
1-ին	8	-	-	70
2-րդ	28	-	-	75
3-րդ	22	-	2	72,4
4-րդ	36	-	7	92,1
5-րդ	43	-	-	95,6
Աշխարհագրություն				
2-րդ	9	-	-	75
3-րդ	11	-	-	100
4-րդ	15	8	-	41,2
5-րդ	19	-	1	100
Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթ./				
1-ին	10	1	-	64,3
2-րդ	26	1	1	69,4
3-րդ	19	-	1	85
4-րդ	21	-	3	95,5
5-րդ	32	-	2	100
Իրավագիտություն				
1-ին	40	22	-	33,3
2-րդ	54	2	1	46
3-րդ	67	9	2	46,9
4-րդ	82	2	2	67,7
Հաշվապահական հաշվառում				
1-ին	14	8	-	31,6
2-րդ	25	5	1	38,9
3-րդ	26	-	6	69,2
4-րդ	34	-	11	91,9
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա				
1-ին	16	3	-	72,2
2-րդ	8	-	2	53,8
Կենսաբանություն				
1-ին	9	1	-	88,9
2-րդ	13	-	2	85,7
Բնապահպանություն և բնօգտագործում				
2-րդ	1	-	-	20
Սերվիս				
1-ին	4	-	-	80
Քարտեզագրություն և կադաստրային գործ				
1-ին	10	-	-	64,3
Դեղագործական քիմիա				
1-ին	9	-	-	100
ԸՆդամենը	853	64	57	70,3

ԱՄՍՈՎՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադի- մության %-ը
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	12	-	-	100
2-րդ	7	-	-	77,8
3-րդ	12	-	-	87,5
4-րդ	14	-	1	86,7
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	3	-	-	60
2-րդ	8	-	1	61,5
3-րդ	12	-	-	61,5
4-րդ	14	-	2	78,6
Պատմություն				
1-ին	6	-	-	75
2-րդ	22	-	-	66,7
3-րդ	27	7	-	60,7
4-րդ	37	-	2	92,1
Աշխարհագրություն				
2-րդ	3	-	-	21,4
3-րդ	9	-	-	45,5
4-րդ	16	2	-	76,5
Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթ./				
1-ին	5	-	-	45,5
2-րդ	24	5	-	52,8
3-րդ	16	-	-	88,9
4-րդ	22	2	-	90,9
Իրավագիտություն				
1-ին	17	6	3	26,2
2-րդ	65	8	1	63,3
3-րդ	48	9	1	26,4
4-րդ	57	1	3	49,4
Հաշվապահական հաշվառում				
1-ին	8	-	-	47,1
2-րդ	5	-	1	10,8
3-րդ	18	-	4	34,8
4-րդ	30	-	6	73
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա				
1-ին	10	4	-	40
2-րդ	4	-	1	10,8
Կենսաբանություն				
1-ին	8	-	-	88,9
2-րդ	10	-	2	83,3
Բնապահպանություն և բնօգտագործում				
2-րդ	2	-	-	50
Սերվիս				
1-ին	4	-	3	100
Քարտեզագրություն և կադաստրային գործ				
1-ին	6	-	-	66,7
Դեղագործական քիմիա				
1-ին	6	-	1	60
ԸՆԴՀԱՆՈՒՐ	566	44	32	55,3

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանում 2013-2014 ուսումնական տարում աշխատանքները կատարվել են ուսման որակի բարձրացմանը միտված քայլերի մշակման ու իրագործման մի շարք կոնկրետ ուղղվածություններով. մասնավորապես, ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական ծրագրերի բարեփոխման, առարկայական ծրագրերի ուսումնամեթոդական հիմքերի ապահովման, ուսանողների հետ աշխատանքների ակտիվացման, կրթական վերջնարդյունքների և ուսանողության շրջանում հարցումների վերլուծության, արտաքին շահառուների հետ կապերի ամրապնդման, համալսարանի տարբեր ստորաբաժանումների աշխատանքների համակարգման ու թափանցիկության ապահովման և մի շարք այլ բնագավառներում:

Ակադեմիական քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ ԱՔՎ) համալսարանում իրականացվող բոլոր գործընթացներում ունեցել է իր ուղղակի կամ անուղղակի մասնակցությունը՝ անպայմանորեն նպաստելով աշխատանքների համակարգված և կազմակերպված իրականացմանը:

Հաշվետու տարում Ակադեմիական քաղաքականության վարչությունն իր աշխատանքները կազմակերպել է հետևյալ 3 ուղղություններով՝

- բակալավրիատում ուսումնական գործընթացի համակարգում,
- մագիստրատուրայում կրթական ծրագրերի իրականացում,
- որակի ապահովում:

2013-2014 ուսումնական տարին Ակադեմիական քաղաքականության վարչությունը սկսել է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններում, առարկայական ծրագրերում համապատասխան շտկումներ և փոփոխություններ կատարելով:

ԱՔՎ-ի կողմից իրականացվել է համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատածավալների հաշվարկ և օպտիմալացում, ճշգրտվել է ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների ցուցակը և ներկայացվել ամենամսյա վճարման:

Հաշվառվել է լսարանային ֆոնդը, և իրականացվել են համապատասխան աշխատանքներ՝ այն դասացուցակների հետ համապատասխանեցնելու և բնականոն ուսումնական գործընթաց ապահովելու ուղղությամբ:

Հաշվետու տարվա սկզբից շարունակվել են ուսանողների և դասախոսների տվյալների բազաների լրացման և կատարելագործման աշխատանքները:

Ուսումնական տարվա առաջին շաբաթների ընթացքում շարունակվել է մագիստրատուրայում բոլոր մասնագիտությունների գծով ընդունելությունը, ինչի արդյունքում 2013-2014 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի մագիստրատուրա են ընդունվել 116 ուսանողներ:

Միաժամանակ ԱՔՎ-ն կազմակերպել է միջին մասնագիտական հաստատությունների բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների՝ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու գործընթացը: ԱՔՎ-ի կողմից իրականացվել են երկրորդ մասնագիտություն ստացողների գործերի ընդունման, ինչպես նաև ներբուհական տեղափոխությունների կազմակերպման և վերահսկման գործընթացները: ԱՔՎ-ի կողմից նախապատրաստվել և հաշվառվել են ԳՊՀ ուսանողների շարժի՝ հեռացման, ազատման, տարկետման, վերականգնման, տեղափոխման փաստաթղթային հիմքերը:

2013-2014 ուսումնական տարում գրանցվել է ԳՊՀ ուսանողների հետևյալ շարժը.

1	Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել	25
2	ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել	0
3	Երկրորդ մասնագիտություն ստացողներ	25
4	Քոլեջից ԳՊՀ են ընդունվել	20
5	Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	38
6	Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	11
7	Ներֆակուլտետային տեղափոխություններ	17
8	Տարկետում են ստացել	90
	➤ առողջական վիճակի պատճառով	13
	➤ զինծառայության մեկնելու հիմքով	77
9	ԳՊՀ-ից հեռացվել են	207
10	ԳՊՀ-ից ազատվել են	28
11	Վերականգնվել են ԳՊՀ՝	161
	➤ զրոյացումից հետո	93
	➤ հեռացումից հետո	26
	➤ տարկետումից հետո	6
	➤ ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլատրվածներ	36
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐՃ		622

Նախորդ՝ 2012-2013 ուսումնական տարվա ընդհանուր շարժի 556-ի դիմաց հաշվետու տարում արձանագրվել է 622-ը, ինչը, սակայն, աճել է հեռացվածների և ԳՊՀ-ից ազատվածների թվի աճման հաշվին՝ 2012-2013 թ. հեռացվածների 159-ի և ազատվածների 23-ի դիմաց հաշվետու տարում գրանցվել է հեռացվածների՝ 207 և ազատումների 28 դեպք:

Այս շարժի մի մասը կապված է նաև ԳՊՀ ուսանողների և դասախոսների կողմից տարբեր փոխանակման ծրագրերի շրջանակներում արտերկյա ուսումնառության և վերադարձի հետ:

ԱԲՎ-ի կողմից համակարգվել և վերահսկվել են ԳՊՀ ուսանողների պրակտիկաների անցկացման և գնահատման գործընթացները՝ ուշադրության կենտրոնում պահելով և ամբիոններում քննարկելով գործընկեր կազմակերպությունների, ուսումնական և ոչ ուսումնական հաստատությունների կարծիքներն ու առաջարկությունները.

2013-2014 ուսումնական տարում պրակտիկաներին մասնակցած ուսանողներ.

Առկա բակալավրիատ	Ուսումնական	52
	Ուսումնամանկավարժական	23
	Արտադրական	60
	Նախաավարտական	37
Մագիստրատուրա	Գիտամանկավարժական	94
	Գիտահետազոտական	94
Հեռակա բակալավրիատ	Ուսումնական	147
ԸՆԴՀԱՆՈՒՐ		507

Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու տարում նույնպես, բուհը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողներին ուսման վարձի մասնակի փոխհատուցման» կարգի համաձայն՝ կատարել է ուսման վարձավճարների զեղչեր անապահովվածության տարբեր աստիճաններում գտնվող և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար:

2013-2014 ուսումնական տարում ԳՊՀ-ում կատարված ուսման վարձավճարների զեղչերի ընդհանուր չափը հետևյալն է.

Ուսուցման ձևը	Ուսանողների թիվը	Չեղչված գումարի չափը
Բակալավրիատ (առկա)	25	1.604.500
Մագիստրատուրա (առկա)	21	2.143.000
Չեռակա	39	1.992.000
ԸՆԴԱՄԵՆԸ	85	5.740.500

Ընդ որում՝ 85 ուսանողներից 16-ը ԳՊՀ աշխատակիցների երերելիսաներ են, որոնց վարձի զեղչի ընդհանուր գումարը կազմում է 1.320.000 դրամ: Եթե համեմատում ենք նախորդ տարվա հետ, ապա ստացվում է հետևյալ պատկերը՝ 2012-2013 ուսումնական տարում ԳՊՀ-ում զեղչվել էր 80 ուսանողի վարձ, որը կազմել էր 4.815.500 դրամ, այսինքն՝ 2013-2014 ուսումնական տարում մոտ 925.000 դրամով ավելացել է զեղչված գումարի չափը:

Այն, որ Գավառի պետական համալսարանը ակադեմիապես ազնիվ բուհ է և հուսալի գործընկեր, ապացուցում է այն անհատների, կազմակերպությունների և հիմնադրամների հովանավորությունը, որոնք տարիներ շարունակ եղել են համալսարանի կողքին և մասնակի կամ լրիվ փոխհատուցել են ԳՊՀ ուսանողների ուսման վարձավճարները:

2013-2014 ուսումնական տարում անվանական կրթաթոշակներ ստացած ուսանողների թիվը հետևյալն է.

Դ/Դ	Հովանավոր կազմակերպություն	ուսանողների թիվը
1.	«Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	58
2.	Թրփանճեան ընտանեկան հիմնադրամ	16
3.	Հայաստանի երիտասարդակալական հիմնադրամ	15
4.	Միավորված Մեթոդիստների Օգնության Կոմիտե (ԱՄՔՈՐ) հասարակական կազմակերպություն	12
5.	«ՕՐԱՆՇ ՀԱՅԱՍՏԱՆ» կազմակերպություն	10
6.	«Հայ համայնքը՝ հայ ուսանողությանը» հիմնադրամ	10
7.	Հայ կրթական հիմնարկություն	4
8.	Ազեան հիմնադրամ	2
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	163

Պետք է նկատել, որ 2012-2013 ուսումնական տարում այս թիվը եղել է 151, այսինքն՝ 12 ուսանողով ավելացել է կրթաթոշակառուների թիվը:

Հաշվետու տարում իրականացվել և ապահովվել է ԳՊՀ-ում ամփոփիչ ատեստավորման քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացները՝ արտաքին շահառուների և գործատուների մասնակցությամբ: Քննական լսարաններում տեղադրվել են ձայնագրող և տեսագրող սարքեր՝ անհրաժեշտության դեպքում ապահովելու բողոքարկման գործընթացները:

«ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի համաձայն՝ ամփոփվել և ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման քննությունների և ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2013-2014 ուսումնական տարում պատրաստվել և շրջանավարտներին են հանձնրվել 441 դիպլոմներ և 412 համաեվրոպական մոլուշի դիպլոմի հավելվածներ հայերենով և անգլերենով:

2013-2014 ուսումնական տարվա ԳՊՀ շրջանավարտների թիվը

<i>Ֆակուլտետ</i>		<i>ոչ գերազանցության</i>	<i>գերազանցության</i>	<i>ընդամենը</i>
Բնագիտական	բակալավր	10	8	18
	մագիստրոս	6	15	21
Բանասիրական	բակալավր	44	17	61
	մագիստրոս	9	13	22
Հումանիտար մասնագիտությունների	բակալավր	28	21	49
	մագիստրոս	14	11	25
Տնտեսագիտական	բակալավր	27	34	61
	մագիստրոս	9	13	22
ԸՆԴԱՄԵՆԸ	բակալավր	109	80	189
	մագիստրոս	38	52	90
Հեռակա	բակալավր	128	5	162
	դիպլ. մասն.	29	-	
ԸՆԴԱՄԵՆԸ		304	137	441

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՍ և 3-ԳՍ ձևաչափերով ամենամյա վիճակագրական հաշվետվությունները:

Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ՀՀ ԿԳՆ են ներկայացվել կիսամյակային քննաշրջանների հաշվետվությունները և տարեվերջյան ամփոփ հաշվետվությունը տեղափոխությունների վերաբերյալ՝ ըստ սահմանված ձևաչափի:

Ակադեմիական քաղաքականության վարչությունը սերտ համագործակցում է դեկանատների, ամբիոնների, արխիվի և ԳՊՀ մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

ԱԲՎ մասնագետները դեկանատների աշխատակիցների հետ միասին ստուգել են շրջանավարտների դիպլոմների հավելվածների գնահատականները՝ այդ կերպ խուսափելով թյուրիմացություններից և վրիպումներից:

Միաժամանակ ԱԲՎ-ն մասնակցել է ամբիոնների կողմից անցկացված դասալսումներին և քննարկումներին, որոնք հաշվետու տարում տարբեր կիսամյակներում անցկացվել են ամբիոնների վարիչների, փորձառու դասախոսների հետ միասին: Հատկապես կարևոր է այն փաստը, որ ամբիոնների վարիչները ուշադրության կենտրոնում են պահում երիտասարդ մասնագետներին՝ նրանց աջակցելով մեթոդական խորհրդատվություններով, որպեսզի եղած թերությունները շտկվեն և ապահովվի դասավանդման որակ: ԱԲՎ-ն վերանայել է նաև ամբիոնային տնտեսությունը՝ աջակցելով անհրաժեշտ խորհրդատվությամբ, և իրականացրել է ամբիոններում կուտակված ուսանողների անհատական, կուրսային, դիպլոմային աշխատանքների արխիվացման գործընթացը՝ համագործակցելով ամբիոնների և ԳՊՀ արխիվի հետ:

Ինչպես հանրապետության բոլոր բուհերի, այնպես էլ Գավառի պետական համալսարանի համար չափազանց կարևոր խնդիր է բուհ-դպրոց համագործակցության ամրապնդումը՝ կրթական համակարգի անընդհատ բարելավում և շարունակական կրթություն ապահովելու նպատակով: Հաշվետու տարում նույնպես կարևորվել են բուհ-դպրոց փոխայցելությունները: ԳՊՀ աշխատակիցներն ու ուսանողները այցելել են մարզի շուրջ 27 դպրոցներ՝ նրանց տրամադրելով դիմորդի ուղեցույցներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, գիտական պարբերականներ, աջակցել են ուսուցիչներին ուսումնամեթոդական խորհրդատվություններով և դասախոսություններով: Մեր կողմից անցկացվել են հարցումներ, որին մասնակցել են մարզի 27 դպրոցների շուրջ 454 աշակերտներ: Միաժամանակ համալսարանում կազմակերպվել են «Բաց դռների օր» աշակերտների համար. համալսարան են այցելել Նորատուսի թիվ 3 դպրոցի շուրջ 20 աշակերտներ՝ նրանց հնարավորություն է ընձեռվել հանդիպելու համալսարանի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, ծանոթանալու ամբիոններին, ուսանողական առօրյային:

Համալսարանում որակի ապահովման ներքին կառուցակարգերի ներդրմանն ու բարելավմանը, դասավանդման արդյունավետությանը միտված գործընթացները ապահովում է ԱԲՎ-ի կազմում գործող որակի բաժինը, որի կողմից պարբերաբար իրականացվող ուսանողական կիսամյակային և շրջանավարտների՝ ամենամյա հարցումները նպաստում են դասավանդման և գնահատման մեթոդների, կրթական ծրագրերի անընդհատ բարելավմանը և կոռուպցիոն ռիսկերի բացառմանը, ինչպես նաև կրեդիտային համակարգով նախատեսված գնահատման բազմագործոնային համակարգի վերանայմանն ու բարելավմանը: Հաշվետու տարում հարցումները կատարվել են ոչ միայն ավանդական (թղթային), այլ նաև էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով հարցումներին մասնակցել են 4 ֆակուլտետների մոտ 397 ուսանողներ, իսկ ավանդական հարցման արդյունքներով առաջին և երկրորդ կիսամյակներում մասնակցել են 5 ֆակուլտետների շուրջ 655 ուսանողներ: Միաժամանակ «ԳՊՀ-ում ստացած կրթություն-

նից շրջանավարտի բավարարվածության գնահատման» հարցաթերթիկը լրացրել են ԳՊԴ շուրջ 170 շրջանավարտներ: Ինչպես նկատում ենք, հարցումներին բավական մեծ քանակությամբ ուսանողներ են մասնակցել, ինչը խոսում է ԳՊԴ-ում ուսման որակի բարձրացմանը ուղղված աշխատանքները կարևորելու մասին: Որակի բաժինը սակայն նախատեսել է 2014-2015 ուսումնական տարում հարցումները առավել կոնկրետ և բազմաբովանդակ դարձնել: Ընդհանուր առմամբ պատկերը այսպիսին է.

2013-2014 ուսումնական տարում հարցումներին մասնակցած ուսանողներ

Հարցումներ	Ֆակուլտետներ	Ուսանողների թիվ
Էլեկտրոնային եղանակով հարցումներ	ԲՖ, ԲՆՖ, ՅՄՖ, ՏՖ	397
1-ին կիսամյակներում Ուսանողների գնահատող հարցումներ	ՀՈՒՖ 3-րդ և 4-րդ կուրսերում	135
1-ին կիսամյակում միջանկյալ քննությունների անցկացման և գնահատման մասին	ԲՖ, ԲՆՖ, ՅՄՖ, ՏՖ	270
1-ին կիսամյակում միջանկյալ քննությունների անցկացման և գնահատման մասին	ԲՖ, ԲՆՖ, ՅՄՖ, ՏՖ	250
Ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության մասին	ԲՖ, ԲՆՖ, ՅՄՖ, ՏՖ, ՀՈՒՖ	170
ԸՆԴԱՄԵՆԸ		1222

Հաշվետու տարում ԱԲՎ մասնագետները և որակի բաժնի աշխատակիցները ԳՊԴ եվրոպական ծրագրերի շրջանակներում ակտիվորեն մասնակցեցին մի շարք աշխատաժողովների, վերապատրաստումների, խորհրդատվական կուրսերի և կոնֆերանսների, ինչը շատ կարևորում ենք հատկապես միջազգային փորձի ուսումնասիրման և բենչմարքինգի անհրաժեշտ մեխանիզմների ներդրման, արտաքին շահառուների հետ հետադարձ կապերի գործիքների մշակման, ուսումնական գործընթացի կազմակերպման առավել օպտիմալ եղանակների օգտագործման առումներով:

ԱԲՎ 2014-2015 ուսումնական տարվա գործունեության ռազմավարական ուղղությունները.

ԱԲՎ 2013-2014 ուսումնական տարվա գործունեության համակողմանի ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց են տալիս, որ համալսարանի հնգամյա (2011-2016 թթ.) և տարեկան զարգացման ծրագրերի մի շարք ուղղություններում առկա մարտահրավերներին դիմակայելու և խոչընդոտները վերացնելու համար պետք է լինեն հստակ,

ոչ վերացական, կոնկրետ խնդիրների շեշտադրումներ և մշակվեն դրանք լուծելու կամ շտկելու համապատասխան մեխանիզմներ:

Ելնելով այս հանգամանքից՝ 2014-2015 ուսումնական տարում նախատեսում ենք կատարել հետևյալ աշխատանքները.

ԱԲՎ աշխատանքների շրջանակում.

1. Օգտագործել ներհամալսանական բոլոր հնարավորությունները (նաև լոկալ ցանց, համացանց) ԱԲՎ աշխատանքներն արդյունավետ և արագ կազմակերպելու, եղած խնդիրներին անմիջապես լուծում տալու, պատշաճ փաստաթղթաշրջանառություն ապահովելու ուղղությամբ, անընդհատ վերանայել և թարմացնել եղած տվյալների բազաները:

2. Առավել համակարգված և արդյունավետ կազմակերպել միջին մասնագիտական հաստատություններից ԳՊԴ-ում ուսունը շարունակողների, երկրորդ մասնագիտություն ստացողների, այլ բուհերից ԳՊԴ տեղափոխվածների և ներբուհական տեղափոխության արդյունքներով առաջացած առարկայական տարբերությունների հանձնան գործընթացները:

3. Շարունակել որակի բաժնի կողմից շրջանավարտների շրջանում կրեդիտային համակարգի գործոնների (անհատական աշխատանք, ակտիվություն) գնահատման և անցկացման ձևերի մասին հարցումների անցկացումը՝ հարցումների բովանդակությունը ավելի կոնկրետ և հստակ ձևակերպելով, քանի որ այս համակարգը անընդհատ բարելավման և տեղայնացման կարիք ունի, իսկ հարցումները այդ նպատակին հասնելու իրական գործիք են:

Ամբիոնների հետ կատարվող աշխատանքների շրջանակում.

1. Ակտիվացնել կապը ամբիոնների հետ, հաճախադեպ դարձնել դասալսումները, կազմակերպել փորձառու դասախոսների մոտ դասալսումներ և քննարկումներ երիտասարդ դասախոսների ներկայությամբ:

2. Դասավանդման մեթոդների և ուսման որակի ուղիների ու մեխանիզմների քննարկումներ կազմակերպել ամբիոններում (նաև ամբիոնների նիստերի շրջանակում), ուշադրություն դարձնել և արձանագրել դասախոսների առաջարկները, կիրառած նոր մեթոդները, այսպիսով նաև ուսման որակի ապահովման և բարելավման գործընթացներում ակտիվացնել ամբիոնների մասնակցությունը, որոնք այս գործընթացի հիմնական պատասխանատուներն են:

3. Օգտագործել ամբիոնների գիտական ներուժը՝ կարևոր տարելիցների և միջոցառումների մասին (Եղեռնի, նշանավոր գրողների կամ հասարակական գործիչների, նաև մարզի շրջանակներում հայտնի նշանավոր անձանց կյանքի և գործունեության մասին) բաց դասախոսություններ և քննարկումներ կազմակերպելով, նաև հընթացս արխիվացնել և ունենալ ԳՊԴ տեսադասախոսությունների դարան: Շարունակել «Համալսարանական ժամ» հաղորդաշարի շրջանակում այդ դասախոսությունները եթեր հեռարձակելու պրակտիկան՝ որպես գիտաճանաչողական կամ գիտահանրամատչելի նյութ, ինչը կնպաստի նաև ԳՊԴ-հանրություն կապերի ամրապնդմանը:

4. Բոլոնյան պահանջներին համահունչ՝ շարունակել առարկայական ծրագրերը արտաքին փորձաքննության ենթարկելու գործընթացը:

5. Ակտիվացնել մեթոդիավորումների աշխատանքները:

Համալսարանի համար կարևոր ռազմավարական խնդիր է համալսարան-դպրոց կապերի ամրապնդումը, ինչին ևս պետք է կոնկրետ լուծումներ տալ:

1. Անհրաժեշտ է ակտիվացնել դպրոցների և քոլեջների հետ համալսարանի համագործակցությունը, ոչ միայն դպրոցներ այցելելով, այլ նաև պետք է այցելություններ կատարել քոլեջներ՝ ներկայացուցչական դասախոսական կազմով, անհրաժեշտության դեպքում հանդես գալ դասախոսություններով և խորհրդատվություններով և հակառակը՝ նպաստել, որ քոլեջների դասախոսները և դպրոցների ուսուցիչները ԳՊՀ-ում դաս վարեն կամ տպագրվեն համալսարանի գիտական պարբերականում, քանի որ այսօր ուսուցիչները նույնպես վարկանիշավորման կարիք ունեն:

2. Պետք է ընտրել կոնկրետ թիրախային դպրոցներ, որոնց աշակերտական համակազմը ավելի մեծ է, և օգտագործելով համալսարանի հնարավորությունները՝ կազմակերպել նրանց այցելությունները համալսարան ոչ թե մեկ, այլ առնվազն երկու և ավելի անգամներ: ԱԲՎ-ի մասնագետները Հանրության և լրատվության բաժնի աշխատակիցների հետ միասին հարցումներ կանցկացնեն աշակերտների շրջանում և կկազմակերպեն հանդիպումներ համապատասխան մասնագիտական ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների շրջանակում.

1. Համալսարանական տարբեր ստորաբաժանումները համագործակցելով՝ պետք է ակտիվացնեն և կազմակերպեն ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքներն այնպես, որպեսզի ուսանողության շրջանում բևեռացում չառաջանա, ինչի արդյունքում ուսանողներից մի քանիսը ակտիվորեն բոլոր միջոցառումներին մասնակից են, մյուսները այդ գոծընթացներից հեռու են մնում: Անհրաժեշտ է նպաստել, որպեսզի ուսանողական խորհուրդները հանդես գան կոնկրետ առաջարկներով և ծրագրերով, ինչը կնպաստի ուսանողների ակտիվացմանը:

2. Պարբերաբար հայտարարել ազատ ստեղծագործողների մրցույթ և նրանց խրախուսել, ուսանողներին հանձնարարել գրել «Մեծ տան պատմություն», «Մի կյանքի պատմություն» կամ «Արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ» վերնագրերով ակնարկներ, որոնք կվերաբերեն հայ ընտանիքին և Հայոց ցեղասպանության 100-ամյակին: Այդ թեմաների շրջանակում կարելի է հատկապես Շահումյանից և Գետաշենից փրկվածների պատմածները նյութ դարձնել, որոնք այսօր դեռևս ականատեսների վկայություններ են և փաստագրական հարուստ տեղեկություններ են պարունակում: Լավագույն աշխատանքները (ակնարկ, էսսե, հուշ) տպագրել «Գեղամա աշխարհ» թերթում և հեղինակներին խրախուսել:

3. Ուսանողական առօրյան ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով գրադարանային ժամերին անհրաժեշտ է կազմակերպել գիտահանրամատչելի, արվեստին նվիրված, նաև գեղարվեստական ֆիլմերի դիտումներ և քննարկումներ:

4. Ուսանողներին ներգրավել «e-Lerning.gsu» և «E_Library.gsu» կայքերում նյութեր ներբեռնելու աշխատանքներում:

5. Անընդհատ վերանայել ԳՊՀ կանոնակարգերը՝ սեփական և միջազգային փորձի արդյունքները համադրելով:

Ա. Ա. Ղարիբյան

ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության պետ

ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրքային ունեցվածքը՝ 40.800, Բաժին՝ 2
Ընթերցող՝ 2.500, Ընթերցասարահ՝ 2
Հաճախում՝ 350.000, Աշխատողների թիվը՝ 3
Գրքատացք՝ 500.000

ԳՊՀ գիտական գրադարանը համալսարանի կարևոր կառուցվածքային ստորաբաժանումներից է, որի գործունեության հիմնական նպատակը անհրաժեշտ գիտական աղբյուրներով և մասնագիտական գրականությամբ գիտաուսումնական գործընթացի տեղեկատվական ապահովումն է:

Հաշվետու ժամանակահատվածում գրադարանում աշխատանքներ են իրականացվել ընթերցողների տեղեկատվական սպասարկման, ուսանողների շարժը դեպի գրադարան ակտիվացնելու ուղղությամբ:

Գրադարանի աշխատակիցները, ԳՊՀ ֆակուլտետների դեկանատների հետ համագործակցելով, կազմել են ժամանակացույց, որի համաձայն՝ դասերից ազատ ժամերին ուսանողները հնարավորություն են ունեցել գրադարանավարների ուղեկցությամբ ծանոթանալու գրադարանում, ընթերցասարահում և գրապահոցում առկա ամբողջ մասնագիտական գրականությանը: Այս կերպ ուսանողները տեղեկացել են նաև դասագրքերի, ձեռնարկների, մենագրությունների և ուղեցույցների նոր համալրումներին:

2013-2014 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ գրադարանը կատարել է գրքային ֆոնդի համալրման, մշակման, գտման, դասավորման, գրքի վերանորոգման աշխատանքներ: Համալրվել են գրադարանային ֆոնդի գրացուցակները, տեղեկատվական քարտարանները և գիտական հոդվածների մատենագիտական ցանկերը: Հետևողական աշխատանք է կատարվել գրադարանային հավաքածուների պահպանման և խնամքի ուղղությամբ:

Վերանորոգվել են գրապահոցի դարակաշարերը և վերադասավորվել են գրապահոցի գրքային հավաքածուները: Գրադարանային ֆոնդից գտվել և օտարվել է արդիականությունը կորցրած 143 միավոր գրականություն:

Կարևորվել է գրադարանային ֆոնդի համալրումը: ԳՊՀ գրադարանն իր գրքային ֆոնդում ունի 40.800 գրադարանային միավոր, որից.

- հայերեն՝ 18800 գիրք,
- ռուսերեն՝ 16350 գիրք,
- այլ լեզուներով՝ 5650 գիրք:

Հաշվետու տարում գրադարանի ձեռք բերած գրականության ընդհանուր թիվը կազմում է 643 միավոր, այդ թվում՝

- մասնագիտական դասագրքեր՝ 17,
- ուսումնական ձեռնարկներ՝ 110,
- մենագրություններ՝ 53,
- տեղեկագրքեր՝ 48,
- գիտական հանդեսներ և հոդվածների ժողովածուներ՝ 26,
- սեղմագրեր՝ 52,
- գեղարվեստական գրականություն՝ 84,
- այլ նյութեր՝ 253 միավոր:

Հաշվետու ուստարվա ընթացքում մուտքագրված 643 կտոր գրականությունից շուրջ 127 դասագրքերը և ուսումնական ձեռնարկները ձեռք են բերվել համալսարանի ֆինանսական միջոցներով: Համալսարանի կողմից պարբերաբար կատարվող գրքերի գնումների ընտրության ժամանակ հաշվի են առնվել ընթերցողների պահանջները, դասավանդող մասնագետների կարծիքները, ուսումնական ծրագրերի և համալսարանի կրթագիտական գործընթացների պահանջները: Իսկ համալրված գրքերի մյուս մասը արդյունք է անհատ հեղինակների, կազմակերպությունների, բուհերի նվիրատվության: ԳՊՀ գրադարանին գրքեր են նվիրել.

- ՀՀ Սփյուռքի նախարարությունը՝ 20 կտոր հայագիտական գրականություն,
- ԳՊՀ ռեկտորատը և դասախոսական կազմը՝ 139 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրքեր,
- ԱՄՆ դեսպանատան տեղեկատվական ռեսուրսների կենտրոնը՝ 100 անգլերեն գրքեր և խտասկավառակներ,
- ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավոր Դոննա Գրեննելլը՝ 84 անգլերեն գրքեր և խտասկավառակներ,
- «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գավառի տարածքային զարգացման կենտրոնը՝ 17 տնտեսագիտական գրքեր,
- ԵՊՀ հրատարակչությունը՝ 210 հայագիտական և գեղարվեստական գրքեր:

Ընթերցողների իրազեկման նպատակով ընթերցասրահում կազմակերպվել են նոր ստացված գրքերի 4 ցուցադրություն, որտեղ ներկայացվել են հայագիտության և հայ բանասիրության, ռուս բանասիրության, անգլերեն գեղարվեստական գրականության, տնտեսագիտության և իրավագիտության վերաբերյալ գրքերը: Անգլերեն ուսումնամեթոդական գրքերը և նրանց կից խտասկավառակները տրամադրվել են ԳՊՀ բանասիրության ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի լինգվաֆոնային կաբինետին:

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնին տրամադրվել է Ռ. Թադևոսյանի «Դրվագներ հայոց ռազմական պատմությունից» գրքին կից 17 մեծադիր ռազմապատմական քարտեզներ:

ԳՊՀ հիմնադրման 20-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում մեծամասշտաբ ցուցադրություն կազմակերպվեց ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի ճեմասրահում. ներկայացվեցին ԵՊՀ հրատարակչության լույսընծայած հայագիտական գրքերը: Ցուցադրություններից հետո գրքերը դասավորվել են գրապահոցում:

Գրադարանի կարևոր գործառույթն է գրքային ֆոնդի մշակումը: Ընթացիկ տարում կատարվել են մասնագիտական գրականության ստուգման, մաքրման, զտման, տեղաշարժի և գրքերի վերանորոգման աշխատանքներ: Գրապահոցի դարակաշարերի խիստ ծանրաբեռնվածության պատճառով նպատակահարմար գտանք գտել և օտարել 1990-2000 թվականների հրատարակված ՀՀ պաշտոնական տեղեկագրեր և ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրեր՝ հաշվի առնելով վերոնշյալ գրականության հասանելիությունը համացանցային պաշտոնական կայքէջերում: Այսուհետ գրապահոցի ազատված դարակաշարերի վերադասավորված մասնագիտական գրականությունը օգտագործվում և սպասարկվում է ավելի հեշտ և մատչելի: Իրականացվել է նաև գեղարվեստական գրականության այբբենական վերադասավորում և համակարգում: Շարունակվել են գրքային ֆոնդի համակարգչային մուտքագրումը, նկարագրումը և դասակարգումը՝ ըստ գրադարանային մատենագիտական դասակարգումների: Արդյունքում գրադա-

րանն ունի 15 մասնագիտություններին համապատասխան հետևյալ քանակի մասնագիտական գրքեր.

1. Հայոց լեզու և գրականություն՝ 2200,
2. Ռուսաց լեզու և գրականություն՝ 2010,
3. Անգլերեն լեզու և գրականություն՝ 1960,
4. Պատմություն՝ 1400,
5. Իրավագիտություն՝ 1420,
6. Մանկավարժություն և մեթոդիկա՝ 1080,
7. Կառավարում և ֆինանսներ՝ 2150,
8. Հաշվապահական հաշվառում՝ 2150,
9. Կենսաբանություն՝ 2400,
10. Դեղագործական քիմիա՝ 230,
11. Աշխարհագրություն՝ 900,
12. Բնապահպանություն և բնօգտագործում՝ 90,
13. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա՝ 2500,
14. Քարտեզագրություն և կադաստրային գործ՝ 57,
15. Սերվիս՝ 42:

Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակները տրամադրվել են համապատասխան ամբիոններին՝ կուրսային, անհատական և ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը պատրաստելիս՝ ուսանողներին գրականությամբ աջակցելու նպատակով:

Շարունակական աշխատանքներ են իրականացվել ԳՊՀ գրադարանի մասնագիտական-տեղեկատվական բազայի համակարգման ուղղությամբ: Գրադարանի խնդիրը կրթական գործընթացում արդի գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործմանը նպաստելն է, դասախոսների և ուսանողների, ինչպես նաև այլ շահակիցների գիտակրթական, տեղեկատվական կարիքներն ուսումնասիրելն ու դրանք հնարավորինս բավարարելն է: Ըստ այդմ, աշխատանքներ են կատարվել անհրաժեշտ տեղեկատվության պատվիրման, գրադարանային պաշարների էլեկտրոնային համակարգի մշակման և ներդրման, տեղեկատվական շտեմարանների ձևավորման, դրանց շարունակական թարմացման, ամբիոններին էլեկտրոնային կրթական ռեսուրսների տրամադրման և այլ ուղղություններով:

Գրադարանային տեղեկատվական համակարգը հարուստ է մատենագիտական ցանկերով, գիտական հոդվածների գրացուցակներով, որոնց համալրումն ու մշակումը տասնամյա աշխատանքի արդյունք է: Գրադարանում առկա շուրջ 20 անուն պարբերականներից, տարեգրքերից, գիտական և գիտագործնական հանդեսներից, գիտաժողովների նյութերից ու գիտական հոդվածների ժողովածուներից կազմված մատենագիտական ցանկերը պարբերաբար լրամշակվում են նոր հոդվածների ցանկերով և առաջարկվում ուսանողներին ու պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

Տարեցտարի համալրվում է նաև ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը: 2013 թ. հրատարակված N15 գիտական հոդվածների ժողովածուում տեղ գտած 117 գիտական հոդվածներով համալրված մատենագիտական ցանկը այժմ արդեն պարունակում է 1141 հոդված:

ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը, բացի գրադարանում առկա թղթային տարբերակից, տեղադրված է նաև ԳՊՀ www.gsu.am

պաշտոնական համացանցային կայքի «Գրադարան» հատվածամասում՝ մատչելի լինելով նաև էլեկտրոնային եղանակով:

Հետևողական ջանքեր են գործադրվել ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի ձևավորման ուղղությամբ: 2009 թվականից սկսած՝ գրադարանի աշխատակազմը ձեռնարկել էր էլեկտրոնային գրադարանի ստեղծման աշխատանքներ՝ ինտերնետային կայքերից բեռնելով շուրջ 300 էլեկտրոնային գիրք: Այս գրքերի դասակարգումը, նկարագրումը և նոր գրքերի ներբեռնման աշխատանքներն ընթացքի մեջ էին 2009-2010, ինչպես նաև հաջորդ՝ 2010-2011 ուսումնական տարիների ընթացքում, սակայն էլեկտրոնային գրադարանի գործածումը և շահագործումը պահանջում էր գրադարանի գործառույթների էլեկտրոնային վարման ինքնաշխատ համակարգ, համապատասխան ծրագրային, ինչպես նաև տեխնիկական ապահովում: Նշված միջոցներին չտիրապետելու, ինչպես նաև էլեկտրոնային գրականությունը ուսանողներին էլեկտրոնային կրիչներով տրամադրելու և համակարգչի անվտանգության համակարգում խափանումներ առաջացնելու պատճառով էլեկտրոնային գրադարանի գործարկումը կասեցվեց:

ԳՊՀ կառավարման խորհրդի 2013 թ. փետրվարի 15-ի նիստի ընթացքում ԳՊՀ խորհրդի նախագահ, ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի հանձնարարակններից էր էլեկտրոնային գրադարանի ստեղծումը: Ի կատարումն վերոնշյալ հանձնարարականի՝ 2013-2014 ուսումնական տարվա ընթացքում մեկնարկվեցին «E.Library.GSU» էլեկտրոնային գրադարանի մշակման աշխատանքները:

ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորողների և ԳՊՀ գրադարանի աշխատակիցների կողմից ձևավորվեց աշխատանքային խումբ: Գրադարանի աշխատակիցների կողմից կազմվեցին «E.Library.GSU» համակարգում ներառված գրքերի կարգացանկերն ու ենթակարգացանկերը: Առաջնորդվելով ԳՊՀ-ում դասավանդվող առարկայական ծրագրերով՝ համացանցից ներբեռնվեցին առայժմ ԳՊՀ ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի պահանջները բավարարող բուհական մասնագիտական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, հայագիտական աշխատություններ և մենագրություններ: Էլեկտրոնային մասնագիտական գրականության համալրման նպատակով գրադարանի աշխատակազմը համագործակցում է բոլոր ֆակուլտետների ամբիոնների հետ՝ առաջարկելով ամբիոններում առկա էլեկտրոնային գրականության կենտրոնացում «E.Library.GSU» համակարգում: Էլեկտրոնային գրադարանի պաշարների համալրման գործում աջակցություն են ցուցաբերել ԳՊՀ ռեկտորատը, ԳՊՀ դեկանատները, անհատ դասախոսները, և, իհարկե, «E.Library.GSU» համակարգը վարողները:

Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի նախաձեռնած «Շրջիկ դասագրքեր» ծրագրի ներկայացուցիչների՝ Գավառի պետական համալսարան այցից հետո ԳՊՀ ուսանողներին և պրոֆեսորադասախոսական անձնակազմին ընձեռվեց նաև ԱՄՆ դեսպանատան պաշտոնական կայքէջի տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի էլեկտրոնային շտեմարանից օգտվելու հնարավորությունը: Ինչպես վերոնշյալ էլեկտրոնային շտեմարանի, այնպես էլ համաշխարհային նշանակության այլ խոշոր էլեկտրոնային գրադարանների հղումները տեղադրվել են «E-library.GSU» էլեկտրոնային գրադարանի կայքում:

ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի գործարկումն ու էլեկտրոնային գրքերի նոր համալրումները կկազմեն հաջորդ ուսումնական տարվա մեր ամենօրյա աշխատանքների կարևոր մասը:

ԳՊՀ գրադարանի համար առաջնահերթություն է համագործակցային ծրագրերի իրականացումը: ԳՊՀ գրադարանը համագործակցում է Ազգային գրադարանի հետ: Լինելով «Հայաստանի գրադարանային ասոցիացիայի» անդամ՝ ԳՊՀ գրադարանը ամեն տարի ներկայացնում է հաշվետվություն գրադարանային հագեցվածության մասին: Ներկայացված ցուցանիշները հրատարակվում են ՀՀ մշակույթի նախարարության Հայաստանի ազգային գրադարանի «Հայաստանի գրադարանները» մատենաշարում՝ ՀՀ այլ գրադարանների ցուցանիշների հետ, վիճակագրական վերլուծությամբ:

Գրադարանը համագործակցում է նաև Գեղարքունիքի մարզային գրադարանի, Գավառի քաղաքային գրադարանի և այլ բուհերի գրադարանների հետ: ԳՊՀ գրադարանից գրքեր են տրամադրվել ԳՊՀ Վարչամ Ավետյանի անվան պատմության թանգարանին և համալսարանի հյուրերին:

Գրադարանում պարբերաբար կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, որոնք միտված են ուսանողների շրջանում գրքի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելուն: 2013-2014 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում գրադարանում անցկացված թեմատիկ միջոցառումները նվիրված էին Գիրք նվիրելու օրվան և Մայրենի լեզվի օրվան: Միջոցառումների մասնակիցներն էին ԳՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի ուսանողները: Կազմակերպելով գրքերի նվիրատվություն և քննարկումներ՝ ուսանողները խթանեցին ընթերցասրահում նոր ստացված գրականության մասին տեղեկատվության տարածմանը: Նշված միջոցառումները նպաստեցին ինչպես գրքերի տացքի, այնպես էլ՝ գրադարան ուսանողների հաճախելիության բարձրացմանը:

2013 թ. և 2014 թ. նոյեմբեր ամսին Գավառի մանկական զբոսայգում կազմակերպված «Բերք ու բարիքի փառատոնին» բուհը ներկայացավ իր յուրօրինակ «բերքով»՝ ԳՊՀ տաղավարում ցուցադրելով համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հրատարակությունները: Միջոցառման ընթացքում գրքերի և գիտական ուսումնասիրությունների նկատմամբ առաջացած մեծ հետաքրքրությունը ևս առիթ էր մեր տարածաշրջանում առկա գիտական ներուժը՝ հանձնելու ԳՊՀ դասախոսների, ներկայացնելու համար: Իսկ ԳՊՀ գրադարանի աշխատակիցները համագործակցության նոր եզրեր գտան Գավառի այլ կրթական ու մշակութային հաստատությունների՝ դպրոցների, թանգարանի և գրադարանների ներկայացուցիչների, մասնավորապես՝ գրադարանավարների հետ:

ԳՊՀ գրադարանի զարգացման հիմնական ուղղությունները

ԳՊՀ գրադարանը կարևորում է ինչպես տեղեկատվական աղբյուրների շարունակական արդիականացումը, այնպես էլ գրքային պաշարների և էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների նպատակային օգտագործումը: Սակայն բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության գիտաուսումնական պահանջների բավարարման համար անհրաժեշտ է նաև գրադարանի և գրապահոցի համար նոր գրապահարանների, դարակների ու դարակաշարերի ձեռքբերում, գրադարանային գործառույթների ավտոմատացում, տեղեկատվական ռեսուրսների պահպանման, տրամադրման և կառավարման համակարգի բարեփոխում:

ԳՊՀ գրադարանային ֆոնդի հագեցվածությունը բավարարում է պահանջները՝ բուհում ուսումնական ծրագրերն իրականացնելու համար: Մեկ ուսանողին ընկնող գիտական գրականության ծավալը մոտ 2,7 է, ինչը մոտ է միջազգային չափորոշիչներին:

Եվ, չնայած հաշվետու ուսումնական տարվա ընթացքում արդեն կատարված գրադարանային ֆոնդի զտմանը, ֆոնդում դեռևս առկա է օտարման ենթակա գրականություն: Գրապահոցում նմանատիպ աշխատանքները կնպաստեն գրադարանային գործի հստակ, օպերատիվ և որակյալ կազմակերպմանը:

Այսպիսով, գրադարանը աշխատում է հնարավորինս լավ կատարել Գավառի պետական համալսարանի գիտական-տեղեկատվական կենտրոնի իր առաքելությունը:

*Ն. Ֆ. Պետրոսյան՝
ԳՊՀ գրադարանի վարիչ*

ԳՊՀ ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի Վարշամ Ավետյանի անվան պատմության թանգարանը 2013-2014 ուսումնական տարում շարունակական աշխատանքներ է իրականացրել հավաքչական, ցուցադրության, ինչպես նաև կրթական բնագավառներում՝ պարբերաբար կազմակերպելով նաև էքսկուրսիոն և ուսումնական պարապմունքներ:

Հաշվետու ժամանակահատվածում թանգարանին հանձնված նոր նյութերը, ըստ ընդունված կանոնակարգի, իրենց տեղն են գտել թանգարանի ֆոնդերում, առաջնորդվելով հիմնադիր տնօրեն Վ. Ավետյանի կողմից ընդունված մշակման սկզբունքներով և ցուցումներով: Դրանք տեսակավորվել և մշակվել են՝ ըստ թանգարանի համապատասխան ֆոնդերի (այն է՝ հնագիտական, գիտական, անհատական-անվանական և օժանդակ):

Համալրվել է գրքային ֆոնդը, ինչպես նաև աշխատանք է տարվել ցուցադրական բաժնի ներկայացման և դրա թարմացման ուղղությամբ: Բացվել է նոր հուշ-անկյուն:

Համապատասխանաբար, կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Թարմացվել է թանգարանային ցուցադրությունը,
- Բացվել է ակտերի նոր՝ 2014 թվականի հանձն-ընդունելության ակտերի հերթական մատյան (առկա են 2012 և 2013 թվականների մատյանները):
- 2013 թ. վերջին՝ կազմվել է 8 ակտ 43 նյութով:
- 2014 թ. կազմվել է 34 ակտ՝ 183 նյութով:

Արդյունքում, 2013-2014 ուսումնական տարում ընդամենը 42 ակտի հիման վրա, 226 նոր նյութերով համալրվել է թանգարանի ֆոնդը:

Ընդհանուր, թանգարանի հիմնադրումից առկա հաշվառված նյութերի ամբողջական համալրմամբ ստացվում է.

- ա) 2012-2013 ուս. տարի՝ - 2570 նյութ
- բ) 2013-2014 ուս. տարի՝ - 226 նյութ:

Թանգարանային նյութի ընդհանուր և ամբողջական քանակն է 2796: Ակտերի ընդհանուր թվաքանակը՝ 99:

Յուրաքանչյուր նյութ ձեռք բերելիս, կամ հանձնելիս՝ պարտադիր կերպով կազմվել է հանձնման-ընդունման ակտ, որը կնքվում է ԳՊՀ ռեկտորի կնիքով և ստորագրությամբ (ինչպես նաև հաստատվում ընդունողի և նվիրատուի ստորագրությամբ):

Գիտական մշակման են ենթարկվել թանգարան հանձնված բոլոր նյութերը: Յուրաքանչյուրի վրա առկա է ծածկագիրը, համարը, բաժինը, ֆոնդը և ակտի համարը:

Պարբերաբար կատարվել են ցուցադրվող նյութերի հաշվառում, ստուգում, ֆոնդային համարների վերստուգում, պիտակների փակցում, ըստ ԳՊՀՊԹ ծածկագրի, ինչպես նաև իրականացվել են դրանց խնամքի և պահպանման աշխատանքներ:

Ցուցադրվող յուրաքանչյուր բաժին ունի եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) բացատրագրեր: Դրանք և պահպանները նույնպես համարակալված են:

Նյութերի համար նախապես բացված մատյանները (ԳՊՀՊԹ Օժանդակ ֆոնդի համար, Անհատական ֆոնդի մատյան, Գրքերի մատյան), շարունակվում են լրացվել, ըստ հերթական համարի և նյութի, ընդունված սկզբունքի համաձայն:

Համալրվել են ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի և ԳՊՀ պատմության թանգարանի հիմնադիր տնօրեն Վարշամ Ավետյանի անձնական ֆոնդերը և թանգարանում նրանց անձնական իրերը ներկայացնող ցուցադրությունները:

Բացվել է նոր ցուցադրություն (հուշ-անկյուն)՝ նվիրված անվանի գիտնական, ԽՍՀՄ Աշխատանքային կրկնակի հերոս, կոնստրուկտոր Սամվել Քոչարյանցին (ցուցադրություն 14): Համապատասխանաբար, Օժանդակ ֆոնդի մատյանում բացվել է բաժին Սամվել Քոչարյանցի անունով:

Որոշ նյութերով համալրվել են դրամագիտական, ազգագրական, գրքային հավաքածուները, օժանդակ ֆոնդը, որոնք ներկայացված են առանձին թարմացված բաժիններով, ինչպես նաև լուսանկարներով, համալսարանի պատմությանը, գիտական հրատարակություններին վերաբերող նյութերով:

Թանգարանը ներկայացնող 18 բաժինները պահպանվել են:

Թանգարանը համալրվել է քարտեզագրական նյութերով:

Շարունակվում է պահպանվել և այցելուների գրառումներով հարստանալ թանգարանի տպավորությունների մատյանը, ինչը կարևորվում է համալսարանի և թանգարանի պատմական ժամանակագրության պահպանման համար:

Թարմացվել է թանգարանի ցուցադրության համառոտ էքսկուրսիոն պլանի նկարագիրը (ըստ ավելացված ցուցադրության):

2013-2014 ուսումնական տարվա ընթացքում թանգարան է այցելել 400-ից ավելի մարդ, այդ թվում՝ համալսարանի ուսանողներ, դասախոսներ, գիտաշխատողներ, ինչպես նաև համալսարանում կազմակերպված միջոցառումների մասնակիցներ, Գեղարքունիքի մարզային դպրոցների աշակերտներ, հայ և օտարերկրյա բարձրաստիճան հյուրեր (դեսպաններ և հյուպատոսներ), նաև հյուրեր Սփյուռքից:

Թանգարանում կազմակերպվել և անցկացվել են ինչպես առանձին դասաժամեր, դասախոսություններ, այնպես էլ սեմինար-գործնական աշխատանքներ:

Բացատրական էքսկուրսիոն աշխատանք է տարվել անհատ այցելու հյուրերի համար, նաև դպրոցականների հետ. այդպիսով ամրապնդելով դպրոց-բուհ կապը: Վերջինս կարող է նպաստել դպրոցներում՝ դպրոցական հայրենագիտական թանգարաններ ստեղծելու աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև բարձրացնել հայրենագիտական ճանաչողությունը:

Համալրվել են թանգարանի հիմնադիր տնօրենի գիտական հրատարակությունների անհատական հավաքածու-թղթապանակները:

Նյութերը պարտադիր կարգով՝ ժամանակի ընթացքում ենթարկվել են մշակման, նաև գիտական մշակման:

Կատարվել է հավաքչական աշխատանք՝ թանգարանի նյութերը համալրելու նպատակով:

Համալրվել է գրքերի և մամուլի բաժինը: Առանձին ուշադրությամբ հավաքվել է ՀՀ ՊՆ «Հայ զինվոր» շաբաթաթերթը:

Ժամանակի ընթացքում կշարունակվեն նյութերի համալրողական աշխատանքները և թանգարանը կհարստացվի այլ արժեքավոր ցուցանմուշներով, սակայն եղած նյութերն էլ պատշաճ կատարում են ուսուցողական և հայրենագիտական իրենց դերը՝ բա-

վականաչափ նյութ տալով դրանց հետ հաղորդակցվող այցելուին: Նկատելի է ուսանողների ջանքերը նյութերի համալրման աշխատանքներում:

Թանգարանն աշխատում է բարեխղճորեն կատարել Գավառի պետական համալսարանի գիտական-տեղեկատվական և ուսումնա-դաստիարակչական կենտրոնի իր առաքելությունը և ընդլայնել իր աշխատանքային գործունեությունը՝ ի նպաստ այցելուների, ուսանողների հայրենաճանաչողության և հայրենասիրական ոգու ամրապնդման:

Մ. Ս. Քեչիշյան

*ԳՊՀ Վարչամ Ավետյանի անվան պատմության
թանգարանի գիտաշխատող*

ԳՊՀ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱԿԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժինը համակարգում է հասարակության և լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքները:

Հիմնադրման օրվանից բաժինը սերտորեն համագործակցում է ԳՊՀ ուսանողական խորհրդի, Ուսանողական գիտական ընկերության, Ուսանողական ծրագրային թիմի, Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, բուհի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ, կազմակերպում դիմորդների և այլ շահառուների հետ տարվող աշխատանքները:

Բաժինն առաջնորդվում է ԳՊՀ հանրային կապերի հայեցակարգով, որում ամրագրված են ԳՊՀ նպատակներն ու խնդիրները, Հանրային կապերի և լրատվության բաժնի աշխատանքի գործունեության ուղղությունները, ինչպես նաև հանրային կապերի ապահովման ու համակարգման կառուցակարգերն ու սկզբունքները:

Հաշվետու տարում Հանրության հետ կապերի և լրատվության բաժնում իրականացվել են ներքոհիշյալ միջոցառումները.

- ✓ ԳՊՀ-ում կազմակերպվող միջոցառումներն ավելի համակարգված ու համակողմանի լուսաբանելու նպատակով՝ հետևողական աշխատանք է կատարվել «Գավառի պետական համալսարանում հանրային նշանակությամբ միջոցառումների կազմակերպման, և դրանց մասին իրազեկման և հասարակության հետ տարվող աշխատանքների» կանոնակարգի դրույթների կիրառման և իրազեկման հայտերը ԳՊՀ ստորաբաժանումների կողմից ճիշտ ժամկետներում ու պատշաճ կերպով լրացնելու ուղղությամբ:
- ✓ Պարբերաբար համալրվել է ԳՊՀ www.gsu.am պաշտոնական կայքի տեղեկատվությունը:
- ✓ ԳՊՀ հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման նպատակով թարմացվել է բուհի պաշտոնական կայքի փաստաթղթերի բաժինը:
- ✓ Թարմացվել և տպագրության են տրվել ԳՊՀ այցեքարտերը, թղթապանակները, գրիչները, տեղեկատվական թերթիկները:
- ✓ Կազմակերպվել է ԳՊՀ էլեկտրոնային ներքին փաստաթղթաշրջանառությունը:
- ✓ Էլեկտրոնային տարբերակով ԳՊՀ ողջ աշխատակազմին հղվել են համապատասխան տոների առթիվ շնորհավորանքներ:
- ✓ Հայաստանյան տպագիր և էլեկտրոնային մամուլում տեղ գտած բուհին վերաբերող տեղեկատվությունն առանձնացվել և խմբավորվել է «Մամուլը ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածուում:
- ✓ ԳՊՀ միջոցառումների ընթացքում լուսանկարված էլեկտրոնային լուսանկարներն արխիվացվել են:
- ✓ Կազմվել է ԳՊՀ հեռախոսահամարների տեղեկատու և բաժանվել ԳՊՀ կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներին:
- ✓ Վերախմբագրվել են ԳՊՀ առաջին կուրսեցու ուղեցույցը, ԳՊՀ տեղեկատվական թերթիկները և Դիմորդի, Առաջին կուրսեցու հարցաթերթիկները:
- ✓ Գավառի պետական համալսարանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Արցախի պետական համալսարանի միջև կնքվել է համագործակցության պայմանագիր:

- ✓ Համալսարանում կազմակերպվել է Քեսաբում տեղի ունեցած ռազմական գործողությունների դադարեցմանը և քեսաբահայերի իրավունքների պաշտպանությանն ուղղված ստորագրահավաք:
- ✓ ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ համատեղ իրականացվել է «ԳՊՀ ամենակտիվ ֆակուլտետը վիրտուալ տիրույթում» մրցույթը:
- ✓ Հանրության հետ կապերի և լրատվության բաժինը ստեղծել է բուհում սովորող սոցիալապես անապահով և ծնողազուրկ ուսանողների բազա, որով առաջնորդվելով՝ համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողները ներգրավվում են տարբեր կրթաթոշակային ծրագրերում: Հաշվետու տարվա վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

2013-2014 ուսումնական տարվա ընթացքում Հանրության հետ կապերի և լրատվության բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- ✓ զանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանք,
- ✓ համագործակցություն կրթական ոլորտի պետական և հասարակական կազմակերպությունների հետ,
- ✓ դիմորդների հետ տարվող աշխատանքներ,
- ✓ շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի գործունեության կազմակերպում:

Ջանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանքներ

- ✓ Մարզային և հանրապետական լրատվամիջոցների, ՀՀ հեռուստաընկերությունների և լրատվական կայքերի կողմից պարբերաբար լուսաբանվել են ինչպես ներբուհական, այնպես էլ արտահամալսարանական միջոցառումները:
- ✓ ԳՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվությունն էլեկտրոնային փոստով ուղարկվել է հայաստանյան լրատվամիջոցների հասցեներով: ԳՊՀ գործունեությանը պարբերաբար անդրադարձել են մի շարք թերթեր և էլեկտրոնային պարբերականներ:
- ✓ Շարունակվում է ակտիվ համագործակցությունը Գեղարքունիքի մարզի «Գեղամա մեդիա հոլդինգ» ՍՊԸ-ի, Գավառի «Քյավառ», Սևանի «STV1» հեռուստաընկերությունների, «Գեղամա աշխարհ» թերթի և «Արմենպրես» լրատվական գործակալության հետ:
- ✓ Հետևողականորեն կատարվել են Գավառի պետական համալսարանի և «Քյավառ» հեռուստաընկերության միջև կնքված համագործակցության հուշագրի դրույթները:
- ✓ Շարունակվում է «Գեղամա» հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակվել «Համալսարանական ժամ» հաղորդաշարը: Հաշվետու ժամանակահատվածում, անհրաժեշտությունից ելնելով, հաղորդման ձևաչափում որոշակի փոփոխություններ են կատարվել: Մշակվել է հաղորդաշարի մեկնարկի նոր տարբերակ: Բոլոր տեսագրությունները տեղադրվել են ԳՊՀ համացանցային պաշտոնական վիդեոբլոգում (www.youtube.com/GavarStateUniversity):
- ✓ Հայաստանյան տեղեկատվական ծառայություններին տրամադրվել են ԳՊՀ պատմությանն ու գործունեությանը, վարչական ու ֆակուլտետային ստորաբաժանումներին, ինչպես նաև մատուցվող կրթական ծառայություններին վերաբերող ամբողջական տեղեկատվություն:

- ✓ «AMHE – Բարձրագույն կրթությունը Հայաստանում» պորտալում պարբերաբար տեղադրվել են ԳՊՀ-ին վերաբերող նորություններ՝ անգլերեն տարբերակով:

Համագործակցություն կրթական ոլորտի պետական և հասարակական կազմակերպությունների հետ

- ✓ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման ամենամյա ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի ավելի քան 20 ուսանողներ հաշվետու տարվա հուլիս և օգոստոս ամիսներին Հանքավանի «Հասմիկ» և «Լուսաբաց» ճամբարներում աշխատել են որպես ջոկատավարներ:
- ✓ Կազմվել և համապատասխանաբար ուղարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանված ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շենը հաղթահարած ուսանողների անվանացանկը:
- ✓ Հավաքագրվել, Գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացվել ԳՊՀ 15 լավագույն ուսանողի տվյալներ, ովքեր որպես կազմակերպիչներ մասնակցել են 2014 թվականի կենտրոնացված միասնական քննություններին:
- ✓ Հաշվետու ուսումնական տարում ստեղծվել և ամրապնդվել են համագործակցության եզրերը «Արինսայթ» հետազոտական-խորհրդատվական ընկերության, Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի, Հայաստանում Եվրոպական Միության Կենտրոնի, Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի, ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի, «Փոփոխությունների թատրոնի», Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Գեղարքունիքի մարզային գրասենյակի, «Բաց հասարակության հիմնադրամներ. Հայաստան», «Միջազգային հետազոտությունների և փոխանակման խորհուրդ» (Այռեքս), «Իրական աշխարհ, իրական մարդիկ» և այլ հասարակական կազմակերպությունների հետ, որոնց հետ համատեղ ԳՊՀ ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, ուսուցողական և ինտերակտիվ սեմինար-քննարկումներ, դասախոսություններ, ֆիլմի դիտումներ և մրցույթներ:
- ✓ Եվրոպական Միության «Երիտասարդությունը շարժման մեջ. համագործակցություն ԵՄ հարևան երկրների հետ» նախաձեռնության շրջանակում Հայաստանի ուսուցման ազգային կենտրոնի և Գերմանիայի համայնքային (գյուղական շրջաններ) մեծահասակների կրթության պետական կազմակերպության կողմից իրականացվող «Երիտասարդները որպես գյուղական համայնքների շարժիչ ուժ» ծրագրի վերաբերյալ կատարվել է իրազեկում ԳՊՀ գերմաներենին տիրապետող ուսանողների շրջանում:
- ✓ Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են փոխայցելություններ ՀՀ պաշտպանության նախարարության 2-րդ բանակային կորպուսի զորամասեր և Գավառի պետական համալսարան: «Գիրք գինվորին» և «Նամակ գինվորին» ակցիաների շրջանակում ԳՊՀ ուսանողները գրքեր ու նամակներ են հավաքագրել, որոնք ԳՊՀ պատվիրակությունը հանձնել է 2-րդ բանակային կորպուսի զորամաս:

սերուն ծառայող զինվորներին: Համագործակցության շրջանակում կնքվել է եռակողմ հուշագիր Գավառի պետական համալսարանի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և ՀՀ պաշտպանության նախարարության 2-րդ բանակային կորպուսի միջև:

- ✓ Շարունակվել է համագործակցությունը Գեղարքունյաց թեմի առաջնորդարանի երիտասարդական թևի հետ:
- ✓ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության և բուհի համագործակցության արդյունքում ԳՊՀ-ում կազմակերպվել է «Որոնողական աշխատանքների և տարհանման իրականացում երկրաշարժի հետևանքով վնասված բարձրահարկ շենքերում» թեմայով ուսումնալարժություն:
- ✓ Շարունակվել է համագործակցությունը Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի հետ: Ասոցիացիայի կողմից հայտարարված «Լավագույն ուսանող-2013» հանրապետական ուսանողական մրցույթին կազմվել է Գավառի պետական համալսարանի հայտատուի՝ ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող, բուհի շրջանավարտ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ասպիրանտ Վարազդատ Ավետիսյանի՝ մրցույթի պահանջներին համապատասխան փաստաթղթերի փաթեթը: Վարազդատ Ավետիսյանը ճանաչվել է տարվա լավագույն ուսանող:
- ✓ «Վորլդ Վիժն. Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության հետ համատեղ իրականացվել է «Գավառն առանց աղբի» ծրագիրը, որի շրջանակում Գավառի դպրոցներում կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ, ֆլեշմոբ և ԳՊՀ կենսաբանության լաբորատորիայի համար ձեռք են բերվել մանրադիտակներ:
- ✓ Մարզի գրադարանների հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ և գրական ցերեկույթներ:
- ✓ Ապահովվել է ԳՊՀ ուսանողների պատշաճ մասնակցությունը «Բազե-2013» և «Բազե-2014» համահայկական երիտասարդական հավաքներին, որոնցից ԳՊՀ թիմը վերադարձել է հաղթանակներով:
- ✓ «Մենք երգում ենք Առնո Բաբաջանյան» երրորդ հանրապետական ուսանողական երգի մրցույթ-փառատոնին մասնակցել և երրորդ պատվավոր հորիզոնական է զբաղեցրել Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի Անգլերեն լեզու և գրականություն բաժնի ուսանողուհի Արփինե Խանդանյանը:
- ✓ Ի պատասխան «Կապուտակ Սևան» հասարակական կազմակերպության հարցման՝ տրամադրվել է տեղեկատվություն ԳՊՀ հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի շրջանավարտների վերաբերյալ:
- ✓ Ի պատասխան Հայաստանի երիտասարդական հիմնադրամի համապատասխան գրության՝ հստակեցվել և կազմակերպությանը տրամադրվել է տեղեկատվություն ԳՊՀ բակալավրիատում երկու և ավելի երեխա ունեցող ուսանողների թվի վերաբերյալ:

Դիմորդների հետ տարվող աշխատանքներ

- ✓ Կազմվել և ստորագրվել են մարզի ավելի քան 20 դպրոցների հետ համագործակցության հուշագրեր:

- ✓ Դպրոց-բուհ համագործակցության շրջանակում կազմվել են դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հարցաթերթիկներ, հաշվի են առնելով ԳՊՀ ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկությունները: Դրանք մշակվել և առաքվել են դպրոցներ:
- ✓ ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից կատարվել են այցելություններ Գեղարքունիքի մարզի ավագ, ինչպես նաև միջնակարգ և հիմնական դպրոցներ:
- ✓ Կազմակերպվել են նաև փոխադարձ այցելություններ և շրջայցեր Գավառի պետական համալսարան:
- ✓ Պատրաստվել և տպագրվել է ԳՊՀ դիմորդի ուղեցույցը:

Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի հետ կապված աշխատանքներ

- ✓ Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի կայքում (www.career.gsu.am) ներկայացված է շրջանավարտների առցանց բազա՝ որոնման ու դասակարգման բազմազան հնարավորություններով: Բազայում մշտապես կատարվել են համալրման աշխատանքներ:
- ✓ Կայքի «Հղումներ» բաժնում, ինչպես նաև «Facebook» սոցիալական ցանցի տիրույթում ստեղծված համապատասխան հատվածամասում (<https://www.facebook.com/groups/373163172745612/>) պարբերաբար տեղադրվել են թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն:
- ✓ Բուհ-գործատու կապն ամրապնդելու նպատակով կազմակերպվել են մարզի գործատուների հետ հանդիպումներ:
- ✓ Կազմվել է շրջանավարտների գրանցման հարցաթերթիկ, որոնք լրացնում են ԳՊՀ շրջանավարտները, ինչպես նաև բակալավրի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողները:

ԳՊՀ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒ

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի զարգացման հայեցակարգում ներառված են այն առաջնային խնդիրները, որոնք միտված են հանրության շրջանում ԳՊՀ դրական իմիջի ձևավորմանը, հեղինակության բարձրացմանը, ինչպես նաև գիտելիքի ու կրթության հանրայնացմանը:

Համալսարանի հանրային կապերի արդյունավետ իրականացումը ենթադրում է համալսարանական բոլոր ստորաբաժանումների ակտիվ համագործակցություն և փոխհամաձայնեցված աշխատանք:

Համալսարանի հանրային կապերի աշխատանքների իրականացման գործընթացում էապես կարևորվում է ուսանողների ներգրավվածությունը տարաբնույթ կամավորական աշխատանքներում և պրակտիկաներում:

Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի աշխատանքներն ուղղված են համալսարանի առջև ծառայած մի շարք խնդիրների լուծմանը.

- ✓ Համալսարանի հեղինակության (դրական իմիջի) ձևավորում և պահպանում:
- ✓ Համալսարանի գործունեության հրապարակայնության ու թափանցիկության ապահովում:
- ✓ Ներհամալսարանական տեղեկատվական հաղորդակցության ապահովում:
- ✓ Ներհամալսարանական (կորպորատիվ) մշակույթի և ավանդույթների ձևավորում ու զարգացում:
- ✓ Համալսարանի՝ որպես կարևորագույն կրթական, գիտական, մշակութային և հասարակական առաջատար կառույցի, առաքելության արդյունավետ և տեսանելի իրականացում:
- ✓ Համալսարանի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի մասին ճշգրիտ տեղեկատվության ապահովում և աջակցություն բուհի սոցիալական կորպորատիվ պատասխանատվության ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
- ✓ Աշխատանքների իրականացում համալսարանի մասին դրական հասարակական կարծիքի ու բարձր վարկանիշի ձևավորմանն ուղղությամբ՝ ներհամալսարանական ընթացակարգերի, աշխատառճի, ներքին էթիկական նորմերի, վարվելակերպի և այլ խնդիրների վերաբերյալ մեթոդական ուղեցույցերի մշակմանն ու ներդրման և այլ աշխատանքների միջոցով:
- ✓ Շարունակական համագործակցություն պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների և այլ կառույցների հետ:
- ✓ ԳՊՀ-ի մասին պատրաստել տեսանյութեր և ապահովել դրանց տարածումը:
- ✓ Պատրաստել ԳՊՀ ֆակուլտետներն ու ուսանողական կառույցները ներկայացնող տեղեկատվական թերթոններ (հայերեն և անգլերեն):
- ✓ Աշխատանքներ իրականացնել ԳՊՀ խորհրդանշանները (օրհներգ, ֆակուլտետային տարբերանշաններ) մշակելու և մասսայականացնելու ուղղությամբ:
- ✓ Մշակել ԳՊՀ ձևաթղթերի նոր տարբերակներ և հրատարակել «ԳՊՀ ձևաթղթերի օգտագործման ուղեցույցը»:

- ✓ Կազմակերպել կայքում տեղեկատվության օպերատիվ տեղադրումը, առցանց հետադարձ կապի ապահովումը:
- ✓ Մշակել և վերլուծել էլեկտրոնային փոստով ստացված նամակները:
- ✓ Աշխատանքներ իրականացնել ԳՊՀ համացանցային ռեսուրսների զարգացման, բովանդակության հազեցման և առավել մատչելի դարձնելու ուղղությամբ, ապահովել դրանց օպերատիվ թարմացումները:
- ✓ ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահի հեռուստաէկրանին պարբերաբար տեղադրել տարաբնույթ հայտարարություններ և այլ տեղեկատվություն:
- ✓ ԳՊՀ պաշտոնական կայքի տիրույթում ստեղծել «ԳՊՀ օրացույց» հատվածամասը, որտեղ պարբերաբար կտեղադրվեն միջոցառումների, կայանալիք հանդիպումների և այլ նախաձեռնությունների վերաբերյալ մանրամասներ:
- ✓ Կատարել կայքի անգլերեն և ռուսերեն հատվածամասերի համալրումներ:
- ✓ Իրականացնել ԳՊՀ շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի կայքի բազայի համալրման աշխատանքներ:
- ✓ Բուհ-գործատու կապի ամրապնդման նպատակով կազմակերպել սեմինարներ:
- ✓ ԳՊՀ տեղեկատվական թերթիկները տեղադրել www.gsu.am կայքի համապատասխան հատվածամասերում:
- ✓ Կազմակերպել դպրոցների հետ ԳՊՀ համագործակցության հուշագրերի կնքման և դրանց իրականացման աշխատանքները:
- ✓ Համագործակցել գիտակրթական հաստատությունների ինտերնետային կայքերի խմբագիրների ու պատասխանատուների (ադմինիստրատորների) հետ:
- ✓ ԳՊՀ ինտերնետային պորտալում առկա կայքերի միջև ձևավորել փոխկապակցվածություն:
- ✓ Քանակական և որակական վերլուծության ենթարկել ԳՊՀ-ին վերաբերող բոլոր հրապարակումները, հեռուստատեսային և ռադիո նյութերը, լրատվական գործակալությունների և ինտերնետային պարբերականների անդրադարձերը:
- ✓ Անցկացնել ԳՊՀ ներքին իմիջի և արտաքին վարկանիշի հետազոտություն:
- ✓ ԳՊՀ ուսանողների շրջանում անցկացնել հարցում՝ մատուցվող կրթական ծրագրերի և դասավանդման որակի վերաբերյալ:

ԳՊՀ հանրային կապերի ուղղությամբ իրականացված ծրագրերի վերաբերյալ թվային տվյալներ

Գործունեության ոլորտները	2011-2012 թթ.	2012-2013 թթ.	2013-2014 թթ.
<i>www.gsu.am կայքի նորություններ</i>	138	190	223
<i>www.gsu.am կայքի այցելուների քանակը (այցելություններ, դիտումներ)</i>	82889/24402	117759/67246	83802/ 219710
<i>infogsu@mail.ru, info@gsu.am (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հարցերի քանակը (բոլոր հարցերին տրվել են պատասխաններ)</i>	392	643	1629
<i>Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում ԳՊՀ-ին վերաբերող հրապարակված նյութերի քանակը</i>	72	83	93
<i>Լուսանկարահանված միջոցառումներ /լուսանկարների քանակը</i>	153/4690	174/6197	215/8977
<i>«Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր» լրատվական</i>			
<i>ծրագրով եթեր հեռարձակված ԳՊՀ-ին վերաբերող տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)</i>	28/88	37/95.16	16/55
<i>«Գեղամա» հեռուստաընկերությամբ «Համալսարանական ժամ» հաղորդաշարի շրջանակում եթեր հեռարձակված տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)</i>	24/515	21/467.27	11/147

Պ. Օ. Մուրադյան՝
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության
բաժնի վարիչ

**ԳՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ,
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ www.gsu.am կայքում ստեղծվել է «Փաստաթղթեր» բաժինը, մշակվել են «խորհրդի որոշումներ», «Գիտական խորհրդի որոշումներ», «Ֆակուլտետային խորհրդի որոշումներ», «Բյուջե», «Գնումներ» էջերը: Համապատասխան էջերում pdf ձևաչափով տեղադրվել է շուրջ 80 փաստաթուղթ:
- ✓ Մշակվել է միջազգային համագործակցության հարթակ, ստեղծվել են «Erasmus Mundus» և «Erasmus Tempus» էջերը, էջերի հղումները տեղադրվել են կայքի գլխավոր էջում:
- ✓ Մշակվել է «HEN-GEAR ARMENIA ՏԵՄՊՈՒՄ ԾՐԱԳԻՐ» էջը (Բարձրագույն կրթական ցանց՝ ուղղված Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանավարտների աշխատունակությանը <http://gsu.am/?go=hengear>): Ստեղծվել և վերոնշյալ էջում տեղադրվել է շրջանավարտների HEN-GEAR ARMENIA տվյալների բազայում գրանցվելու վերաբերյալ ուղեցույց, էջի հղումը տարբերանշանի տեսքով տեղադրվել է կայքի գլխավոր էջում:
- ✓ Կազմակերպվել է «HEN-GEAR» ծրագրի շրջանակներում շրջանավարտների հարթակում գրանցման վերաբերյալ սեմինար-խորհրդատվություններ, ապահովվել է առկա ուսուցման ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողների խորհրդատվության տրամադրման, գրանցման, շրջիկ թերթիկում ստորագրման և հաշվառման գործընթացը (սպասարկվել է 234 ուսանող):
- ✓ Ստեղծվել է «Նախապատրաստական դասընթացների առցանց հայտագրում» դիմամիկ էջը (http://gsu.am/?go=applicant_online), որտեղ հնարավորություն է տրվում առցանց տարբերակով լրացնել տվյալները և կատարել դասընթացի հայտագրում: Լրացված տվյալները ավտոմատ առաքվում են պաշտոնական էլեկտրոնային փոստերին:
- ✓ Ապահովվել է կայքի այցելությունների ամենշաբաթյա վիճակագրության մշակումը և էլեկտրոնային տարբերակի առաքումը ԳՊՀ աշխատակազմի էլեկտրոնային փոստերով (վիճակագրության հղումը հասանելի է նաև կայքի գլխավոր էջում՝ <http://hotlog.ru/viewstat?id=2251047>):
- ✓ Վերանշակվել է կայքի «Հայտարարություններ» էջը, ստեղծվել է «Հայտարարությունների արխիվ» մոդուլը՝ արխիվի հայտարարությունների արագ որոնման և ընտրման հնարավորությամբ, մշակվել է ադմինիստրատորի ղեկավարման տիրույթի «Հայտարարություններ» էջը:
- ✓ Մշակվել է ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայություններից օգտվելու ուղեցույց կայքէջը՝ (www.it.gsu.am):
- ✓ www.student.gsu.am ուսանողական կայքում մշակվել է ուսանողական ֆորում-հարթակը (<http://student.gsu.am/?go=forum>), որտեղ տեղադրված են քննարկման թեմաներ, ապահովվել է օգտատերերի կողմից քննարկումների կազմակերպման,

ադմինստրատորների կողմից քննարկումների կառավարման, հրապարակումների խմբագրման հնարավորություն:

- ✓ Ուսանողների շրջանում ուսանողական կայքի վերաբերյալ տեղեկատվության տարածման և այցելությունների խթանման (promotion) նպատակով «Facebook» սոցիալական ցանցի միջոցով կազմակերպվել են «ԳՊՀ լավագույն ուսանողական կառույցը վիրտուալ տիրույթում» և «ԳՊՀ լավագույն ֆակուլտետը վիրտուալ տիրույթում» մրցույթները, ապահովվել է մրցույթների ընթացքում տվյալների ակնատաղիտական տեսքով պատկերների մշակումը և պարբերական հրապարակումը:
- ✓ Վերանշակվել են www.student.gsu.am կայքի ֆակուլտետային էջերը, էջերում ավելացվել է «Օգտակար ուսումնական տեսանյութեր» բաժինը, որտեղ, ըստ ֆակուլտետների, տեղադրվել են համապատասխան ուսումնական տեսանյութեր:
- ✓ Կատարվել են www.student.gsu.am կայքի էջերի խմբագրումներ, մասնավորապես վերախմբագրվել են Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության էջերը, տեղադրվել են նոր լուսանկարներ:
- ✓ Իրականացվել են ԳՊՀ համացանցային կայքի դիզայնի ձևափոխություններ, մասնավորապես, կիրառվել են հղումների, կոճակների, ընտրացանկերի, հետնապատկերների, տառաչափերի, տառաձևերի նոր ոճեր, մշակվել և նոր ձևով ներկայացվել են ենթադոմենային կայքերի հղում-տարբերանշանները:
- ✓ Կատարվել են կայքի CMS (Content Management System)՝ ադմինիստրատորի տիրույթի բովանդակության ղեկավարման համակարգի զարգացման և կայքի SEO-ի՝ առաջխաղացում որոնողական համակարգերում և SMO-ի ուղղությամբ աշխատանքներ:
- ✓ Ապահովվել է ԳՊՀ պաշտոնական համացանցային կայքում նորությունների, հայտարարությունների, լուսանկարների և էջերի օպերատիվ թարմացումը, (համալրվել է լուսանկարների 7 բաժին, 45 լուսանկար-<http://gsu.am/index.php?go=patkerasrah>):
- ✓ Կատարվել են տեսանյութերի ֆայլերի ձևաչափերի ձևափոխություններ և տեղադրում ԳՊՀ պաշտոնական Youtube տեսահարթակում (համալրվել է 27 տեսանյութ), (<https://www.youtube.com/user/gsuadmin/featured>):
- ✓ Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հանձնարարականը՝ բուհի պաշտոնական համացանցային կայքում տեղադրվել են միջբուհական համաձայնագրերով նախատեսված կրթաթոշակների և ուսանողների շարժունությանը վերաբերող մրցույթների հայտարարությունները:
- ✓ Սպասարկվել և համալրվել են ԳՊՀ պաշտոնական էլեկտրոնային փոստերը, մշտապես կատարվել են աշխատանքներ խափանումների վերացման ուղղությամբ:
- ✓ Մշակվել են ԳՊՀ շենքերի էլեկտրոնային ցուցապաստառի նոր տարբերակը և ԳՊՀ էլեկտրոնային ցուցապաստառների նոր ոճը, ստեղծվել է «ԳՊՀ-ն համացանցային տիրույթում», «ԳՊՀ պաշտոնական կայք», «ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգ», «ԳՊՀ ուսանողական պորտալ», «ԳՊՀ- գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «ԳՊՀ պաշտոնական Youtube տեսահարթակ», «ԳՊՀ ֆեյսբուքյան էջ» էլեկտրոնային ցուցապաստառները, որոնք տեղադրվել են պաշտոնական ֆեյսբուքյան էջում, ցուցադրվել են

կենտրոնական մասնաշենքի էլեկտրոնային էկրանին, տպագրվել և փակցվել են բոլոր դեկանատների ցուցատախտակներին:

- ✓ «Facebook» սոցիալական ցանցի Գավառի պետական համալսարանի էջը շարունակաբար թարմացվել է, մշակվել և տեղադրվել են տարբեր ցուցապաստառային նկարներ, ծավալվել են բազմաբովանդակ քննարկումներ:
- ✓ Իրականացվել է ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի էլեկտրոնային էկրանին ցուցադրվող նյութերի համակարգչային մշակում, թարմացումների կազմակերպում, աշխատակիցների շնորհավորանքների հղում էլեկտրոնային փոստի միջոցով:
- ✓ «Examination GSU» էլեկտրոնային քննական թեստավորման համակարգի վերագործարկման նպատակով առանձին համակարգչի վրա տեղադրվել է սերվերային օպերացիոն համակարգ, «web» սերվերային ծրագրային ապահովում, կատարվել է ցանցի և սերվերի կարգաբերումներ:
- ✓ «Examination-GSU» համակարգի միջոցով նախապատրաստվել և կազմակերպվել են միջանկյալ և ամփոփիչ քննություններ: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 16 խմբի թեստային քննություն 10 առարկաների գծով, համալրվել է առարկաների 2 նոր թեստերի բազա, վերախմբագրվել 1 առարկայի թեստերի բազա:
- ✓ Կազմակերպվել է 2013-2014 ուսումնական տարվա մագիստրատուրայի «E-learning GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Ըստ ուսումնական պլանների՝ «E-learning GSU» համակարգում համալրվել են խմբերի, դասախոսների անվանական և առարկաների ուսուցման տիրույթները:
- ✓ «E-learning GSU» սերվերային համակարգչում թարմացվել է օպերացիոն համակարգը, կատարվել են համակարգի սերվերի անվտանգության ապահովման աշխատանքներ: Լուծվել են «E-learning GSU» համակարգի տեղափոխելիության հարցերը, ապահովվել է համակարգը այլ սերվերներից գործարկելու հնարավորություն: Մշակվել է «E-learning GSU» համակարգի սինխրոն պարբերական պատճենման աշխատանքների կազմակերպման ընթացակարգ:
- ✓ «E-learning GSU» համակարգի կայքէջում ստեղծվել է «Հայտարարություններ» բաժինը, մշակվել է «Ինտերակտիվ ուսուցման նյութեր» էջը, որտեղ տեղադրվել են օգտակար ծրագրեր, թեստեր, շնորհանդեսներ, ուսումնական նյութեր:
- ✓ Կազմակերպվել է 2014թ. ուսումնական տարվա Հեռակա ուսուցման ֆակուլտետում համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Բոլոր խմբերի համար ստեղծվել են «Ուսանող» օգտատերի անվանական և խմբի վիրտուալ տիրույթները: Տեղադրվել են բոլոր խմբերի ուսումնական պլանները, ուսանողների ցանկերը: Համակարգի միջավայրում ստեղծվել են առարկաների ուսուցման փաթեթներ: Տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալների թերթիկները:
- ✓ Շարունակական բնույթ է կրել «E-learning GSU» համակարգի վերաբերյալ դասախոսներին և ուսանողներին խորհրդատվությունների տրամադրումը, առարկաների փաթեթների խմբագրման գործում աջակցության ապահովումը: Խորհրդատվությունների տրամադրման համար ստեղծվել է նաև Skype (E-learning.gsu) ծառայությունը, հղումը տեղադրվել է համակարգի գլխավոր էջում:

- ✓ «E-learning GSU» համակարգում ստեղծվել է դասախոսի լուսանկարի արտապատկերման մոդուլ, տեղադրվել է շուրջ 70 դասախոսի լուսանկար, լուսանկարների համալրման գործընթացը կրում է շարունակական բնույթ:
- ✓ Մշակվել է համակարգի առարկաների տիրույթների բովանդակության ստուգման մշտադիտարկման ընթացակարգ: Պարբերաբար ստուգվել են, ըստ խմբերի, առարկայական տիրույթներում դասախոսությունների առկայությունը, արդյունքների մասին պարբերաբար տեղեկացվել է ամբիոններ և տրամադրվել հաշվետվություններ:
- ✓ Ապահովվել է համակարգի այցելությունների ամենշաբաթյա վիճակագրության մշակումը և առաքումը ԳՊՀ աշխատակազմի պաշտոնական էլեկտրոնային փոստերով:
- ✓ Նախապատրաստվել և կազմակերպվել է առկա ուսուցման 2014-2015 ուսումնական տարվա բակալավրիատի «E-learning GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Բոլոր դեկանատներից հավաքագրվել են ուսումնական պլանները, որոնց հիման վրա կատարվել են դասախոսների անվանական, առարկաների տիրույթների համալրում, պատճենումների կազմակերպում, տրված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալների թերթիկները:
- ✓ Շարունակվել է ակտիվորեն գործածվել էլեկտրոնային հաղորդագրություններով աշխատելու սկզբունքը: Կիրառության մեջ է դրվել laborant@gsu.am խմբային էլեկտրոնային փոստը՝ ամբիոնների հետ ավելի օպտիմալ աշխատելու համար: Էլեկտրոնային փոստերի միջոցով համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացում կազմակերպվել է հաղորդագրությունների փոխանցումը, ադմինիստրատորին ուղարկված հարցումները, խորհրդատվությունների և ցուցումների տրամադրումը, հայտարարությունների, հաշվետվությունների, այցելությունների վիճակագրությունների տարածումը և հետադարձ կապը:
- ✓ Նախագծվել, մշակվել և ներդրվել է «E-library GSU» էլեկտրոնային մասնագիտական գրադարանը (www.library.gsu.am), որը սահմանափակ մուտքի հասանալիությամբ «web» կայք է, որտեղ առկա է էլեկտրոնային (թվային կամ թվայնացված) գրքերի շտեմարան և դրա հետ աշխատելու համապատասխան գործիքակազմ:
- ✓ Կատարվել է համակարգի ծրագրային ապահովման սերվերի վրա տեղադրման և գործարկման աշխատանքներ:
- ✓ Համակարգի նախագծման ժամանակ ԳՊՀ գրադարանի աշխատակիցների հետ կազմակերպվել են աշխատանքային խորհրդակցություններ, գրադարանի աշխատակիցների կողմից տրամադրվել է խորհրդատվություն՝ գրքերի կարգացանկերի և ենթակարգացանկերի, գրքերի վերաբերյալ տվյալների հավաքագրման, դասակարգման և պահպանման եղանակների վերաբերյալ, ուսումնասիրվել են գրադարանի գրքերի վերաբերյալ տվյալների պահպանման մեթոդները և միջոցները:
- ✓ Համակարգը հնարավորություն է ընձեռում առցանց ռեժիմով ծանոթանալ էլեկտրոնային գրքերի կարգացանկերին, ընտրել համապատասխան գիրքը, ստանալ տեղեկատվություն տվյալ գրքի դիտումների քանակի մասին, առցանց ընթերցել կամ ներբեռնել համակարգչում, անհրաժեշտության դեպքում թողնել մեկնաբանություն տվյալ գրքի վերաբերյալ, կատարել գրքի որոնում՝ ըստ մի շարք հայտա-

նիշների (կարգացանկ, գրքի հեղինակ, վերնագիր, հրատարակության տարեթիվ և այլն):

- ✓ Համակարգի կայքէջից կարելի է ծանոթանալ և անցում կատարել հայկական և համաշխարհային գրքերի խոշոր էլեկտրոնային շտեմարաններին, հետադարձ կապի միջոցով գրադարանավարին ուղարկել հաղորդագրություններ (հարց, պատասխան), առցանց ռեժիմով համակարգի միջավայրում գրադարանավարին ուղարկել էլեկտրոնային գրքեր՝ օժանդակելով գրքերի պաշարների համալրման աշխատանքներին:
- ✓ Կազմակերպվել է համակարգի շնորհանդես, մշակվել է էլեկտրոնային գրքերի համալրման ընթացակարգ:
- ✓ Համակարգի գրքերի շտեմարանի համալրման ընթացակարգին համապատասխան գրադարանի աշխատակիցների կողմից մշակվել է էլեկտրոնային գրացուցակ, որի միջոցով ցուցակագրվում են էլեկտրոնային գրքերը, որոնց հիման վրա հետագայում համակարգի ադմինիստրատորի կողմից մշակվում են գրքերի կազմերի պատկերները և մուտքագրվում համակարգի միջավայր:
- ✓ Ակտիվ աշխատանքներ են իրականացվել ինչպես հայալեզու, այնպես էլ օտարալեզու գրքերի շտեմարանների որոնման, գրքերի ներբեռնման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում գրադարանը համալրվել է շուրջ 500 էլեկտրոնային գրքով: Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:
- ✓ Կիրառության մեջ է դրվել library@gsu.am էլեկտրոնային փոստը:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում նախատեսում ենք իրականացնել հետևյալ աշխատանքներն՝ ըստ ոլորտների.

- ✓ ԳՊՀ բոլոր կայքերի և տեղեկատվական համակարգերի՝ www.gsu.am, www.student.gsu.am, www.phone.gsu.am, www.career.gsu.am, www.elearning.gsu.am, www.library.gsu.am, սպասարկում, անգլերեն և ռուսերեն էջերի պարբերական համալրումներ, ֆեյսբուքյան էջի և ԳՊՀ «Youtube» տեսահարթակի համալրում և սպասարկում:
- ✓ Ապահովել «E-learning GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացի պարբերաբար իրականացումը (ուսումնական պլանների հիման վրա թարմացումների, փոփոխությունների կազմակերպում),
- ✓ «E-learning GSU» համակարգի կատարելագործում (գլխավոր էջի նոր դիզայն, անվտանգությանն ուղղված ծրագրային միջոցների ներդնում, էջերի համալրում, վեբինարների, վիրտուալ սեմինարների և թեստավորման անցկացման հնարավորությունների ուսումնասիրում և ինտեգրում, նոր ծրագրային մոդուլների մշակում):
- ✓ «E-library GSU» էլեկտրոնային գրադարանի կատարելագործում, գրքերի համալրման գործում աջակցության ցուցաբերում, գրադարանի աշխատակիցներին «Գրադարանավար» օգտատերի տիրույթի կառավարման ենթահամակարգի ուսուցում, կիրառման հարցերում խորհրդատվությունների տրամադրում:
- ✓ «Examination GSU» համակարգով քննությունների նախապատրաստում և կազմակերպում:
- ✓ «Web» դիզայներական նորագույն լուծումներին համահունչ ԳՊՀ համացանցային www.gsu.am կայքի նոր տարբերակի նախագծում և մշակում:

- ✓ www.gsu.am կայքի նոր տարբերակում նորությունների, հայտարարությունների բաժանորդագրման հնարավորությունների ստեղծում:
- ✓ Նորությունների ինտեգրում ԳՊՀ բոլոր ենթադոմենային կայքէջերում:
- ✓ Կայքերի CMS ադմինիստրատորի բովանդակության կառավարման համակարգերի կատարելագործում:
- ✓ «Վիքիպեդիա ազատ հանրագիտարան» համացանցային տիրույթում ԳՊՀ-ի մասին էջերի ստեղծում (<http://hy.wikipedia.org>):

**Թվային տվյալներ www.gsu.am կայքի այցելությունների վերաբերյալ
(ըստ HotLog.ru ծառայության)**

Ամիս (2013-2014)	Այցելություններ	Նոր այցելություններ (այդ թվում)	Դիտումներ
Սեպտեմբեր	7232	1997	28285
Հոկտեմբեր	5456	1560	19287
Նոյեմբեր	4915	1643	16448
Դեկտեմբեր	4537	1334	16188
Հունվար	7457	2539	28314
Փետրվար	6342	1941	20528
Մարտ	4739	1525	14218
Ապրիլ	4565	1625	14154
Մայիս	5222	1876	18206
Հունիս	6551	2050	21998
Հուլիս	2830	1129	10160
Օգոստոս	2544	1192	8941

**«E-learning GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման
վերաբերյալ թվային տվյալներ**

«E-learning GSU» տիրույթ	Ժամանակահատվածը	
	31.08.2013 թ.	31.08.2014 թ.
«Ուսանող» օգտատերի անվանական տիրույթ	99	150
«Դասախոս» օգտատերի անվանական տիրույթ	150	163
«Առարկա» ուսուցման փաթեթների տիրույթ	842	1960

«E-learning GSU» համակարգի ուղեցույցերի դիտումներ (31.08.2013-31.08.2014 թթ.)	
Դասախոսի ուղեցույց (https://www.youtube.com/watch?v=J4HvSvXVSZM)	395
Ուսանողի ուղեցույց (https://www.youtube.com/watch?v=gb-tcuZvvd8)	1156

«E-learning GSU» համակարգի այցելությունների թվի բաշխումը՝ ըստ օգտատերերի (01.06.2013-31.08.2014 թթ.)	
Օգտատեր	Այցելություն
Դասախոս, ուսանող	308419
Ադմինիստրատոր	29298
Ընդհանուր այցելությունների թիվը	339717

«E-learning GSU» համակարգի վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Ամսաթիվ	Այցելություն	Ամսաթիվ	Այցելություն	Ամսաթիվ	Այցելություն
05.09.13	2527	17.09.13	1706	29.09.13	966
06.09.13	2686	18.09.13	2386	30.09.13	967
07.09.13	2118	19.09.13	1946	01.10.13	916
08.09.13	2367	20.09.13	1554	02.10.13	1022
09.09.13	1066	21.09.13	1346	03.10.13	1452
10.09.13	1166	22.09.13	1028	04.10.13	1444
11.09.13	2159	23.09.13	1354	05.10.13	1261
12.09.13	2559	24.09.13	2171	06.10.13	654
13.09.13	2163	25.09.13	1352	07.10.13	1234
14.09.13	2557	26.09.13	1785	08.10.13	1131
15.09.13	1563	27.09.13	1595	09.10.13	961

*Վ. Կ. Ավետիսյան, Ս. Ա. Հովհաննիսյան
ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների
բաժնի ծրագրավորողներ*

**ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԳՈՐԾԱՏՈՒ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ,
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), որը հիմնադրվել է Գավառի պետական համալսարանում 2012 թվականին Եվրոպական Միության «Տեմպուս-ԱՐԱՐԱՏ» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է ապահովել բարձրագույն կրթության համապատասխանությունը փոփոխվող աշխատաշուկայի պայմաններին, ակտիվորեն շարունակել է իր գործունեությունը նաև 2013-2014 ուսումնական տարում:

Կենտրոնի հիմնական նպատակն է առաջարկվող որակավորումների վերաբերյալ համալսարանի և աշխատաշուկայի միջև ակտիվ երկխոսության խթանումը, շրջանավարտների կարիերայի զարգացմանն աջակցությունը:

Կենտրոնի կազմում ընդգրկված են 4 աշխատակիցներ.

- Լիլիթ Թոռչյան՝ Կենտրոնի համակարգող,
- Սաթենիկ Սարգսյան՝ գործատուների հետ համագործակցության ապահովման մասնագետ,
- Հայարիփ Մկրտչյան՝ շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման մասնագետ,
- Սիփան Արևշատյան՝ տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մասնագետ:

2013-2014 ուսումնական տարում Կենտրոնի հիմնական աշխատանքներն ուղղված են եղել Համալսարան-աշխատաշուկա համագործակցության ազգային կենտրոնների ցանցի ստեղծմանը, Ցանցի համար նորմատիվ փաստաթղթերի մշակմանը, սեկտորիալ որակավորումների շրջանակի ձևավորմանը, ինչպես նաև համապատասխան տվյալների բազայի հավաքագրմանը:

2014թ. մայիսի 31-ին «ՏԵՄՊՈՒՄ-ԱՐԱՐԱՏ» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքում կայացավ հերթական հանդիպում, որի ընթացքում կայացրած որոշման համաձայն՝ ստեղծվեց 2 խումբ՝ ընդհանուր աշխատանքային խումբ և տվյալների բազա մշակող աշխատանքային խումբ՝ գործատուների և շրջանավարտների հետ կապեր հաստատելու նպատակով հարցաթերթիկներ մշակելու և տվյալների բազա հավաքագրելու համար:

Ընդհանուր աշխատանքային խումբը մշակում է հարցաշարեր և հավաքագրում տվյալներ շրջանավարտներից, գործատուներից և ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներից՝ աշխատաշուկայի կարիքները լուսաբանելու նպատակով:

Տվյալների բազա մշակող խմբի գործառույթը այդ հարցաշարերի արդյունքների ամփոփման հիման վրա տվյալների հենքի պատրաստումն է:

Ծրագրի շրջանակներում 2014 թ. հուլիսի 21-ից 23-ը Իսպանիայի Ալիկանտեի համալսարանում կայացավ աշխատաժողով, որի հիմնական նպատակն էր երեք սեկտորների (տեղեկատվական տեխնոլոգիաներ, մենեջմենթ և կրթություն) համար մշակված հարցաշարերի ամփոփումը, տվյալների բազայի կառուցվածքի և Համալսարան-աշխա-

տաշուկա համագործակցության ազգային կենտրոնների ցանցի նորմատիվ փաստաթղթերի քննարկումը:

Հանդիպման մյուս կարևոր նպատակը Հարթակ (Պլատֆորմ) ստեղծելն էր, որը կհանդիսանա Համալսարան-աշխատաշուկա համագործակցության կենտրոնները և Համալսարան-աշխատաշուկա համագործակցության ազգային կենտրոնների ցանցը միմյանց շաղկապող կառուցակարգ: Հարթակի համար տեքստերի մշակումն ու տեխնիկական սպասարկումն իրականացվելու է Որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից: Այն հասանելի է լինելու անգլերեն և հայերեն տարբերակներով:

Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը մշակել է նոր գործողությունների ծրագիր՝ 2014-2015 ուսումնական տարվա համար:

Լ. Գ. Թոռչյան՝

ԳՊՀ համալսարան-գործատու

*համագործակցության, շրջանավարտների և
կարիերայի կենտրոնի համակարգող*

ԳՊՀ ԱՐԻԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ԳՊՀ արհեստակցական միությունը ձեռնարկել է իր գործունեությունից և խնդիրներից բխող մի շարք միջոցառումներ:

Գավառի պետական համալսարանում սահմանված կարգով ընդունվել և գործում է կոլեկտիվ պայմանագիրը, որը սահմանում է թե՛ գործատուի, և թե՛ աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Համալսարանի արհեստակցական կազմակերպությունը շարունակում է իր ակտիվ համագործակցությունը ՀՀ պետական բուհերի արհկոմիտեների հետ:

Բուհերի արհկոմիտեների հետ տարեկան երկու անգամ կազմակերպվում է արհեստակցական կազմակերպությունների միասնական արտագնա նիստ Աղավնաձորում և Ծաղկաձորում:

Հաշվետու տարում մշտական ուշադրություն է դարձվել աշխատողների առողջության պահպանման, սոցիալական աջակցության, մարզական և այլ միջոցառումների կազմակերպման խնդիրներին:

Որպես ֆինանսական աջակցություն՝ բուժման կամ այլ նպատակներով հաշվետու տարում համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին հատկացվել է 1 միլիոն 568 հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը և ուսանողական խորհուրդը իրականացրել են ուսանողական կյանքի ակտիվացման, ուսանողների հասարակական մշակութային, ինտելեկտուալ զարգացման ու սոցիալական խնդիրների լուծման մի շարք ծրագրեր:

Համալսարանի աշխատակիցների ժամանցը արդյունավետ կազմակերպվելու նպատակով գարնանը և ամռանը կազմակերպվել են էքսկուրսիաներ դեպի Նորավանք, Ջերմուկ, Էջմիածին:

Արհեստակցական կազմակերպության ֆինանսական աջակցությամբ 2014 թվականի մայիսին համալսարանի ուսանողների հավաքականը մասնակցել է ձեռքի գնդակի հանրապետական առաջնությանը:

2014 թվականի գարնանը կազմակերպվել են ավանդույթ դարձած ֆակուլտետային միջոցառումներ, ինչպես նաև համալսարանի մինի ֆուտբոլի առաջնություն, որոնց աջակցել է արհկոմիտեն:

Արհեստակցական կազմակերպությունը իր կանոնադրական գործառույթներին համապատասխան այսուհետ ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին աջակցության ցուցաբերման, իր առջև դրված խնդիրների պատշաճ լուծմանը:

Լյովա Գուրգենի Սիրունյան՝

ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը համակարգել է սովորողների տարբեր նախաձեռնությունները և ծրագրերը, ընթացք տվել առաջարկություններին, նպաստել ուսանողների ստեղծագործական, կազմակերպական, հաղորդակցական կարողությունների զարգացմանը, համագործակցել հանրապետության այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ՝ խթանելով ուսանողների ընդհանուր զարգացումը:

2013-2014 ուսումնական տարվա ընթացքում Ուես նախաձեռնությամբ և ԳՊՀ ֆակուլտետների դեկանատների ու կառուցվածքային այլ ստորաբաժանումների անմիջական աջակցությամբ կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

2013 թվականի օգոստոսի 12-18-ը Ծաղկածոր քաղաքում անցկացվել է «Բազե-2013» համահայկական երիտասարդական հավաքը, որին մասնակցել է Գավառի պետական համալսարանի ջոկատը՝ Ուես նախագահի գլխավորությամբ: Ջոկատը բուհ է վերադարձել մեդալներով:

Սեպտեմբերի 1-ին կազմակերպվել է Գիտելիքի, գրի և դպրության օրվան նվիրված միջոցառում:

Հոկտեմբերի 5-ին կազմակերպվել է առաջին կուրսեցիների բարի գալուստի հանդիսավոր միջոցառում, որին հաջորդել է նոյեմբերի 17-ին անցկացված «Լավագույն ուսանող-2013» մրցանակաբաշխությունը:

Նոյեմբերի 30-ին տեղի է ունեցել Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանի «Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը» մենագրության շնորհանդեսը, որը կազմակերպվել էր Բանասիրական ֆակուլտետի դեկանատի և ուսանողական խորհրդի համատեղ ջանքերով:

Դեկտեմբերի 7-ին կազմակերպվել էր «Լուսաբացից առաջ» խորագիրը կրող միջոցառում՝ նվիրված հայ ազգային հերոսներին և հայոց հերոսական պատմությանը:

Դեկտեմբերի 11-ին Գավառի պետական համալսարանը մեկ ժամով վերադարձել էր 1970-ական թվականներ: ԳՊՀ մեծ դահլիճում կազմակերպվել էր «Ռետրո» միջոցառում՝ «Մենք երգում ենք 70-ականների երգեր» խորագրով:

Դեկտեմբերի 16-17-ը Ուսանողական խորհրդի անդամները մասնակցել են Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում կայացած Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի 8-րդ ընդհանուր ժողովին:

Դեկտեմբերի 21-ին կազմակերպվել է «Մարդասիրության մեծ առաքյալը» խորագիրը կրող հուշ ցերեկույթ՝ նվիրված Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 86-ամյակին:

Դեկտեմբերի 25-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատի և ուսանողական խորհրդի համատեղ ջանքերով կազմակերպվել է գեղեցիկ միջոցառում՝ նվիրված Ամանորին և Սուրբ Ծննդյան տոներին:

Հաշվետու ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում՝ ս. թ. ապրիլի 12-ին, կայացել է ԳՊՀ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահների ընտրություն: Ուսանողական ինքնակառավարման մարմինների ընտրական հանձնաժողովի անմիջական դիտորդությամբ բուհի առկա ուսուցման ֆակուլտետների կուրսերի ավագները և ֆակուլտետային ՈւՆ, ՈւԳԸ անդամներն առաջադրված թեկնածուներից փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրել են ուսանողական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ: ՈւՆ նախագահ է ընտրվել Հունամիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի 2-րդ կուրսի ուսանող Ավետիք Նանագուլյանը, ՈՒԳԸ նախագահ՝ Բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Նունե Միրիբյանը:

Ս. թ. ապրիլի 19-ին ուսանողական խորհուրդը բուհի ողջ համակազմի հետ միասին մեծ պատրաստականությամբ մասնակցել է ԳՊՀ հարակից տարածքում կազմակերպված ծառատունկին:

Ապրիլի 20-ին ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվել է Սուրբ Զատիկի տոնակատարություն՝ պահպանելով բոլոր ավանդույթները:

Ապրիլի 24-ին Ուսանողական խորհրդի անդամներն այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և գլուխ խոնարհել անմար կրակի առաջ: Հաջորդ օրը ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում կազմակերպվել է նաև ֆլեշմոբ, որի ընթացքում երիտասարդ համալսարանականները հայոց եռագույնով պատկերել են «1915», ներկայացրել հայ ժողովրդի միասնականության, ամրության ու տոկունության խորհուրդը և ևս մեկ անգամ փաստել, որ ոչինչ չի մոռացվել, որ մենք հիշում, դատապարտում և պահանջում ենք:

Մայիսի 9-ին կազմակերպվել է գեղեցիկ ցերեկույթ՝ նվիրված 1945 թվականի մայիսի 9-ին Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակին, 1992 թվականին Շուշիի ազատագրման 22-րդ տարելիցին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի կազմավորմանը:

Մայիսի 17-ին անցկացված «Թանգարանային գիշեր» ծրագրի շրջանակում ուսանողները մեծ խանդավառությամբ շրջել են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում, ՀՀ ազգային պատկերասրահում, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական թանգարանում, Արամ Խաչատրյանի, Ավետիք Իսահակյանի տուն-թանգարաններում, ակտիվորեն մասնակցել կազմակերպված միջոցառումներին ու ակցիաներին:

Հայաստանի առաջին Հանրապետության կայացման օրը՝ մայիսի 28-ին, Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել է երթ դեպի Սարդարապատի հուշահամալիր: Ուսանողներն իրենց մասնակցությունն են ունեցել կազմակերպված միջոցառումներին:

Հունիսի 16-17-ը Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամում ԳՊՀ ՈւՆ անդամները մասնակցել են Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի 9-րդ լիագումար նիստին:

Հուլիսի 5-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրը, Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել է ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների 17-րդ սերնդի դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:

2014 թվականի օգոստոսի 18-24-ը Ծաղկածոր քաղաքի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հանգստյան տանն անցկացվել է «Բազե-2014» համահայկական երիտասարդական հավաքը: Հավաքին, ըստ համապատասխան անվանակարգերի,

մասնակցել են Գավառի պետական համալսարանի ներկայացուցիչներ Ավետիք Նանագուլյանը, Վեմիր Ամիրխանյանը, Սաթենիկ Թովմասյանը, Արփինե Աղոյանը, Պապին Հովեյանը, Լուսինե Սայադյանը, Անուշ Ղազարյանը և Էրիկ Գևորգյանը: ԳՊՀ թիմը նարնջագույն ճակատի կազմում վաստակել է 2 ոսկի մեդալ և արժանացել պատվոգրերի:

ԳՊՀ ուսանողական խորհրդի աշխատանքները նոր թափով մեկնարկել են 2014-2015 ուսումնական տարում:

Նոր ուսումնական տարին սկսվել է կազմակերպված տոնական միջոցառմամբ՝ նվիրված Գիտելիքի օրվան:

Սեպտեմբերի 7-13-ը Ուես նախագահ Ավետիք Նանագուլյանը և Ուես փոխնախագահ Արեգ Սինանյանը մասնակցել են Բուլղարիայի Դոբրիչի միջազգային համալսարանական քոլեջում կազմակերպված «Բարձրագույն կրթության փոփոխությունների կառավարում և նախաձեռնում» ժրագրին, որի նպատակն էր զարգացնել երիտասարդ առաջնորդների՝ բուհերի կառավարմանը մասնակցելու համար անհրաժեշտ հմտություններն ու կարողությունները:

Հոկտեմբերի 22-25-ը Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները մասնակցել են ԵՊՀ-ում տեղի ունեցած Ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների երևանյան համաժողովին, որը կրում էր «Ուսանողական ինքնակառավարման զարգացումը և երիտասարդական կազմակերպությունների նորարարական աշխատանքների մեթոդները» խորագիրը:

Հոկտեմբերի 26-ին Ուսանողական խորհրդի և Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի կողմից Գավառի պետական համալսարանում անցկացվել է «Ուսանողական հանրակացարաններ» հետազոտության առաջին հանրային լսումը: Նախաձեռնությունը նպատակ ուներ վեր հանել ուսանողական հանրակացարանների հետ կապված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես՝ ՀՀ մարզերում:

Ձևավորված ավանդույթի համաձայն՝ նոյեմբերի 15-ին կազմակերպվել է ուսանողի միջազգային օրվան նվիրված միջոցառում: Միջոցառման շրջանակում կայացել են «ԳՊՀ լավագույն կուրս» և «ԳՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությունները: ԳՊՀ յուրաքանչյուր ֆակուլտետից մեկ կուրս և մեկ ուսանող ճանաչվել են լավագույնը և արժանացել հավաստագրերի:

Նոյեմբերի 26-ին Գեղարքունիքի մարզպետարանում տեղի է ունեցել հանդիպում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչների հետ, որին իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել նաև Ուես անդամները: Հանդիպման ընթացքում քննարկվել են երիտասարդության դերակատարման բարձրացման վերաբերյալ հարցեր:

Նոյեմբերի 30-ին՝ ԳՊՀ ֆակուլտետային ուսանողական խորհուրդների նախաձեռնությամբ կազմակերպվել է գեղեցիկ միջոցառում՝ նվիրված տարբեր երկրներում նշվող աշնանային տոներին: Իսկ ԳՊՀ ուսանողների ձևավորած ստեղծագործողների ակումբը «Ճամփորդ դարերի» խորագրով ցերեկույթը ձոնեց հայ բիբլիական ժողովրդին և նրա հերոսական պատմությանը:

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի և Տնտեսագետների ակումբի կողմից կազմակերպվի սեմինար-քննարկում՝ նվիրված Եվրամիության և Մաքսային միության գործունեությանը:

Տարվա ավարտին բուհում կազմակերպվել է բոլորի կողմից սիրված տոնին՝ Ամառնորին նվիրված միջոցառում:

2015 թվականի ընթացքում ՈԻԽ կողմից կկազմակերպվեն մի շարք հուշ-ցերեկույթներ, սեմինար-քննարկումներ, գիտաժողովներ, ֆլեշմոբեր՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Իսկ ապրիլի 24-ին ԳՊՀ դասախոսական և ուսանողական համակազմի մասնակցությամբ կկազմակերպվի ուխտագնացություն դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Ընթացիկ տարվա ընթացքում ՈԻԽ-ն կնախաձեռնի և կանցկացնի ՀՀ տոներին և հիշատակի օրերին նվիրված տարաբնույթ միջոցառումներ և բաց դասեր:

Դպրոց-բուհ համագործակցության ամրապնդման շրջանակում կիրականացվեն փոխայցելություններ մարզի դպրոցներ, կկազմակերպվեն մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպումներ աշակերտների հետ:

Ընթացիկ ուսումնական տարում ևս ԳՊՀ ուսանողական խորհուրդը ռեկտորատի, դեկանատների, բուհի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցելով՝ կշարունակի զարգացման ծրագրերի իրականացումը:

Ա. Ս. Նանագույան

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը նպաստել է ուսանողության ընդհանուր աշխարհայացքային և մասնագիտական զարգացմանը, սատարել է ուսանողների մի շարք նախաձեռնություններին կրթության և գիտության ոլորտներում և իրականացրել դրանց մեծ մասը:

Ընկերությունը կազմակերպել է ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ, գիտահանրամատչելի դասախոսություններ և գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումներ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողական գիտական ընկերությունը հանդես է եկել մի շարք նախաձեռնություններով.

- 2013 թ. սեպտեմբերին կազմակերպել է ճանաչողական հանդիպումներ ԳՊՀ բոլոր ֆակուլտետների առաջին կուրսեցիների հետ և նրանց ծանոթացրել ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության գործունեությանը:
- 2013 թ. հոկտեմբերի 2-ին կազմակերպել է «Հետադարձ հայացք» խորագիրը կրող հաշվետու միջոցառում՝ նվիրված ԳՊՀ ՈւԳԸ կազմի աշխատանքների 3-ամյակին, որի ընթացքում ներկայացվել են 2012-2013 թթ. նախաձեռնած և իրականացրած ծրագրերի համառոտ ամփոփագրերը:
- 2013 թ. հոկտեմբերի 17-ին՝ Ավ. Իսահակյանի մահվան տարելիցի կապակցությամբ կազմակերպել է «Աբու Լալա-Մահարի» պոեմի քննարկում:
- 2013 թ. նոյեմբերի 6-9-ը ընկած ժամանակահատվածում կազմակերպել և անցկացրել է «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի համալսարանական մրցաշար:
- 2013 թ. նոյեմբերին՝ Գիտության միջազգային օրվան (նոյեմբերի 10) նվիրված, հայտարարել էր էսսեների մրցույթ՝ «Գիտելիքը՝ ապագայի երաշխիք» խորագրով:
- 2013 թ. նոյեմբերի 17-ին ԳՊՀ մեծ դահլիճում կազմակերպել է միջոցառում՝ նվիրված ուսանողների միջազգային օրվան: Միջոցառման շրջանակում կայացել է «Լավագույն ուսանող-2013» մրցանակաբաշխությունը:
- 2013 թ. դեկտեմբերի 7-ին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկանատի աջակցությամբ կազմակերպել է Սպիտակի երկրաշարժի 25-րդ տարելիցին նվիրված հուշ-ցերեկույթ:
- 2013 թ. դեկտեմբերի 21-ին մասնակցել է ԳՊՀ հիմնադրման 20-ամյակին նվիրված 16-րդ ամենամյա գիտաժողովի կազմակերպմանը:
- 2014 թ. փետրվարի 19-ին՝ Հոլի. Թումանյանի ծննդյան 145-ամյակին նվիրված, ԳՊՀ ուսանողներն այցելել են Գավառի մանկատուն՝ մանուկներին ծանոթացնելով գրողի կյանքին և գործունեությանը և մանկատան գրադարանին նվիրելով ավելի քան 20 անուն գիրք:
- 2014 թ. մարտի 1-ին կազմակերպել է «Նրանց փնտրեք ողջերի մեջ» խորագիրը կրող հուշ-ցերեկույթ՝ նվիրված Արցախյան գոյամարտի հերոսներին:

- 2014 թ. մարտի 26-ին կազմակերպել է գրական քննարկում՝ նվիրված Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» կինովիպակի գլխավոր հերոսուհի Աղունի կերպարի առանձնահատկություններին:
- 2014 թ. ապրիլի 4-ին Ուսանողական խորհրդի հետ համատեղ ԳՊՀ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի համար կազմակերպել է Սուրբ Զատկի տոնակատարություն:
- 2014 թ. ապրիլի 17-ին ՈւԳԸ կից գործող Ստեղծագործողների ակումբը կազմակերպել է «Աչքերիս մեջ գարնան օրեր» խորագիրը կրող միջոցառում, որը նվիրված էր Հովհաննես Շիրազի ծննդյան 100-ամյակին:
- 2014 թ. մայիսի 8-ին կազմակերպել է Համո Սահյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գրական ցերեկույթ, որը կրում էր «Կանգ առ, ակնթարթ» խորագիրը:
- 2014 թ. մայիսի 17-ին կազմակերպել է ուսանողական հանրապետական գիտաժողով՝ նվիրված Գավառի պետական համալսարանի հիմնադրման 20-ամյակին: Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվել են ութ մասնագիտական բաժանմունքներում:
- 2014 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին Հանրապետության օրվա առիթով, Ուսանողական խորհրդի հետ համատեղ, կազմակերպել է երթ դեպի Սարդարապատի հուշահամալիր:

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերությունը 2014-2015 ուսումնական տարում ծրագրել է կազմակերպել.

- Ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովներ.
- Հուշ-ցերեկույթներ՝ նվիրված հայ և օտարազգի գրողներին.
- Բանավեճեր, ֆիլմերի դիտում քննարկումներ, գրքերի քննարկումներ.
- Հայրենասիրական միջոցառումներ, հանդիպումներ ոչ միայն արցախյան հերոսամարտի մասնակիցների, այլև հերոսի մահով ընկած նահատակների ընտանիքների անդամների հետ.
- Միջոցառումների շարք՝ Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակին ընդառաջ.
- Ճանաչողական այցեր տարբեր գիտական կառույցներ, գիտահետազոտական ինստիտուտներ.
- «ԳՊՀ ինտելեկտուալներ» խորագիրը կրող մրցույթ.
- Բազմաբնույթ միջոցառումներ ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցականների հետ, այդ թվում՝ ինտելեկտուալ մրցույթներ:

Մեր առջև խնդիր ենք դրել ապահովել սերտ համագործակցություն այլ համալսարանների ՈւԳԸ-երի հետ և կատարել փորձի փոխանակում՝ հնարավորինս արդյունավետ իրականացնելով մեր գործառույթները:

Ն. Ա. Միրիբյան՝

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ

ԳՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան 11 տարի շարունակ ծավալում է իր գործունեությունը՝ նպատակ ունենալով խորացնել իրավաբան ուսանողների մասնագիտական գիտելիքները, գործնական հմտությունները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի բնակչությանը մատուցել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Հաշվետու ժամանակահատվածը նշանավորվեց ԳՊՀ իրավաբանական կլինիկայի տասնամյա գործունեության ամփոփմամբ, ինչի առիթով Իրավաբանական կլինիկայի հիմնադրման օրը՝ դեկտեմբերի 10-ին, կազմակերպվեց իրավաբան ուսանողների կլորսեղան, քննարկում՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» խորագրով: Ձեկուցումներով հանդես եկան Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի 14 իրավաբան ուսանողներ: Գիտաժողովին մասնակցեցին ԳՊՀ դասախոսներ, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության անդամներ:

ԳՊՀ-ի իրավաբանական կլինիկայում ուսանողներն ուսումնասիրում են կանանց և երեխաների իրավունքներ, փաստաբանական գործունեության հմտություններ, սովորում են մասնագիտական էթիկայի նորմեր, ընդունում են հաճախորդների, յուրացնում են իրավաբանական գործերի կազմման և վարման կանոնները, կազմում հայցադիմումներ, նամակներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, ծանոթանում են իրավաբանական խորհրդատվության փուլերին: ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի և ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայում սովորող ուսանողների կողմից իրավաբանական կլինիկայի ուսանողների համար 2014 թվականի փետրվար ամսից կազմակերպվեցին անգլերեն լեզվի և համակարգչային հմտությունների անվճար դասընթացներ:

Ի թիվս այլ առարկաների, Իրավաբանական կլինիկայում ներդրվել է նաև «Իրավաբանական գրագրություն» դասընթացը՝ յուրաքանչյուր ուսանողի տրամադրելով նաև դասընթացի դասագիրք:

2013-2014 ուսումնական տարվա ընթացքում իրավաբանական կլինիկայի ուսանողները ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վարչական և քաղաքացիական վերաքննիչ դատարաններում մասնակցել են դատաքննությունների՝ քննված գործերի մասին իրենց կարծիքը ներկայացնելով Իրավաբանական կլինիկայի «Փաստաբանական հմտություններ» դասընթացին:

Հաշվետու ժամանակահատվածում Իրավաբանական կլինիկայում խորացված ուսուցում են անցել 14 ուսանողներ, որոնք 84 քաղաքացիների տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

2013 թվականի հոկտեմբեր - դեկտեմբեր ամիսներին Իրավաբանական կլինիկայի ուսանողները, «Շրջիկ կլինիկա» ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի ութ գյուղական համայնքներում, տեղի բնակիչներին հուզող բազմաթիվ իրավաբանական խնդիրների մասին տվել պարզաբանումներ, պետական մարմիններին ուղարկել համապատասխան հարցումներ և գրություններ:

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի դասախոս, փաստաբան Վարդան Շանոյանը Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում մասնակցել է «Փախստականների ի-

րավունքների պաշտպանության արդի խնդիրները» թեմայով վերապատրաստման և ստացել է ակտիվ մասնակցության հավաստագիր:

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի կրթության ծրագրի ղեկավար Արսեն Ապրոյանը և Իրավագիտության ամբիոնի լաբորանտ Անի Ամիրյանը մասնակցել են ՄԱԿ-ի փախստականների հանձնակատարի գրասենյակի կողմից կազմակերպված 4 միջոցառումների՝ սեմինար-քննարկումների, որակավորման բարձրացման դասընթացների, կազմակերպված Երևան և Ծաղկաձոր քաղաքներում:

«Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակում Իրավաբանական կլինիկան 2013-2014 ուսումնական տարում «Քաղաքացիական իրավունք» և «Քաղաքացիական դատավարություն» թեմաներով կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, սեմինարներ, որոնց մասնակցել են շուրջ 30 քաղաքացիներ:

2014 թվականի փետրվարի 10-ին մեկնարկեց Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի «Իրավունք բոլորի համար» ծրագրի նոր փուլը, որի շրջանակում իրավաբանական կլինիկայի 10 ուսանողներ ՀՀ Գեղարքունիքի մարզի երեխաների համար կազմակերպեցին «Իրավունքի այբուբեն» մուլտաշարի դիտումներ և քննարկումներ: Առաջին հանդիպումը կազմակերպվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Առևտրաարդյունաբերական պալատի շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի (ՇՊԱԿ) գրասենյակում: Հանդիպմանը մասնակցել են ավելի քան 30 դպրոցահասակ երեխաներ:

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան փորձում է լուծել կարևոր խնդիր՝ օժանդակելով սոցիալապես անապահով քաղաքացիներին, անվճար խորհրդատվություն մատուցելով առաջին հերթին կանանց և երեխաներին, ինչպես նաև անվճարունակ անձանց:

Հատկանշական է, որ Իրավաբանական կլինիկան փորձում է սովորողների տեսական գիտելիքները հարստացնել պրակտիկ հմտություններով՝ ուսանողներին տալով անհրաժեշտ իմացություն՝ գործնական աշխատանքով զբաղվելու համար:

Իրավաբանական կլինիկայում դասավանդում են ժամանակակից դասավանդման մեթոդներին տիրապետող և տարբեր ծրագրերով արտերկրում վերապատրաստում անցած դասախոսներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Իրավաբանական կլինիկայում տարբեր թեմաներով սեմինարներ են անցկացրել ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիայի և այլ կազմակերպությունների փորձառու իրավաբաններ ու փորձագետներ:

Իրավաբանական կլինիկան համագործակցում է «Գավառի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության, Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի և Մարդու իրավունքների պաշտպանի մարզային գրասենյակների, ինչպես նաև «Գեղամա» հեռուստաընկերության, «Գեղարեզ» հասարակական կազմակերպության հետ, որոնց կողմից կազմակերպված բանավեճերին, բաց քննարկումներին իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերում նաև Իրավաբանական կլինիկայի դասախոսներն ու ուսանողները:

2015 թվականի հունվար ամսից ԳՊՀ իրավաբանական կլինիկան պատրաստվում է առավել ակտիվ համագործակցել ՄԱԿ-ի փախստականների հանձնակատարի գրասենյակի, ինչպես նաև «Առաքելություն Հայաստան» բարեգործական, հասարակական կազմակերպության հետ:

Իրավաբանական կլինիկան ծրագրում է նաև մասնակցություն ունենալ Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Էրասմուս +» ծրագրին և համագործակցություն

հատատել եվրոպական բուհերի իրավաբանական կլինիկաների, իրավապաշտպան կազմակերպությունների հետ:

Իրավաբանական կլինիկան շարունակում է համագործակցել Հայաստանի իրավաբանական կլինիկաների, Գավառի մանկատան հետ և ակտիվորեն աջակցում է Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, իֆչպես նաև համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքներին:

Ա. Յ. Ապրոյան

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի համակարգող

ԳՊՀ ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ուսումնական տարում տնտեսատեխնիկական անձնակազմն իրականացրել է իր գործառույթներից բխող միջոցառումներ, ԳՊՀ ղեկավարությանն առաջարկություններ է ներկայացրել համալսարանի տնտեսական, տեխնիկական և սպասարկման ոլորտում ԳՊՀ-ում կատարվող աշխատանքների և ծրագրերի վերաբերյալ, աջակցել է համալսարանի զարգացման ռազմավարական հայեցակարգի համապատասխան դրույթների կենսագործմանը, ապահովել է ներհամալսարանական պատշաճ տնտեսվարումը, սպասարկել և արդիականացրել է համալսարանի համակարգչային տեխնիկան, ստորաբաժանումներում ապահովել է ինտերնետ կապը, ինչպես նաև իրականացրել է իր կանոնակարգով նախատեսված այլ գործառույթներ:

2013 թ. սեպտեմբերին հաստատվեց Համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2013-2014 ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը:

Ըստ պլանի՝ կազմակերպվել է ավելի քան 22 աշխատանքային հանդիպում տնտեսատեխնիկական աշխատակիցների հետ, քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, ծագած խնդիրները, դրանց օպերատիվ լուծման միջոցները:

Համալսարանի տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվել է հետևյալ բաժինների ուժերով.

- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին (համակարգչային տեխնիկայի շահագործման մասնագետներ, ծրագրավորողներ, համալսարանի կայքէջի սպասարկման և այլ մասնագետներ),
- ✓ Տեխնիկական և անվտանգության ապահովման բաժին (ճարտարագետ, էլեկտրիկ, հյուսն, հնոցապաներ, սանտեխնիկ, բուժքույր և այլ մասնագետներ),
- ✓ Տնտեսական բաժին (պահեստապետ, գնորդ, պարետներ, տնտեսուհիներ, բանվոր),
- ✓ Սպասարկման բաժին (հսկիչներ, վարորդներ):

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով յուրաքանչյուր աշխատակցին առաջադրվող խնդիրները պարզաբանվել են, համակարգվել է նրանց կոլեկտիվ աշխատանքը:

2014 թվականի հունվարից 5%-ով բարձրացվել են տնտեսատեխնիկական անձնակազմի աշխատավարձերը: Բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման միջոցներ:

Հարկ է նշել, որ ուսումնագիտական գործընթացն անխափան ապահովելու նպատակով անհրաժեշտ նյութերով և սարքերով ապահովվել են համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները՝ համաձայն ԳՊՀ գնումների պլանի:

Հաշվետու ժամանակաշրջանում էապես բարելավվել է համալսարանի նյութատեխնիկական բազան: Սահմանված կարգով ձեռք են բերվել գրեմական պիտույքներ, ԳՊՀ գրադարանը համալրվել է նոր գրքերով:

Ձեռք են բերվել համակարգչային պահեստամասեր, տպիչներ, գրատախտակներ, մարզական գույք, ուսումնաօժանդակ նյութեր: Գնվել է նաև շինանյութ, տնտեսական ապրանքներ:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ: Ավարտվել են ԳՊՀ գլխավոր մասնաշենքի շքամուտքի հիմնանորոգման աշխատանքները, տեղադրվել է նաև հսկիչ-անցակետը: Բոլոր մասնաշենքերում փոխվել են պատուհանները, ներքին հարդարման աշխատանքներ են կատարվել ԳՊՀ բոլոր մասնաշենքերում:

Հիմնանորոգվել է համալսարանի հանրակացարանի առաջին հարկի միջանցքը, կառուցվել է լոգարան, ճաշարան՝ վերջինս համալրելով անհրաժեշտ կենցաղային սարքավորումներով: Հիմնանորոգվել են նաև օտարազգի ուսանողների համար նախատեսված երկու և դասախոսական երեք սենյակներ:

ԳՊՀ բնագիտական և հումանիտար մասնագիտությունների մասնաշենքերի տանիքները մասնակի վերանորոգվել են:

ԳՊՀ տրանսպորտային միջոցներով իրականացվել են բազմաթիվ ուղերթներ, միաժամանակ, ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի, գիտաճանաչողական էքսկուրսիաների կազմակերպման, ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների, ինչպես նաև արտասահմանյան հյուրերի սպասարկման և գիտաժողովների կազմակերպման համար օգտագործվել են այլ կազմակերպությունների կողմից վարձված տրանսպորտային միջոցները:

Պահպանության ծառայության աշխատանքների արդյունավետության բարձրացման և տեսահսկման ցանցի ընդլայնման նպատակով կտեղադրվեն 12 նոր տեսախցիկներ, հսկիչներին կտրամադրվեն ժամանակակից տեխնիկական միջոցներ, ծառայողական հագուստ:

ԳՊՀ մասնաշենքերում ամենօրյա աշխատանքներ են կատարվել նաև սանիտարական մաքրության պահպանման առումով: Դրան օժանդակել են ձեռք բերված նոր, արդյունավետ սարքավորումները: Հետևողական աշխատանքների արդյունքում սանիտարական մաքրության վիճակը համալսարանի մասնաշենքերում հասցվել է պատշաճ մակարդակի:

Համալսարանի կանաչ տարածքներում կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման ծավալուն աշխատանքներ՝ համագործակցելով «Օրիուս» բարեգործական կազմակերպության, ՀՀ պետական և ոչ պետական կառույցների հետ:

Համալսարանի տնտեսատեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվել են նաև մասնաշենքերի ջեռուցման ցանցերի և ջրագծերի մասնակի վերանորոգումներ, վերանորոգվել են բազմաթիվ հանգույցներ՝ ինչպես ջեռուցման, այնպես էլ ջրամատակարարման ցանցերում:

Համալսարանի կաթսայատան միջոցով ջեռուցվում են բոլոր մասնաշենքերը, այդ թվում՝ հանրակացարանը: Ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ են կատարվել բոլոր մասնաշենքերում և կաթսայատանը: Վերակառուցվել և վերանորոգվել են ջրատաքացուցիչ կաթսաները, նորացվել են ինքնաշխատ (ավտոմատ) հսկման համակարգերը:

Համալսարան էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումն ապահովելու համար կատարվել են մեծ ծավալի աշխատանքներ ինչպես տրանսֆորմատորային ենթակայաններում, այնպես էլ բուհի մասնաշենքերում՝ լսարաններում, լաբորատորիաներում ու միջանցքներում նորմալ լուսավորություն ապահովելու և լաբորատոր դասընթացների

անցկացման համար անհրաժեշտ սարքերն աշխատանքային բնականոն վիճակում պահելու ուղղությամբ:

2014 թվականի ձմռանը կավարտվեն համալսարանի տարածքի լուսավորությունը պատշաճ կերպով ապահովելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Համալսարանում ներքին և արտաքին որակյալ ու անխափան կապն ապահովելու նպատակով 2013 թվականի տարեվերջին «Ռոստելեկոմ» կազմակերպության կողմից ներդրվել է նոր, ժամանակակից թվային ավտոմատ հեռախոսակայան և հեռախոսացանց: Տարվա ընթացքում համալսարանի հեռախոսակապն աշխատել է անխափան, որն աշխատակիցների հետևողականության արդյունք է:

Համալսարանի փաստաթղթաշրջանառությունը ներկայումս կազմակերպվում է «Mulberry» ծրագրով, որն ապահովում են ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցները: 2014 թվականից գործարկվել է նաև նամակագրության ներքին շրջանառության էլեկտրոնային համակարգը:

Գավառի պետական համալսարանի տնտեսատեխնիկական գործունեության հիմնական ռազմավարական ուղղություններն են.

1. Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները բոլոր մասնաշենքերում.

- իրականացնել մասնաշենքերի տեխնիկական փուլային փորձաքննություն, ձևավորել հիմնանորոգման և վերակառուցման տարբերակված պլան և ապահովել դրա իրականացումը,
- պլանավորել և իրականացնել լսարանային ֆոնդի ընթացիկ վիճակի պարբերական գնահատումներ, պարբերական վերակառուցումներ և վերանորոգումներ, արդիականացում և համապատասխանեցում կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի զարգացման պահանջներին, որակյալ կրթության ապահովման հրամայականին,
- ապահովել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորում՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող տեխնիկայով և սարքավորումներով,
- ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ վերաբաշխելով տարածքները զարգացման նոր գերակայություններին համապատասխան,
- շարունակել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաների տեղադրումը:

2. Ապահովել համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացումն ու արդիականացումը՝ կրթական և հետազոտական ծրագրերի արդի պահանջներին համապատասխան.

- գնահատել համալսարանի ուսումնական լաբորատոր բազայի առկա վիճակը՝ ըստ կրթության և հետազոտությունների որակի ապահովման չափորոշիչների, և մշակել առկա լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային պլան՝ ըստ ֆակուլտետների,
- ապահովել լաբորատոր բազայի արդիականացման պլանների իրականացումն ըստ ճյուղային զարգացման հեռանկարային առաջնահերթությունների և տարի-

ների՝ նախատեսելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ համալսարանի և դոնոր կազմակերպությունների ներդրումներից,

- զարգացնելով և ընդլայնելով արտադրական գործընկեր կազմակերպությունների հետ հաջող համագործակցության առկա փորձը՝ ստեղծել նոր համատեղ հետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ՝ դրանք առաջին հերթին նպատակաուղղելով ուսանողության կրթական պահանջունքների բավարարմանը (գործնական օրինակ է ԳՊՀ Էկոլոգիայի գերազանցության կենտրոնը),
- նպաստել միջազգային դրամաշնորհների և ծրագրերի, ինչպես նաև առանձին գործատու կազմակերպությունների ու բարերար անհատների միջոցներով, կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան, առկա լաբորատոր բազայի վերազինման և նորերի ստեղծման նախաձեռնություններին:

3. Ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպման պահանջները բավարարող նյութատեխնիկական պայմաններ համալսարանի բոլոր ֆակուլտետներում.

- մշակել ԳՊՀ տարածքային պայմանների բարելավման նոր իրատեսական պլան և համալսարանում առկա ներքին և արտաքին բոլոր հնարավորություններն ուղղել դրա իրականացմանը՝ այդ նպատակով օգտագործելով Համալսարանի և դոնոր կազմակերպությունների, անհատների ներդրումները,
- ստեղծել համալսարանի նյութատեխնիկական բազայի հետագա զարգացման լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով ուսումնական գործունեության չափորոշիչ պահանջների լիարժեք կատարումը,
- կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի պահանջներին համահունչ՝ մշակել և իրականացնել ուսումնական տարածքների արդյունավետ օգտագործման հեռանկարային պլան՝ ներառելով նաև դեռևս չվերականգնված մասնաշենքի ապագայի հարցը,
- օգտագործել արտաքին հնարավորությունները՝ համալսարանի մարզական բացօթյա բազայի վերանորոգման համար,
- շարունակել զարգացնել Համալսարանի նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը՝ հիմնական շեշտը դնելով գործընկեր կազմակերպության հետ ձևավորված սերտ համագործակցային կապերի ընձեռած հնարավորությունների վրա:

4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումն ու որակական նոր մակարդակի ձեռքբերումը Համալսարանի կրթական և գիտական բոլոր գործընթացներում.

- զարգացնել համալսարանի Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գործունեությունը,
- զարգացնել համալսարանի տեխնոլոգիական կարողությունները, ապահովել հեռաուսուցման լսարանների համալսարանական ցանցի ստեղծման, շարունակական ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց՝ հեռաուսուցման կազմակերպման համար,
- կատարելագործել ուսուցման համացանցային հենքով էլեկտրոնային համապիտանի համակարգը (E-Learning.gsu.am, E-Library.gsu.am)՝ ապահովելով ուսումնական նյութերի շարունակական համալրում և արդիականացում,

- կատարելագործել ուսանողական համացանցային պորտալը (students.gsu.am)՝ կցված համացանցային-ուսուցման համակարգին՝ ապահովելով ուսումնառության, դասավանդման, խորհրդատվության և գնահատման էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը համալսարանի բոլոր ուսանողների համար: Անհատականացված պորտալը կծառայի ուսանողին նաև բուհն ավարտելուց հետո,
- խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը համալսարանի հետազոտական ծրագրերում, նախագծերում և մագիստրոսական ավարտական աշխատանքներում:

Նախատեսված ռազմավարական խնդիրների լուծումը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել կրթական գործընթացը համալսարանի բոլոր ֆակուլտետներում:

Ա.Յ. Ապրոյան

ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր

**2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ**

01.09.2013 Թ. ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սեպտեմբերմեկյան տոնական տրամադրությամբ Գավառի պետական համալսարանում մեկնարկվեց 2013-2014 ուսումնական տարին:

Գավառի պետական համալսարանի համար 2013-2014 ուսումնական տարին հայտարարված է որպես արդյունավետ աշխատանքի և ուսումնառության տարի:

Բուհում ձևավորված ավանդույթի համաձայն՝ կազմակերպվեց գեղեցիկ միջոցառում՝ նվիրված Գիտելիքի, գրի և դպրության օրվան:

02.09.2013 Թ. ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԹԵԼԱՎԻ ԱՍԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Օգոստոսի 25-ից սեպտեմբերի 1-ը Գավառի պետական համալսարանի պատվիրակությունը՝ Բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Տաթևիկ Զախարյանը, Ռուսաց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մելքոնյանը, Հայոց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի շրջանավարտ, ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հայարիի Մկրտչյանը մասնակցեցին Վրաստանի Հանրապետության Թելավիի Յակոբ Գոգեբաշվիլիի անվան պետական համալսարանի և «Շոթա Ռուսթավելի» գիտական հիմնադրամի համատեղ կազմակերպած ամառային դպրոցին:

Դպրոցի աշխատանքներում ներգրավված էին նաև Վրաստանի Հանրապետության միջազգային Սևծովյան համալսարանի, Ուկրաինայի Հանրապետության Նեժենի պետական համալսարանի, Ադրբեջանի Հանրապետության Գյանջայի պետական համալսարանի ուսանողները:

Թելավիի պետական համալսարանի պրոֆեսորները դասախոսություններ կարդացին Վրաստանի կախեթական, մեգրելիան, աջարական, աբխազական, գուրուլիան շրջանների և քաղաքային բանահյուսության (ֆոլկլորի), ինչպես նաև միջակայքի վերաբերյալ, որոնք ուղեկցվեցին բովանդակալից և հետաքրքիր շնորհանդեսներով:

06.09.2013 Թ. ՀԵՐԹԱՓՈՒՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողներն ընտրեցին ֆակուլտետի Ուսանողական խորհրդի և Տնտեսագետների ակումբի նոր նախագահներ և ԳՊՀ կարի արտադրամասի աշխատանքների համակարգող:

Մինչ քվեարկությանն անցնելը, Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի և տնտեսագետների ակումբի գործող նախագահներ Ալիտա Ղարաբաղյանը և Ռիմա Կոտոլկյանը լսարանին ներկայացրին համապատասխան կառույցների տարեկան հաշվետվությունները:

Քվեարկության արդյունքում Տնտեսագիտական ֆակուլտետի ուսխորհրդի, տնտեսագետների ակումբի նոր նախագահներ և ԳՊՀ կարի արտադրամասի աշխա-

տանքների համակարգող միաձայն ընտրվեցին համապատասխանաբար ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառում բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհիներ Շողիկ Վիրաբյանը, Վարդինե Վարդանյանը և Ֆինանսներ բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Ջուղեցյանը:

13.09.2013 Թ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ` ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Համլետ Ղաջոյանը ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական համակազմի ներկայացուցիչների համար հանդես եկավ խորհրդատվությամբ` «Դասավանդման և ուսումնառության մեթոդների գնահատման կառուցակարգերն ու գործիքները» թեմայով:

17.09.2013 Թ. ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՅՑ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատի նախաձեռնությամբ կազմակերպվել էր դասախոսություն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Հաշվապահական հաշվառում բաժնի 4-րդ և Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 2-րդ կուրսի ուսանողները եղան ՀՀ ԿԲ թանգարանում, շրջեցին Հայաստանի դրամաշրջանառության պատմության, ՀՀ արժույթի, դրամանիշերի և թղթադրամների ստեղծման գործընթացի, դրամի պաշտպանական հատկանիշների, կեղծիքների բացահայտման առկա մեթոդների մասին պատմող ցուցասրահներով:

ՀՀ ԿԲ այցելուների կենտրոնի դեկավար Ջարուհի Բարսեղյանը նրանց ներկայացրեց ՀՀ Կենտրոնական բանկի գործառույթները, կատարեց ՀՀ բանկային համակարգի, մասնավորապես, ՀՀ Կենտրոնական բանկի իրավասությունների վերլուծություն:

Ապագա տնտեսագետները եղան նաև «Պեկո գրուպ» պլաստիկ շշերի արտադրամասում և «Բարի Սամարացի» ՍՊԸ-ում, որտեղ ծանոթացան համապատասխանաբար պլաստիկ շշերի և մսամթերքի արտադրության փուլերին և առանձնահատկություններին:

18.09.2013 Թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագրի շրջանակում գործող Ուսանողական ծրագրային թիմի և ԳՊՀ Բանավեճի ակումբի հաշվետու հանդիպումը ԳՊՀ դասախոսների և ուսանողների հետ, որի ընթացքում բովանդակալից շնորհանդեսներով և հետաքրքիր տեսանյութերով ներկայացվեց 2012-2013 ուսումնական տարվա ընթացքում համապատասխան կառույցների գործունեության հաշվետվությունները:

19.09.2013 Թ. ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության անդամները կազմակերպել էին ճանաչողական հանդիպումներ ԳՊՀ բոլոր ֆակուլտետներ:

րի առաջին կուրսեցիների հետ՝ նպատակ ունենալով նրանց ծանոթացնելու ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության գործունեությանը:

ՈւԳԸ գործող կազմը լսարանին ներկայացրեց կառույցի պատմությունը, հիմնական նպատակը, գործառույթները, հայաստանյան պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ՈւԳԸ-ների և գիտակրթական ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությունները, 2010-2013 թվականներին ՈւԳԸ իրականացրած ծրագրերը և առաջիկա մեկ տարվա անելիքները:

20.09.2013 Թ. ԵՄ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ՝ ԳՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանում հյուրընկալվել էին Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական Միության պատվիրակության ներկայացուցիչները:

Հանդիպումը կազմակերպվել էր Եվրոպական Միության ֆինանսավորմամբ, Հայաստանում իրականացվող բարեփոխումների աջակցության ծրագրի շրջանակում:

ԵՄ պատվիրակության քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժնի ղեկավար Դիրկ Լորենցը ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսանողական անձնակազմի ներկայացուցիչների համար կարդաց դասախոսություն՝ Եվրամիություն-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ:

25.09.2013 Թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ «TEMPUS. ARARAT» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային համագործակցության կենտրոնում կայացավ «Տենպուս. Արարատ» ծրագրի մասնակիցների ամենամսյա հանդիպումը, որին մասնակցում էին Գավառի պետական համալսարանի պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և ծրագրի մասնակից այլ բուհերի ներկայացուցիչներ, ծրագրի համակարգողներ:

Հանդիպման նպատակն էր մշտադիտարկման արդյունքներով գնահատել նախորդ փուլերում կատարված աշխատանքը և պլանավորել հետագա գործունեությունը:

26.09.2013 Թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ «Եվրոպական հարևանության տարածքում բուհերի ինքնավարության խթանում» նախագծի շրջանակում 2014 թվականի մարտին կայանալիք աշխատաժողովի նախապատրաստական հանդիպումը:

Հանդիպմանը ներկա էին EUA-ի կառավարման բարեփոխումների և ինքնավարության բաժնի պետ Թոմաս Էսթերմանը և նախագծի մենեջեր Աննա-Լենա Քլաեյս-Կուլիկը:

Գավառի պետական համալսարանը ներկայացնում էր ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

Թոմաս Էսթերմանը լսարանին ներկայացրեց Եվրոպական համալսարանների ասոցիացիայի գործունեությունը և ծրագրի նպատակները:

Ծրագրի մասնակից բուհերից յուրաքանչյուրը ներկայացրեց իր կրթական հաստատությունը՝ խոսելով պատմության, կառավարման համակարգի, ուսանողների և աշխատակիցների թվաքանակի, բյուջեի և այլ հարցերի մասին:

**27.09.2013 Թ. ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒՅՈՒՆՆԵՐԸ**

Գավառի պետական համալսարանում մեկնարկեցին հեռակա ուսուցման ֆակուլտետի ընդունելության քննությունները՝ «Հայոց լեզու և գրականություն», «Ֆիզիկա» և «Կենսաբանություն» առարկաներից:

ԳՊԶ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Նելլի Կուտուզյանը մինչ քննության սկիզբը դիմորդներին ներկայացրեց ընդունելության քննություններին մասնակցելու պահանջները, գնահատականների բողոքարկման կարգը:

Քննական տոմսերով փակ ծրարները բացվեցին միայն դիմորդների և նրանց ծնողների ներկայությամբ: Ընդունելության քննություններն անցան սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի ընդունելության քննությունները շարունակվեցին մինչև հոկտեմբերի 13-ը:

27.09.2013 Թ. ՆԻՇԱՆՅԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հերթական հաշվետու հանդիպումը Հայ օգնության ֆոնդի կրթական-գիտական ծրագրերի համակարգող Էդիկ Կարապետյանի և հիշյալ ծրագրերի համակարգողի օգնական Մանե Խաչատրյանի հետ:

Հանդիպման ընթացքում ամփոփվեցին ժիրայր Նիշանյանի անվան կրթաթոշակառուների 2012-2013 ուսումնական տարվա առաջադիմության արդյունքները, և գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին հանձնվեցին շնորհակալագրեր:

02.10.2013 Թ. ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ...

Գավառի պետական համալսարանի Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվել էր յուրօրինակ հաշվետու միջոցառում՝ նվիրված ԳՊԶ ՈւԳԸ գործող կազմի աշխատանքների 3-ամյակին:

Լսարանը վերածվել էր գեղեցիկ հեռուստատեսային տաղավարի: Հաղորդումը նպատակ ուներ լսարանին ներկայացնելու վերջին մեկ տարվա ընթացքում Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնած և իրականացրած ծրագրերի համառոտ ամփոփագիրը:

04.10.2013 Թ. ՆԻՑՇԵՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոկտեմբերի 1-3-ը Երևանի պետական համալսարանում կայացավ միջշեագիտությանը նվիրված միջազգային գիտաժողով՝ «Նիցշեն մշակութային համատեքստում» խորագրով: Գիտաժողովը կազմակերպվել էր ԵՊԶ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնի կողմից:

Եռօրյա գիտաժողովում Նիցշեն ներկայացվեց գրականագիտության, փիլիսոփայության, պատմագիտության և այլ տեսանկյուններից:

3-րդ միջազգային գիտաժողովին մասնակցեցին միջշեագիտությամբ զբաղվող ավելի քան 50 մասնագետներ ինչպես հայաստանյան բուհերից, այնպես էլ Ռուսաստան-

նից, Վրաստանից, Գերմանիայից, Հնդկաստանից, Բուլղարիայից, Լեհաստանից և Լիտվայից:

Գիտաժողովին զեկուցմամբ հանդես եկավ Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նորայր Ղազարյանը, ով համեմատական զուգահեռներ անցկացրեց Նիցշեի և Եդիշե Չարենցի միջև:

05.10.2013 Թ. ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը կազմակերպել էր առաջին կուրսեցիների բարի գալուստի հանդիսավոր միջոցառում:

Միջոցառման ընթացքում հանդիսավոր կերպով հանձնվեցին ԳՊՀ առաջին կուրսեցիների ուսանողական տոմսերը, ցուցադրվեց Գավառի պետական համալսարանի մասին պատմող տեսանյութ, հնչեցին գեղեցիկ երաժշտական կատարումներ:

05.10.2013 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ը՝ ԺՊԻՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Հոկտեմբերի 5-ին՝ ժպիտի միջազգային օրը, Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը հանդես էր եկել յուրօրինակ նախաձեռնությամբ. ՈւԳԸ անդամները, շրջելով ԳՊՀ բոլոր կուրսերով և կառուցվածքային ստորաբաժանումներով, համալսարանականներին բաժանեցին «ժպտացող դեմքեր»՝ «Smile»-իկներ՝ կոչ անելով միշտ ժպտալ, ժպտալ անգամ դժվարությունների դեպքում:

11.10.2013 Թ. ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գավառի քաղաքային զբոսայգում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Գեղարքունիքի մարզային կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր «Տերյանական ընթերցումներ» խորագիրը կրող գրական ցերեկույթ՝ նվիրված գրող, հրապարակախոս, քնարերգու Վահան Տերյանին:

Գրական յուրօրինակ տոնին ներկա էին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Գեղարքունիքի մարզային կենտրոնի անդամներ, Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության և Սևանի երիտասարդական կենտրոնի ներկայացուցիչներ:

Աշնանային մեղմ և գույնզգույն տերևաթափի ներքո երիտասարդ տերյանասերները ներկայացրին հեղինակի կյանքը և գրական գործունեությունը, ընթերցեցին թախծոտ և լուսավոր սիրո անկրկնելի երգչի բանաստեղծություններից, մեջբերումներ կատարեցին նրա գրականագիտական հոդվածներից, արչակիցների՝ բանաստեղծին ուղղված խոսքերից:

Գրական հանդիպման ընթացքում հնչեցին երգեր, որոնք գրվել են Վահան Տերյանի բանաստեղծությունների հիման վրա:

**11.10.2013 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ «ERASMUS MUNDUS. HERMES»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

Յոկտեմբերի 8-10-ը Վրաստանի Յանրապետության Թբիլիսիի պետական համալսարանում տեղի ունեցավ «Erasmus Mundus. Hermes» ծրագրի առաջին աշխատաժողովը, որին Գավառի պետական համալսարանից մասնակցեց ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

Ծրագրի համակարգող Աթենքի ազգային և Կապոդիսթրիան համալսարանի պրոֆեսոր Անալիա Մոսերը ներկայացրեց ծրագրի ժամանակացույցը, դիմումների ընդունման, քննարկման և ամփոփման կարգերը:

12.10.2013 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ՝ ՎԻՐՏՈՒԿԱԼ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Պաշտոնապես գործարկվեց Գավառի պետական համալսարանի ուսանողական պորտալը, որը համացանցային տիրույթում հասանելի է www.student.gsu.am հասցեով:

ԳՊՀ ուսանողական պորտալում ներկայացված է բուհի ուսանողական համակազմի ընդհանուր գործունեության, բուհի ուսանողական ինքնակառավարման մարմինների, ակումբների և դասընթացների վերաբերյալ տեղեկատվություն:

17.10.2013 Թ. ԻՍԱՐԱԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Յոկտեմբերի 17-ը հայ անվանի բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ, Մեծն Վարպետ Ավետիք Իսահակյանի մահվան տարելիցի օրն է, ինչի կապակցությամբ ԳՊՀ ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել էր գրքի քննարկում:

Քննարկման առարկան Իսահակյանի գրական-ստեղծագործական կյանքի զոհարը՝ «Աբու Լալա-Մահարի» պոեմն էր:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողները ներկայացրին արձակագրի գործունեության համառոտ բնութագիրը, ապա անցան վերոհիշյալ պոեմի քննարկմանը:

Մասնակիցները հարցերի և պատասխանների միջոցով բացահայտեցին գրքում արձարժված խնդիրները, հիմնական գաղափարները, խոսեցին մարդ արարածի նկատմամբ արաբ բանաստեղծ Աբու Մահարու ունեցած վերաբերմունքի, նրա դժգոհության հասարակական հիմքերի, տիրող սոցիալական անարդարության, պոեմում արձարժվող կեղծիքի, պատվի, հարգանքի, հարստության, ամբոխի, ընկերության, աշխարհի, կյանքի, կնոջ, մոր և արևի գաղափարների մասին՝ անդրադառնալով հերոսի կողմից յուրաքանչյուրի ընկալման ձևին:

**17.10.2013 Թ. ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ «TEMPUS. ARARAT»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

Գավառի պետական համալսարանում կազմակերպվել էր շնորհանդես «Tempus. Ararat» ծրագրի վերաբերյալ:

Շնորհանդեսի նպատակն էր ԳՊՀ աշխատակիցներին ներկայացնել Եվրոպական Միության հիշյալ ծրագրի շրջանակում Իտալիայի Պալերմո քաղաքում կայացած վերապատրաստման դասընթացի վերաբերյալ հաշվետվություն, որին Գավառի պետական

համալսարանից մասնակցել էին ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետներ Սաթենիկ Սարգսյանը և Լիլիթ Թոռչյանը:

24.10.2013 Թ. ԻՆՉՊԵՄ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ

Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ՝ հոկտեմբերի 24-ին Գավառի պետական համալսարանում անցկացվեց «Որոնողական աշխատանքների և տարհանման իրականացում երկրաշարժի հետևանքով վնասված բարձրահարկ շենքերում» թեմայով ուսումնավարժություն:

Ըստ նախապես մշակված ընթացակարգի՝ տեղի ունեցած վթարի վերաբերյալ ահազանգից թույլտվություն անց բուհի տարածք ժամանեցին Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության՝ Գավառի թիվ 32 հրշեջ-փրկարարական ջոկատի անձնակազմը, «Գավառի հիվանդանոց» և «Գավառի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ների՝ աղետների բժշկության, Գավառի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի վթարավերականգնողական խմբերը, ՀՀ Ոստիկանության Գավառի բաժնի ներկայացուցիչներ:

Արդեն տեղում հրշեջ փրկարարական ջոկատի կողմից կատարվեցին տարածքի հետախուզում, իրավիճակի գնահատում: Արդյունքները հաղորդվեցին օպերատիվ շտաբ: Ջուզահեռաբար կազմակերպվեցին որոնողափրկարարական աշխատանքներ՝ անվտանգ գոտի տարհանելով Գավառի պետական համալսարանի ողջ համակազմին և տուժածներին ցուցաբերելով առաջին բուժօգնություն:

28.10.2013 Թ. ԲԵՐՔ ՈՒ ԲԱՐԻՔԻ ՓԱՌԱՏՈՆ ԳԱՎԱՌՈՒՄ

Հոկտեմբերի 27-ին «Վորլդ Վիժն. Հայաստան» Գավառի տարածքային զարգացման ծրագրի, «Գեղարեգ» կրթամշակութային հասարակական կազմակերպության և «Քյավառ» հեռուստաընկերության համատեղ ջանքերով կազմակերպվել էր Բերք ու բարիքի փառատոն:

Գավառի մանկատան, Գավառի ավագ դպրոցի, «Վորլդ Վիժն. Հայաստան» Գավառի տարածքային զարգացման ծրագրի, «Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպության, «Քյավառ» հեռուստաընկերության, Նորատուսի գյուղապետարանի և այլ հաստատությունների պատվիրակները հատուկ նախատեսված տաղավարներում ներկայացրին Նոր Բայազետի ազգային խոհանոցը, հայկական ավանդական կերակրատեսակները: Համայնքները ստացած պատվոգրերի, գավաթների և այլ պարգևների տեսքով ներկայացրին մեկ տարվա ընթացքում գրանցած հաջողությունները: Փառատոնը նշանավորվեց նաև ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառքով:

Գավառի պետական համալսարանը ևս մասնակցեց փառատոնին՝ ներկայանալով իր յուրօրինակ «բերք ու բարիքով»: ԳՊՀ տաղավարում ցուցադրվեց ավելի քան 20 տարվա ընթացքում բուհի դասախոսական անձնակազմի ջանքերով տպագրված մենագրություններ, դասագրքեր, գիտական հոդվածների ժողովածուներ, ԳՊՀ ամենամյա հաշվետվություններ և տեղեկատվական թերթիկներ:

**28.10.2013 Թ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «TEMPUS. LAMANCHE»
ԾՐԱԳՐԻ ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՏԱԺՈՂՎԸ**

Գավառի պետական համալսարանի ներկայացուցիչները՝ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և Ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռչյանը, հոկտեմբերի 21-ից 26-ը մասնակցեցին Եվրոպական Միության «TEMPUS. LAMANCHE. Բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների նախաձեռնում և կառավարում» ծրագրի երրորդ աշխատաժողովին, որը տեղի ունեցավ Պորտուգալիայի Հանրապետության Բրագանսի պոլիտեխնիկական ինստիտուտում:

Աշխատաժողովին մասնակցեցին 29 բուհերի պատվիրակություններ, որոնք ներկայացրին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Պորտուգալիայի, Բուլղարիայի, Հայաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի, Վրաստանի բարձրագույն կրթական համակարգերը:

Յուրաքանչյուր բուհ ներկայացրեց իր հաջողված փորձը, տեղի ունեցավ բարձրագույն կրթության ոլորտում առաջավոր փորձի փոխանակում:

Գավառի պետական համալսարանը ներկայացրեց ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի և հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի հիմնական դրույթները, դրանց կիրառման սկզբունքներն ու կառուցակարգերը, որոնք արժանացան գործընկեր բուհերի հավանությանը:

**31.10.2013 Թ. «ՕՐԱՆԺ. ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԳՊՀ-ՈՒՄ**

Գավառի պետական համալսարան կատարած այցով «Օրանժ. Հայաստան» հիմնադրամն ազդարարեց հայաստանյան բուհերի սոցիալապես անապահով ուսանողներին կրթաթոշակների տրամադրման ծրագրի նոր փուլի մեկնարկը:

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց «Օրանժ. Հայաստան» ընկերության տնօրեն, հիմնադրամի խորհրդի նախագահ Ֆրանսիս Ժելիբտերին, ընկերության գլխավոր քարտուղար Նազարեթ Սեֆերյանին և համալսարանների հետ ծրագրերի համակարգող Նունե Մելքոնյանին:

«Օրանժ. Հայաստան» հիմնադրամի կողմից ԳՊՀ բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով 10 ուսանողների տրամադրվեցին կրթաթոշակներ:

02.11.2013 Թ. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանում էին Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի ներկայացուցիչները:

Հանդիպման նպատակը ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի ուսանողներին դպրոցի գործունեության հիմնական ուղղություններին ծանոթացնելն էր:

Դպրոցի փոխտնօրեն Արտակ Գևորգյանը և փաստաբան, Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանը ԳՊՀ ուսանողներին ներկայացրին Փաստաբանական դպրոցի հիմնադրման պատմությունը, հիմնական առաքելությունը, նպատակները, խնդիրները, հիմնական գործառնությունները, խոսեցին ընդունելության կարգի,

քննությունների, մեկամյա կրթության տեսական և գործնական ուղղությունների, դպրոցի շրջանավարտներին աշխատանքի տեղավորման հնարավորությունների մասին:

06.11.2013 Թ. ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ՏՐԱՍՍԲԱՆՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը նույնիսկ վեցից ինը հայտարարել էր ԳՊՀ «ինտելեկտուալ» շաբաթ՝ հանդես գալով նախաձեռնությամբ՝ կազմակերպելու և անցկացնելու «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի համալսարանական մրցաշար, որին մասնակցեցին Բանասիրական, Բնագիտական, Տնտեսագիտական և Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների թիմերը:

07.11.2013 Թ. ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ «ՏԵՄՊՈՒՄ. ԱՐԱՐԱՏ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Նույնիսկ 2-6-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կոբլենս քաղաքում տեղի ունեցավ «Տեմպուս. Արարատ» ծրագրային թիմի հերթական աշխատաժողովը:

Հանդիպմանը մասնակցում էին հայաստանյան ութ բուհերի, ինչպես նաև Գերմանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Լատվիայի համալսարանների և համագործակից այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գավառի պետական համալսարանը ներկայացնում էին ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և ԳՊՀ տեղեկատվական համակարգերի մասնագետ Սիփան Արևշատյանը:

Հանդիպման ընթացքում ներկայացվեց ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի կողմից իրականացված գործողությունների տարեկան հաշվետվությունը և հետագա անելիքները:

07.11.2013 Թ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Միավորված ազգերի կազմակերպության հայկական ասոցիացիայի «Վստահության կառուցումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ Լիանա Մակվեցյանի և Սոֆիկ Մաթևոսյանի ջանքերով կազմակերպվել էր սեմինար ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ:

Ուսանող-սեմինարավարները խոսեցին կրթության հասկացության, անձի կայացման գործում նրա ունեցած դերի, կրթության իրավունքի ներպետական և միջազգային իրավական հիմքերի մասին, մեջբերեցին ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթները կրթության իրավունքի վերաբերյալ, համեմատական զուգահեռներ անցկացրին ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ձևերի միջև:

08.11.2013 Թ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարան էին այցելել Եվրոպական Միության «TEMPUS» և «ERASMUS MUNDUS» դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունության ծրագրերի Բրյուսելի գրասենյակի ղեկավար Ֆրանց Շթայդերը, «TEMPUS» ծրագրի

ազգային գրասենյակի աշխատանքների համակարգողներ Լանա Կառլովան և Անի Թորոսյանը:

Հանդիպման նպատակն էր անցկացնել մշտադիտարկում «TEMPUS. ARARAT» և «TEMPUS. HEN-GEAR» ծրագրերի վերաբերյալ՝ պարզելու, թե ինչպիսի աշխատանքներ են տարվել Գավառի պետական համալսարանում վերջին մեկ տարվա ընթացքում՝ համաձայն աշխատանքային ժամանակացույցի:

Հանդիպման մասնակիցները հարցերի և պատասխանների միջոցով քննարկեցին երկու ծրագրերի էությունը, նպատակները, պահանջները, խնդիրները, ԳՊՀ շրջանավարտների տվյալների հավաքագրման աշխատանքի փուլերը, «TEMPUS. ARARAT» ծրագրի շրջանակում ստեղծված «Համալսարան-աշխատաշուկա» համագործակցության կենտրոնի գործունեության ոլորտները, կենտրոնի համակարգողների աշխատանքային պարտականությունները, իրականացրած ծրագրերը և անելիքները:

10.11.2013 Թ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

Նոյեմբերի 10-ին ամբողջ աշխարհը նշում է Գիտության կամ, ինչպես ընդունված է ասել, «Գիտությունը հանուն խաղաղության և զարգացման» միջազգային օրը:

Այս կապակցությամբ ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ հայտարարվել էր էսսեների մրցույթ՝ «Գիտելիքը՝ ապագայի երաշխիք» խորագրով:

Մրցույթի արդյունքների ամփոփումից հետո լավագույնը ճանաչվեց Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի 2-րդ կուրսի ուսանող Նարեկ Ենոբյանի աշխատանքը:

13.11.2013 Թ. ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՄԻՆԱՐ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ սեմինար-քննարկում ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) վերաբերյալ:

Սեմինարը կազմակերպվել էր «Հարավային Կովկասի երկրներում Ռուսաստանի Դաշնության ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ու ազդեցության նվազեցմանն ուղղված երկրների համագործակցություն» ծրագրի շրջանակում «Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպության և «World Vision. Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից:

Ծրագիրն ուղղված էր միգրանտների շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելմանը:

13.11.2013 Թ. ՈՐԱՎԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանում մեկնարկեց որակի ներքին ապահովման վերաբերյալ հնգօրյա սեմինարների առաջին փուլը:

Սեմինար-վերապատրաստումները կազմակերպվել են ՀՀ որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից:

Սեմինարավար, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Հյուսիսային համալսարանի որակի ապահովման վարչության պետ Լիլիթ Զաքարյանը լսարանին ներկայացրեց վերապատրաստումների մեթոդաբանությունը՝ խոսելով գործընթացի մշտադիտարկման, դրա իրականացման հնարավոր ուղիների, սկզբունքների, փուլերի, SWOT վերլուծություն կատարելու չափանիշների, գնահատման համակարգի մասին:

**14.11.2013 Թ. ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿԸ՝ ԻՍՊԱՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱԼԵՆՍԻԱՅԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Գավառի պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ Ռուզաննա Սարգսյանը սեպտեմբերի 29-ից նոյեմբերի 2-ը «Erasmus Mundus» դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում եղավ Իսպանիայի Թագավորության Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանում, որտեղ Կիրառական լեզվաբանության բաժանմունքի օրինակով ծանոթացավ իսպանական բուհական համակարգին, օտար լեզուների դասավանդման ժամանակակից մեթոդներին, հետևեց բուհում ներդրված էլեկտրոնային ուսուցման ներքին ցանցի աշխատանքներին և այդ փորձը ներկայացրեց ԳՊՀ աշխատակազմին:

**15.11.2013 Թ. XVII ԱՄԵՆԱՄՅԱ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ**

Գավառի պետական համալսարանի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի և ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել էր Կենսաբանության բաժնի ամենամյա XVII գիտաժողովը՝ «Ի՞նչ է կյանքը. ներկան և ապագան» խորագրով՝ նվիրված Գավառի պետական համալսարանի հիմնադրման 20-ամյակին:

15.11.2013 Թ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՕՐ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանում հայտարարվել էր Եվրոպական ծրագրերի տեղեկատվական օր:

ԳՊՀ պրոռեկտոր, միջազգային ծրագրերի համակարգող Արսեն Ապրոյանը շնորհանդեսի ձևով լսարանին ներկայացրեց հիշյալ ծրագրերի մասնակից եվրոպական բուհերին, համապատասխան կրթական ծրագրերին հատկացված տեղերը և այն նախապայմանները, որոնց բավարարման դեպքում ուսանողը հնարավորություն է ստանում ուսումը շարունակելու ծրագրերին մասնակից եվրոպական բուհերից մեկում:

16.11.2013 Թ. ԶԵԿՈՒՅՑ ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Բաց հասարակության հիմնադրամներ. Հայաստան» կազմակերպության նախաձեռնությամբ Գավառի պետական համալսարանում ներկայացվեց 2013 թվականին «Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. նպատակային վերլուծություն» ծրագրի շրջանակում կատարված ուսումնասիրության վերաբերյալ զեկույցը:

Չեկույցը պատրաստվել էր Կենտրոնական եվրոպական համալսարանի բարձրագույն կրթական վերլուծական կենտրոնի կողմից և նպատակ ուներ ներկայացնելու Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտի վերաբերյալ իրականացրած անկախ ուսումնասիրության արդյունքները, վեր հանելու ոլորտում առկա խնդիրներն ու բացթողումները, գնահատելու Բոլոնյան կրթական համակարգին անցում կատարելու և դրանից բխող բարեփոխումների արդյունավետությունը, դիտարկելու բարձրագույն կրթության դերը բաց հասարակության կայացման և զարգացման հարցում:

Հիշյալ հետազոտությունն իրականացրած թիմի անդամ Կուն Գևենը լսարանին ներկայացրեց զեկույցի հիմնական դրույթները, խոսեց զեկույցում վեր հանված խնդիր-

ների, մասնավորապես՝ Բոլոնյան գործընթացի արդյունավետության մակարդակի, հայաստանյան բուհերի ֆինանսական դժվարությունների, դասախոսների ցածր աշխատավարձերի, բուհերի կառավարման համակարգի, առկա կոռուպցիոն ռիսկերի, և, ի վերջո, Հայաստանում ցավալի խնդիր համարվող երիտասարդների արտագաղթի մասին:

17.11.2013 Թ. ԳՊՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի մեծ դահլիճում կազմակերպվել էր գեղեցիկ միջոցառում՝ նվիրված ուսանողների միջազգային օրվան:

Տոնը խորհրդանշական էր այն առումով, որ միջոցառման շրջանակում կայացավ «Լավագույն ուսանող-2013» մրցանակաբաշխությունը:

ԳՊՀ յուրաքանչյուր ֆակուլտետից մեկ ուսանող և մեկ կուրս արժանացան լավագույնի կոչման, միաժամանակ հավաստագրեր ստացան ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած և հանրապետական մրցույթներում հաղթող ճանաչված ուսանողները:

17.11.2013 Թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետ ընդունված առաջին կուրսեցիների և նրանց ծնողների հետ:

Հանդիպման ընթացքում ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանն անդրադարձավ ԳՊՀ-ում ներդրված էլեկտրոնային ուսուցման «E-learning-GSU» համակարգին:

Ուսանողներին բաժանվեցին Հեռակա ուսուցման ֆակուլտետի մասին պատմող տեղեկատվական թերթիկներ և «E-learning-GSU» համակարգի տիրույթում համապատասխան մասնագիտության մուտքաբառը և գաղտնաբառը՝ պարզաբանելով համակարգից օգտվելու անհրաժեշտ կանոնները:

23.11.2013 Թ. ԲԻԶՆԵՍ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում կազմակերպվել էր ուսանելի դերախաղ՝ բիզնեսի պլանավորման հմտությունների վերաբերյալ:

Դասընթացի նպատակն էր ուսուցողական դերախաղի միջոցով անդրադառնալ բիզնես պլանավորմանը, ներկայացնել գործարարության ոլորտում առկա հրատապ խնդիրները, առաջադրել դրանց լուծման արդյունավետ ուղիներ:

Հանդիպման ավարտին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը շնորհակալագիր հանձնեց Վարչավայի էկոնոմիկայի դպրոցի պրոֆեսոր Աննա Կարմանսկային, ով այդ ընթացքում «Հաշվապահության զարգացման հիմնարար տեսությունը՝ Հայաստանում կատարած իրավիճակային վերլուծության հիման վրա» («Grounded theory of Accounting. Based on the case study of Armenia») թեմայով հետազոտական աշխատանք էր կատարում Գավառի պետական համալսարանում:

**23.11.2013 Թ. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ գիտական սեմինար՝ «Տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը կրթական համակարգում» թեմայով:

Գիտական սեմինարը վարում էր Բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու Մամիկոն Հակոբյանը:

Գիտական սեմինարի նպատակն էր ուսանողներին և դասախոսներին ներկայացնել նոր ծրագրային փաթեթներ, որոնք նպաստում են ուսուցման գործընթացի արդյունավետությանը:

Պարոն Հակոբյանը ներկայացրեց «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Պատմություն», «Գրականություն», «Անգլերեն լեզու», «Մաթեմատիկա» և այլ առարկաների դասավանդման մեթոդոլոգիան՝ տարբեր համակարգչային անիմացիոն ծրագրերի միջոցով:

24.11.2013 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՅՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Նոյեմբերի 23-ին Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում կայացավ «Ռուսաստանի գլխավոր երգերը» առաջին հանրապետական ուսանողական երգի մրցույթ-փառատոնի հաղթողների շքահամերգը:

Համերգը կազմակերպվել էր «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոնի և Առնո Բաբաջանյանի հիշատակի միջազգային հիմնադրամի կողմից՝ Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան, Հայաստանում «Ռոսստորոդնիչեստվո»-ի ներկայացուցչության և «Русский мир» հիմնադրամի աջակցությամբ:

Մրցույթին մասնակցության հայտ էին ներկայացրել Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական հաստատությունների 65 ուսանողներ:

Մրցույթն ընթացավ երեք ընտրական փուլով, որոնց շրջանակում հայտատուները երգեցին հայ և ռուս կոմպոզիտորների էստրադային երգերը:

Ժյուրիի կազմում էին ՀՀ ժողովրդական արտիստներ, կոմպոզիտորներ Երվանդ Երզնկյանը, Մարտին Վարդազարյանը, կոմպոզիտոր Մելիք Մավիսակալյանը, ՀՀ ժողովրդական արտիստ Ռաիսա Մկրտչյանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը, Առնո Բաբաջանյանի հիշատակի միջազգային հիմնադրամի պատասխանատու քարտուղար Ջուլիետա Ավետիսյանը, որոնց անաչառ ընտրությամբ եզրափակիչ փուլ անցան 20 մասնակիցներ: Վերջիններիս թվում էր նաև Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Արփինե Խանդանյանը:

ԳՊՀ ուսանողուհին հանդես եկավ Մարկ Մինկովի «Не отрекаются любя» երգով և մրցույթ-փառատոնում զբաղեցրեց երրորդ պատվավոր հորիզոնականը:

28.11.2013 Թ. ՁԻԱՅ-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՎԱՆ ԸՆԴԱՈԱԶ

«Վորլդ Վիժն. Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպությունը, «Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպությունը և ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը, միանալով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության Եվրոպական շաբաթվա և ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա միջոցառումներին, Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում իրականացրին միջոցառումների շարք՝ «Հետազոտվիր և ապրիր» խորագրով, որին միացավ նաև Գավառի պետական համալսարանը:

Օրագրի շրջանակում «Փոփոխությունների թատրոնի» դերասանական անձնակազմի կողմից բեմականացվեց ՄԻԱՎ-ի կանխարգելման թեմայով «Ու՞մ մտքով կանցներ...» ինտերակտիվ ֆորում-ներկայացումը:

Ֆորում-թատրոնից հետո ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի բժիշկ-մասնագետների կողմից համալսարանում կազմակերպվեցին ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և թեստավորում: Ցանկացողները, հանձնելով արյան մուշ, ընդամենը 20 րոպեի ընթացքում հետազոտվեցին և պարզեցին սեփական ՄԻԱՎ կարգավիճակը:

30.11.2013 Թ. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Նոյեմբերի 28-29-ը Ծաղկաձոր քաղաքում տեղի ունեցավ «Փախստականների պաշտպանության հարցերով» Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գործերով հանձնակատարի աշխատաժողովը:

Աշխատաժողովին մասնակցում էին միջազգային տարբեր կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգային հարցերը վերաբերում էին փախստականների կարգավիճակի որոշման ընթացակարգին, Սիրիայից տեղահանված անձանց իրավական պաշտպանության խնդիրներին, իրավապաշտպան և աջակից կազմակերպությունների համագործակցության ակտիվացման ուղղություններին:

Աշխատաժողովին Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի գործունեության և «Հանրային տեղեկատվության և իրազեկման բարձրացման» մասին զեկուցեց ԳՊՀ իրավաբանական կլինիկական կրթության ծրագրի ղեկավար Արսեն Ապրոյանը:

30.11.2013 Թ. ԴՊՐՈՑ-ԲՈՒՀ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետը դպրոց-բուհ կապի ամրապնդման ծրագրի շրջանակում հյուրընկալել էր Նորատուսի N 3 միջնակարգ դպրոցի ավարտական դասարանների աշակերտներին և դպրոցի տնօրեն տիկին Արև Բաղդասարյանին:

Բուհի և դպրոցի միջև նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ աշակերտների համար մշակվել էր հատուկ ծրագիր, որի շրջանակում վերջիններս լսեցին դասախոսություններ իրենց նախընտրած թեմաներով:

30.11.2013 Թ. ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ բուհի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանի «Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը» մենագրության շնորհանդեսը:

Գրքի շնորհանդեսին ներկա էին պրոֆեսորի ընտանիքի անդամները, համալսարանական գործընկերներ, ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

Ուսանողները մանրամասն ներկայացրին մենագրության՝ գրական ասպարեզ բերած նորությունները, մեջբերեցին հատվածներ:

Ցուցադրվեցին Մաթևոսյանի վիպակների հիման վրա նկարահանված ֆիլմերից հատվածներ:

03.12.2013 Թ. ՀԵՐԹԱՎԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ «TEMPUS. HEN-GEAR» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Դեկտեմբերի 2-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում տեղի ունեցավ «TEMPUS. HEN-GEAR - Բարձրագույն կրթական ցանց՝ ուղղված Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանավարտների աշխատունակությանը» ծրագրի (www.hen-gear.net) ինստիտուցիոնալ և ղեկավար կոմիտեի հերթական հանդիպումը:

Հանդիպմանը մասնակցում էին Իտալիայի Հանրապետության Բոլոնիայի «Ալմա Լաուրեա» միջհամալսարանական կոնսորցիումի հիմնադիր տնօրեն, պրոֆեսոր Անդրեա Կամելլին, ներկայացուցիչներ գործընկեր համալսարաններից և կազմակերպություններից:

Գավառի պետական համալսարանը ներկայացնում էին բուհի «TEMPUS» ծրագրերի համակարգող Արսեն Ապրոյանը, ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետներ Վարազդատ Ավետիսյանը և Սիփան Արևշատյանը:

Հանդիպման առաջին մասում նախագծի համակարգող Իտալիայի «Ալմա Լաուրեա» միջհամալսարանական կոնսորցիումի պատվիրակը ներկայացրեց «HEN-GEAR» նախագծի հիմնական նպատակներն ու խնդիրները, ակնկալվող արդյունքները և ընթացիկ վիճակը:

Պրոֆեսոր Անդրեա Կամելլին ներկայացրեց «Ալմա Լաուրեայում» և Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների աշխատունակության բարձրագույն կրթական ցանցի ընդհանուր նկարագիրը:

Հանդիպման երկրորդ մասում «HEN-GEAR» ծրագրին անդամակցող հաստատությունները և շահագրգիռ կողմերը քննարկեցին նախագծի շրջանակում հետագա անելիքները, առկա խնդիրները և առաջարկեցին դրանց լուծման ուղիներ՝ այն նպատակով, որպեսզի ստեղծվի պահանջարկի և առաջարկի միասնական համակարգ՝ հիմնված բուհերի շրջանավարտների մասին տվյալների բազայի վրա:

**04.12.2013 Թ. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԻԴԵՐԼԱՆԴԱԿԱՆ
ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ**

Համաշխարհային բանկի միջոցներով, ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի կենտրոնի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում կամ դրանց հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում եվրոպական առաջատար բուհերի փորձի փոխանակման, վերլուծական համադրման (բենչմարքինգի) իրականացման նպատակով նոյեմբերի 27-30-ն ընկած ժամանակահատվածում ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և ԳՊՀ որակի ապահովման բաժնի մասնագետ Արմինե Գրիգորյանը գործուղվեցին Նիդերլանդների Թագավորության Ամստերդամի համալսարան:

ԳՊՀ պատվիրակությունը եղավ բուհի Հունանիտար գիտությունների և Իրավագիտության ֆակուլտետներում:

Ըստ նախապես հաստատված ժամանակացույցի՝ տեղի ունեցան հանդիպումներ Ամստերդամի համալսարանի ղեկավար անձնակազմի և աշխատակիցների հետ, ուսումնասիրվեցին կանոնակարգող փաստաթղթերը:

**04.12.2013 Թ. ԲԱՑ-ՂԱՍ ԳԱՎԱՌԻ Յ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ**

Գավառի պետական համալսարանի հունանիտար մասնագիտությունների և տնտեսագիտական ֆակուլտետների ղեկաններ Համլետ Ղաջոյանի և Սամվել Ամիրխանյանի նախաձեռնությամբ Գավառի Հրաչյա Բունիաթյանի անվան պատկերասրահում կազմակերպվեց բաց-դաս:

Յուրօրինակ դասին մասնակցում էին Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում և Ֆինանսներ բաժինների առաջին կուրսի ուսանողները:

Պատկերասրահի գիտաշխատող, էքսկուրսավար Էսֆիրա Կիրակոսյանն ապագա տնտեսագետներին ներկայացրեց պատկերասրահի հիմնադրման պատմությունը, նրանց հետ շրջեց ցուցասրահներով, խոսեց ներկայացված ցուցանմուշների՝ 19-20-րդ դարերի հայ և ռուս անվանի նկարիչների ստեղծագործությունների մասին:

04.12.2013 Թ. ՖՈՐՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ

Դեկտեմբերի 2-3-ը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը կազմակերպել էր «Անցումային ժամանակաշրջանի մարտահրավերները ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգում. վստահության ձևավորում» թեմայով որակի ապահովման երկրորդ ֆորումը:

Ֆորումին մասնակցում էին Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, բուհի Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը և Որակի ապահովման բաժնի մասնագետ Արմինե Գրիգորյանը:

Ֆորումի շրջանակում քննարկվեցին ՀՀ կրթության որակի ապահովման հիմնախնդիրները, բուհերի փորձնական ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացները, որակյալ կրթության ապահովման արդի մարտահրավերները:

Միջազգային փորձագետների կողմից ներկայացվեցին եվրոպական չափանիշներին համապատասխան ՈԱԱԿ-ի նախնական արտաքին գնահատման արդյունքները:

07.12.2013 Թ. ԼՈՒՍԱՔԱՑԻՑ ԱՌԱՋ

Գավառի պետական համալսարանում կազմակերպվել էր «Լուսաքացից առաջ» խորագիրը կրող միջոցառում՝ նվիրված հայ ազգային հերոսներին և հայոց հերոսական պատմությանը:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին 1988 թվականի դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժի զոհերի անմար հիշատակը:

Միջոցառման մասնակիցները խորին հպարտությամբ լսարանին ներկայացրին հայ ազգային հերոսներ Վազգեն Սարգսյանի, Մոնթե Մելքոնյանի, Մովսես Գորգիսյանի, Թաթուլ Կրպեյանի կյանքը, ցուցադրվեցին հատվածներ նրանց անցած մարտական փառավոր ուղու մասին պատմող ֆիլմերից:

07.12.2013 Թ. ՔՍԱՆՅԻՆԳ ՏԱՐԻ ԱՆՑ...

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի դեկանատի և ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել էր Սպիտակի երկրաշարժի 25-րդ տարելիցին նվիրված հուշ-ցերեկույթ:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին հայ ժողովրդին պատուհասած աղետի հետևանքով զոհված մարդկանց վառ հիշատակը:

Ուսանողները հանդես եկան զեկուցումներով՝ անդրադառնալով աղետներին, մասնավորապես երկրաշարժերին ճիշտ նախապատրաստվելու, երկրաշարժի ժամանակ խուճապի չմատնվելու, արագ ու ճիշտ կողմնորոշվելու և այլ խնդիրների:

Ձեկուցումներն ուղեկցվեցին բովանդակալից շնորհանդեսներով:

11.12.2013 Թ. ՄԵՆՔ ԵՐԳՈՒՄ ԵՆՔ 70-ԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԳԵՐ

Գավառի պետական համալսարանը մեկ ժամով վերադարձել էր 1970-ական թվականներ: ԳՊՀ մեծ դահլիճում կազմակերպվել էր «ռետրո» միջոցառում՝ «Մենք երգում ենք 70-ականների երգեր» խորագրով:

ԳՊՀ շնորհաշատ ուսանողները կատարեցին հայ, ռուս և արտասահմանյան՝ 1970-80-ական թվականների աշխարհահռչակ երգեր, ինչպիսիք են՝ Խաչատուր Ավետիսյանի «Սիրուս կսպասեմ», Գուսան Շերամի «Բոյ ու բուսիդ մատաղ», Առնո Բաբաջանյանի «Пушинка белая», «Ноктюрн», Մարկ Մինկովի «Не отрекаются любя», Ֆրանկ Սինատրայի «Գիշերվա անձանոթները» («Strangers in the night»), «Modern Talking» գերմանական սինթիփոփ ժանրում ստեղծագործող երաժշտական դուետի «Cheri, Cheri Lady», «Բիթլզ» բրիտանական ռոք-խմբի և 70-ականների այլ սիրված հիթեր:

18.12.2013 թ. ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Դեկտեմբերի 16-ին և 17-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի անդամները մասնակցեցին Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի (ՀՈւԱԱ) 8-րդ ընդհանուր ժողովին, որը տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Համաժողովին ներկա էին հայաստանյան 14 բուհի ուսանողական ինքնակառավարման մարմինների պատվիրակներ:

Ներկայացվեց նախորդ վեց ամիսների ընթացքում Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի իրականացրած ծրագրերի և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվություն:

21.12.2013 թ. ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԱՌԱՔՅԱԼԸ

«Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած, Ծնվում են նրանք ճի՛շտ ժամանակին», - ահա այս տողերով սկսվեց Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 86-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթը:

Հրանտ Խաչատուրի Հակոբյանի կենսագրության պատուը զուգակցվեց Համո Սահյանի, Պարույր Սևակի՝ մարդկային անհատին և կյանքի իմաստին նվիրված բանաստեղծություններով:

Մեծարման ցերեկույթի ընթացքում ուսանողները փաստեցին, որ Հրանտ Հակոբյանն իր կյանքն ապրել է արիստոտելյան առաքինության չափանիշներով՝ արդարությանը, իմաստնությանը, ողջախոհությանը, չափավորությանը, արիությանը, ոգու անսպառ ուժով:

21.12.2013 թ. ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ԳՊՀ 16-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանում մեկնարկեցին 16-րդ ամենամյա գիտաժողովի աշխատանքները:

Գիտաժողովը նվիրված էր Գավառի պետական համալսարանի հիմնադրման 20-ամյակին:

Լիագումար նիստում ելույթ ունեցան ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Ռուզաննա Հակոբյանը, ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Համլետ Ղաջոյանը՝ համապատասխանաբար հանդես գալով «Գավառի պետական համալսարանի արդյունավետ աշխատանքը պայմանավորող գործոնները» և «Կրթության արժևորումը Հրանտ Խաչատուրի Հակոբյանի «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գրքում» թեմաներով զեկուցումներով:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին 5 բաժանմունքներում:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների գործընկեր բուհերի դասախոսներ և ուսանողներ:

22.12.2013 Թ. ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի առաջին կուրսեցիներն իրենց ստուգման գրքույկներն ստացան հանդիսավոր կերպով՝ ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի կիսանդրու առջև:

25.12.2013 Թ. ԱՄԱՆՈՐԸ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատի և ուսանողական խորհրդի համատեղ ջանքերով կազմակերպվել էր գեղեցիկ միջոցառում՝ նվիրված ամանորյա տոներին:

Ուսանողները ներկայացրին, թե ինչպես են տարբեր երկրներում տոնում Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Միջոցառման ընթացքում հնչեցին բազմաթիվ բարեմաղթանքներ, ամանորյա տոնական երգեր: Տնտեսագետ ուսանողներն առաջարկեցին ամանորյա ծախսերում խնայողություններ կատարելու իրենց հնարամիտ լուծումները:

08.01.2014 Թ. ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Ուսումնական ժամանակացույցին համաձայն՝ Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետում ս. թ. հունվարի 8-ին մեկնարկեց 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակը:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով համալսարանում մշակվեց և հաջողությամբ ներդրվեց «E-learning GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգը (<http://elearning.gsu.am>): Հեռակա ուսուցման ֆակուլտետի յուրաքանչյուր ակադեմիական խմբի նախապես տրվեց համակարգ մուտք գործելու գաղտնաբառը և մուտքաբառը՝ մանրամասն կերպով ներկայացնելով համակարգից օգտվելու կանոնները:

23.01.2014 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՇՎԵԴԻԱՅԻ ԿԱՌԼ ԼԻՆԵՈՒՄԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական Միության «TEMPUS. New LeAGUe – Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրին:

Ծրագրի շրջանակում մասնակից բուհերի առաջին աշխատաժողովը տեղի ունեցավ հունվարի 20-ից 22-ը Շվեդիայի Վեկշյո քաղաքում գործող Կառլ Լինեուսի անվան համալսարանում:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին հարատև կամ շարունակական կրթության նպատակներն ու խնդիրները, ընձեռած հնարավորությունները, իրականացման ձևերը, ընթացակարգերը, թիրախային խմբերը, քննարկվեցին հարատև կրթության ռազմավարությանը, քաղաքականությանն ու շարունակական կրթական ծրագրերի գործնական կիրառմանը վերաբերող հարցեր:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռչյանը:

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանին նվիրված շնորհանդես և բուհի քսանամյա գործունեության մասին պատմող ֆիլմ:

28.01.2014 Թ. ՀԱՅՈՑ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ԲԱՆԱԿԸ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐ

Գավառի պետական համալսարանի պատվիրակությունը՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Գեղարքունիքի մարզային գրասենյակի, Սևանի երիտասարդական ակումբի, Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի երգչախմբի, «Սևան» պարային համույթի, Գավառի, Սևանի և հարակից համայնքների ավագ ու հիմնական դպրոցների ներկայացուցիչների հետ համատեղ այցելեցին ՀՀ զինված ուժերի Լճաշենի զորամաս, որտեղ կազմակերպվել էր տոնական միջոցառում՝ նվիրված Հայոց հաղթական բանակի 22-րդ տարեդարձին:

Ներկաները նախ մեկ րոպե լռությամբ հարգեցին հայրենիքի համար իրենց կյանքը զոհած քաջարի նահատակների հավերժ հիշատակը, ապա Տեր Ստեփանոս քահանա Իգնատևսյանը կատարեց օրհնության կարգ:

Հյուրերն իրենց շնորհավորանքներն ու բարեմաղթանքները հղեցին զորամասի հրամանատարական անձնակազմին և հանձնեցին իրենց նվերները:

Գավառի պետական համալսարանը զորամասի գրադարանին նվիրեց ավելի քան 20 անուն գիրք:

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հայարփի Մկրտչյանը, ուսանողներ Բաբկեն Ղարաբաղյանն ու Հասմիկ Մուրադյանը զինվորներին բաժանեցին ԳՊՀ ուսանողների կողմից պատրաստված ծրարները, որոնք բովանդակում էին հայ անվանի հերոսների խոսքերից՝ այն գիտակցմամբ, որ դրանք կարող են դառնալ զինվորի համար ուղենիշ և կարգախոս:

Միջոցառման վերջում զինվորական ողջ համակազմի ուղեկցությամբ հյուրերը եղան նաև զորամասի՝ զինվորների ձեռքով կառուցված մատուռում, ևս մեկ անգամ աղոթք հնչեցրին՝ Բարձրյալից խնդրելով պահապան լինել Հայոց քաջարի զինվորին:

07.02.2014 Թ. ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆՔ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր ՀՀ պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի հրամանատար, կայազորի պետ, գեներալ-մայոր Պողոս Պողոսյանին և կորպուսի հրամանատարի տեղակալ, գնդապետ Հրաչյա Հովհաննիսյանին:

Հանդիպումը կազմակերպվել էր ՀՀ պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի կողմից մարզի կրթական հաստատություններում իրականացվող ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը միտված ծրագրի շրջանակում:

Պարոն Պողոսյանն իր ելույթում անդրադարձավ հայոց բանակաշինության պատմությանը, բանակի տարեգրությանը, ՀՀ զինված ուժերի կառուցվածքին, ներկայացրեց բանակի համալրմանը, նորակոչիկների հոգեբանական և ֆիզիկական պատրաստակամությանը, զինծառայողների իրավունքներին, պարտականություններին և պատասխանատվությանը վերաբերող հարցեր, կոչ արեց ուսանողներին՝ բարեխղճորեն և պատվով ծառայել հայրենիքին:

Հանդիպման ավարտին վերակնքվեց 2011 թվականի մարտի 10-ին ընդունված համագործակցության հուշագիրը Գավառի պետական համալսարանի և ՀՀ պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի միջև:

12.02.2014 Թ. «ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ»-ԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Փետրվարի 11-ին Գավառի պետական համալսարանի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Գեղարքունիքի մարզային կենտրոնի համատեղ ջանքերով կազմակերպվել էր հանդիպում Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Մարկոս եպիսկոպոս Յովհաննիսյանի հետ:

Հանդիպման ընթացքում Սրբազան հայրն անդրադարձավ Տաղավար հինգ տոների և Մեծ Պահքին, ներկայացրեց Տեառնընդառաջի և սիրո բարեխոս Սուրբ Սարգսի տոների առաջացման պատմությունը, սովորույթները, հիմնական արարողակարգերը և տոների խորհուրդը:

15.02.2014 Թ. ԳՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Գավառի պետական համալսարանում կայացավ բուհի կառավարման բարձրագույն մարմնի՝ խորհրդի նիստը:

Խորհուրդը լսեց ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2012-2013 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ: Ներկայացվեցին ԳՊՀ գործունեության հիմնական ուղղությունները, որդեգրած սկզբունքներն ու արժեքային կողմնորոշումները, ուսանողակենտրոն գաղափարախոսությունը, սովորողների, շրջանավարտների և հանրության հետ տարվող աշխատանքները, հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվությունը, բուհի ձեռքբերումներն ու հաջողությունները, ինչպես նաև խնդիրներն ու մարտահրավերները:

Խորհուրդը լսեց ԳՊՀ 2013 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը, քննարկեց ԳՊՀ 2014 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

Հաշվետվության մի շարք հիմնադրույթներ ներկայացվեցին ըստ Ջոն Քոթթերի փոփոխությունների ութ քայլերի տեսության, Կեպներ-Տրեգոեի ռացիոնալ գործընթացների մոդելի, Ստիվեն Քոլիի՝ բարեփոխումների հաջողության կանոնների:

ԳՊՀ խորհրդի անդամները կարևորեցին բուհի գործունեությունը, իսկ խորհրդի նախագահ, ՀՀ Սփյուռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբյանը նախանշեց համալսարանի անելիքները:

Ծավալված քննարկումից հետո խորհուրդը հաստատեց ԳՊՀ գործունեության տարեկան հաշվետվությունը, ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի 2013 թ. կատարման հաշվետվությունը, ԳՊՀ 2013 թ. բյուջեի կատարման հաշվետվությունը և ԳՊՀ 2014 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

18.02.2014 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԲԻԼԻՍԻ ՔԱՂԱՔՈՒՄ

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական Միության «TEMPUS. PACT-Project Actors Capacity Training in Caucasus – Կովկասյան տարա-

ծաշրջանում գիտական ներուժի (գիտահետազոտական նախագծերի մասնակիցների) վերապատրաստում» ծրագրին:

Ծրագրին մասնակից բուհերի ներկայացուցիչների առաջին աշխատաժողովը տեղի ունեցավ փետրվարի 17-18-ը Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին գիտահետազոտական աշխատանքներում երիտասարդների ներգրավման անհրաժեշտությունը, գիտական ներուժի զարգացման ուղիներն ու կառուցակարգերը, ներկայացվեցին ծրագրի նպատակներն ու խնդիրները, ընձեռած հնարավորությունները, թիրախային խմբերը, անդրադարձ կատարվեց կովկասյան երեք պետություններում՝ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում, երիտասարդների գիտահետազոտական ներուժի զարգացման ռազմավարությանը, քաղաքականությանն ու երիտասարդների կողմից գիտահետազոտական աշխատանքների կատարման արդյունավետության ապահովմանը վերաբերող հարցերին:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և ծրագրային թիմի անդամ, ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի մասնագետ Սիփան Արևշատյանը:

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանին նվիրված շնորհանդես, բուհի քսանամյա գործունեության մասին պատմող տեսաֆիլմ, ինչպես նաև ծրագրից ԳՊՀ ակնկալիքները:

18.02.2014 Թ. ԳՊՀ-ԴՊՐՈՑ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Գավառի պետական համալսարանում իրականացվող ծրագրերի շարքում առանձնանում են դպրոցների հետ համագործակցության ծրագրերը: ԳՊՀ ներկայացուցիչները պարբերաբար հանդիպումներ են ունենում ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների աշակերտների և մանկավարժական կոլեկտիվների հետ, ինչը ոչ միայն փոխգործակցության նոր եզրեր է նախանշում, այլև միտված է օգնելու աշակերտներին մասնագիտական կողմնորոշման հարցում:

Ընթացիկ ուսումնական տարում ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, Տնտեսագիտական, Հումանիտար մասնագիտությունների, Բանասիրական և Բնագիտական ֆակուլտետների դեկաններ Սամվել Ամիրխանյանը, Համլետ Ղաջոյանը, Թաթուլ Ասոյանը և Մարտին Ավազյանը ԳՊՀ ուսանողների հետ եղել են Գավառի, Սևանի, Վարդենիսի, Սարուխանի, Գանձակի, Կարմիրգյուղի, Ակունքի, Լճաշենի և մարզի մյուս համայնքների դպրոցներում, հետաքրքիր և բովանդակալից շնորհանդեսի ձևով աշակերտներին ներկայացրել ԳՊՀ-ում գործող ֆակուլտետները, ուսուցանվող մասնագիտությունները, բուհի միջազգային ծրագրերը, ուսանողներին ընձեռվող հնարավորությունները, պատասխանել ուսուցիչներին և աշակերտներին հուզող հարցերին:

19.02.2014 Թ. ՏՈՆԵԼՈՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 145-ԱՄՅԱԿԸ

Արձակագիր, գրական, ազգային և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ծննդյան 145-րդ տարեդարձի կապակցությամբ ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության անդամները Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Գեղարքունիքի մարզային կենտրոնի և Գավառի ավագ դպրոցի հետ համատեղ հանդես էին եկել յուրօրինակ նախաձեռնությամբ. նրանք մտահղացել էին գրել և բեմադրել հետաքրքիր և

զվարճալի մի հեքիաթ, որի գլխավոր հերոսները Հովհաննես Թումանյանի հայտնի հեքիաթների կերպարներն էին:

Երիտասարդների պատվիրակությունը հյուրընկալվեց Գավառի մանուկների մեծ և համերաշխ ընտանիքին՝ Գավառի մանկատանը:

Հանդիպման ընթացքում ներկաները խոսեցին մեծ գրողի կյանքի և գրական գործունեության մասին:

Գավառի ավագ դպրոցի աշակերտները դերասանական վարպետությամբ հանդիսատեսի դատին ներկայացրին «Հովհաննես Թումանյանի հեքիաթները՝ մեր աչքերով» խորագրով բեմադրությունը:

Օրվա մյուս խորհուրդը գիրք նվիրելու ավանդույթն էր:

Գավառի երիտասարդները մանկատան գրադարանին նվիրեցին հայ և արտասահմանյան գրողների ավելի քան 20 անուն գրքեր, ինչպես նաև Գավառի պետական համալսարանի Գիտական հոդվածների 15-րդ ժողովածուն՝ նվիրված ԳՊՀ հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 85-ամյակին:

19.02.2014 Թ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարան էին այցելել «Միջազգային հետազոտությունների և փոխանակման խորհուրդ» (Այռեքս) կազմակերպության ներկայացուցիչները՝ ի դեմս կազմակերպության տնօրեն, կրթական ծրագրերի պատասխանատու Ժանետա Խաչատրյանի:

Հանդիպման նպատակն էր ԳՊՀ վարչական անձնակազմին և ուսանողներին ներկայացնել Եվրասիայի և Միջին Ասիայի ուսանողների փոխանակման համաշխարհային ծրագիրը (Գլոբալ ՅՈՒԳՐԵԴ):

Ժանետա Խաչատրյանը լսարանին ներկայացրեց ծրագրի պահանջների, տևողության, ժամանակացույցի, հայտադիմումի լրացման կարգի, մասնակիցների ընտրության չափորոշիչների, ուսումնառության ոլորտների, նյութական և մասնագիտական աջակցություն ստանալու վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

26.02.2014 Թ. ԱԿՑԻԱ՝ «ՊԱՏՄԻՐ ԸՆԿԵՐՈՋԴ»

«Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպության և «Վորլդ Վիժն. Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից Գավառի պետական համալսարանում իրականացվեց միջոցառումների շարք՝ «Հետազոտվի՛ր և ապրի՛ր: Պատմի՛ր ընկերոջդ» խորագրով՝ ուղղված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման խնդիրներին:

Լսարանին ներկայացվեց «ՄԻԱՎ»-ի հասկացության, փոխանցման հնարավոր ուղիների, առկա ռիսկերի, հիվանդության կանխարգելման միջոցների, ինչպես նաև հետազոտության կարևորության մասին տեղեկատվություն:

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց միության Հանրության հետ կապերի փորձագետ, պարուսույց Յուլիա Ռասկևիչը ռիթմիկ պարային երաժշտության ներքո ուսանողներին սովորեցրեց հարավամերիկյան պարեր՝ հավելելով, որ ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել պարի միջոցով:

Միջոցառման ընթացքում անցկացվեց ՄԻԱՎ-ի վերաբերյալ ինտերակտիվ վիկտորինա: Լավագույն պարողները և հարցերին ճիշտ պատասխանողները ստացան նվերներ:

01.03.2014 Թ. ՆՐԱՆՑ ՓՆՏՐԵՔ ՈՂՋԵՐԻ ՄԵՋ...

Գավառի պետական համալսարանի ուսանողների կողմից կազմակերպվել էր հուշ-ցերեկույթ՝ նվիրված Արցախյան գոյամարտի քաջարի մարտիկների անմահ հիշատակին:

Միջոցառման ընթացքում ուսանողներն անդրադարձան հայ ժողովրդի պատմությանը, խոնարհվեցին կյանքի ու մահու պայքարում զոհված անձնվեր մարտիկների անմահ հիշատակի առջև:

Իր անցյալի փորձով ուսանողների և հյուրերի հետ կիսվեց Գավառի քաղաքացի, ազատամարտիկ, գրող պարոն Հովհաննես Միրիբյանը:

Միջոցառումը բովանդակում էր սրտառուչ բեմադրություններ և տեսանյութեր Արցախյան ազատամարտի անձնագրի հերոսների կյանքի և գործունեության վերաբերյալ:

05.03.2014 Թ. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ 12-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանում մեկնարկեց Բրիտանական ֆիլմերի 12-րդ փառատոնը, որը շարունակվեց մինչև մարտի 8-ը:

Բրիտանական ֆիլմերի 12-րդ փառատոնը նվիրված էր ներառական և հաղորդակցության խնդիրներին:

Փառատոնի նպատակն էր դիտողին ներկայացնել Միացյալ Թագավորության անցյալն ու ներկան, մշակույթը, ավանդույթները, ինչպես նաև զարգացնել անգլերենի իմացությունը:

Համալսարանում ցուցադրվեցին «Քառյակ», «Մետրո Մանիլա», «Չայն կորստից հետո» ֆիլմերը:

06.03.2014 Թ. ԲՈՒՀԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝ «TEMPUS. ATHENA» ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական Միության «TEMPUS.ATHENA-Աջակցություն բարձրագույն ուսումնական հաստատությունների կայունությանն ու ինքնավարությանը» ծրագրին, որի հայաստանյան աշխատաժողովը կայացավ Երևանի պետական համալսարանում:

Քննարկվեցին բուհերի ակադեմիական, ֆինանսական, կազմակերպական և գործառնությանին ինքնավարության ու կայունության ապահովման հիմնահարցերը:

Եվրոպական համալսարանների ասոցիացիայի կառավարման, ֆինանսավորման և հանրային քաղաքականության բաժնի վարիչ Թոմաս Էսթերմանը հանգամանալից զեկույցով վերլուծեց Հայաստանի բուհերում իրականացրած հետազոտության արդյունքները:

Ներկայացվեց և քննարկվեց նաև Գրացցի տեխնոլոգիական համալսարանի, Իտալիայի Տրենտոյի համալսարանի, Ավստրիայի և Նորվեգիայի բուհերի առաջավոր փորձը:

Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանն իր ելույթում անդրադարձավ համալսարանների ինքնավարության ապահովման նորմատիվ իրավական հիմքերին, ներքին և արտաքին երաշխիքներին, բազմախողովակ ֆինանսավորման անհրաժեշտությանն ու բուհերի բարոյական կապիտալին՝ հանրային վստահությանը:

07.03.2014 թ. ՖՈՐՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՍԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Գավառի պետական համալսարանում կազմակերպվել էր հանդիպում-քննարկում ՀՀ Գեղարքունիքի մարզի գործարար համայնքի ներկայացուցիչների հետ:

Ֆորումն իրականացվեց ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատի, ԳՊՀ ուսանողական ծրագրային թիմի, ԳՊՀ տնտեսագետների ակումբի և Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության համատեղ ջանքերով՝ Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան աջակցությամբ:

Ֆորումին հրավիրվել էին Գավառի տարածաշրջանի բանկային, վարկային կազմակերպությունների, հարկային տեսչության, Գավառի համայնքապետարանի, զբաղվածության մարզային կենտրոնի աշխատակիցներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գործարարներ, ԳՊՀ դասախոսներ և ուսանողներ:

Ուսանողներն իրենց հուզող հարցերը հղեցին ոլորտի մասնագետներին, ծավալված ակտիվ և արդյունավետ քննարկման միջոցով վեր հանվեցին գործարար միջավայրի խնդիրները, առաջարկվեցին դրանց լուծման հնարավոր ուղիներ:

08.03.2014 թ. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԺՊԻՏՆ ԷՐ ԹԵՎԱԾՈՒՄ

Տնտեսագիտական ֆակուլտետում ձևավորված գեղեցիկ ավանդույթի համաձայն՝ ֆակուլտետի ուսանողուհիներին և աշխատակցուհիներին մարտի 8-ի առավոտյան դիմավորում են ծաղիկներով և քաղցրավենիքներով:

Ֆակուլտետի տղա ուսանողները՝ դեկան պարոն Սամվել Ամիրխանյանի ղեկավարությամբ, բարձր երաժշտության հնչյունների և բուռն ծափահարությունների ներքո շնորհավորեցին ուսանողուհիներին և աշխատակցուհիներին՝ գարնանային այս հրաշալի տոնի կապակցությամբ:

12.03.2014 թ. «ALMALAUREA» ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԲՈԼՈՆԻԱՅԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Իտալիայի Հանրապետության Բոլոնիայի համալսարանում տեղի ունեցավ «ALMALAUREA» եվրոպական համալսարանների կոնսորցիումի խորհրդաժողովը՝ «Ձեռներեցություն և նորարարություն. շրջանավարտների դերակատարությունը» խորագրով:

Խորհրդաժողովին մասնակցեցին Իտալիայի նախկին վարչապետ Ռոմանո Պրոդին, Իտալիայի կրթության, ինչպես նաև աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարարները, Իտալիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպան Սարգիս Ղազարյանը, Հայաստանի բուհերի ռեկտորներ և ներկայացուցիչներ:

Գավառի պետական համալսարանից խորհրդաժողովին մասնակցեց ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը:

Խորհրդատուական ընթացքում քննարկվեցին ձեռնարկային զարգացման և նորարարության խթանման խնդիրները՝ կարևորելով համալսարանների դերակատարությունը նորարարական տնտեսության պայմաններում շրջանավարտներին արդյունավետ աշխատանքի նախապատրաստելու գործում:

17.03.2014 Թ. ԻՆՉՊԵՐՍ ԿԱՏԱՐԵԼ ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մարտի 14-ից 16-ը Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախագահ, Տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանող Գեղամ Աթեյանը Երևանի պետական համալսարանի ՈւԳԸ նախագահ Միքայել Մալխասյանի հրավերով մասնակցեց ԵՊՀ Ծաղկածորի ուսումնասիրտադրական բազայում կազմակերպված «Ինչպե՞ս կատարել գիտահետազոտական աշխատանք» թեմայով սեմինար-դասընթացին:

Սեմինարը կազմակերպվել էր ԵՊՀ ՈւԳԸ նախաձեռնությամբ և միտված էր ուսանողների մոտ զարգացնելու գիտահետազոտական աշխատանք կատարելու կարողություններն ու հմտությունները:

19.03.2014 Թ. «ՏԵՄՊՈՒՍ. ԱՐԱՐԱՏ» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

«Տեմպուս. Արարատ» ծրագրի շրջանակում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մարտի 17-19-ը տեղի ունեցավ ոլորտային որակավորումների շրջանակներին (բնութագրիչներին) նվիրված եռօրյա աշխատաժողով:

Աշխատաժողովին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի «Տեմպուս. Արարատ» ծրագրի աշխատակազմի անդամներ Արսեն Ապրոյանը, Լիլիթ Թոռչյանը և Վարազդատ Ավետիսյանը:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում ընթացող բարեփոխումների արդյունավետության ապահովումը՝ «Արարատ» ծրագրի համակարգողները նշված աշխատաժողովին հրավիրել էին ոլորտի փորձագետ Սթիվեն Ադամին, ով հանդես եկավ խորհրդատվությամբ:

20.03.2014 Թ. ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ԵՎ ԻՎԱԾ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատի նախաձեռնությամբ ԳՊՀ մագիստրոսների համար կազմակերպվել էր դասախոսություն՝ մագիստրոսական թեզ գրելու հմտությունների և կարողությունների վերաբերյալ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսամաթեմատիկական մոդելների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Թավադյանը ներկայացրեց մագիստրոսական թեզ գրելու սկզբունքները, չափանիշներն ու պահանջները, աշխատանքային պլանի կազմման, գրականության ցանկի հետ աշխատելու առանձնահատկությունները:

20.03.2014 Թ. ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԸ՝ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԻ ԿՈՂՔԻՆ

Հայ օգնության ֆոնդի կրթական-գիտական ծրագրերի ներկայացուցիչների և ԳՊՀ ուսանողների հանդիպումները պարբերական բնույթ են կրում:

Հերթական հանդիպման շրջանակում Գավառի պետական համալսարանում էին Հայ օգնության ֆոնդի կրթական-գիտական ծրագրերի համակարգող Էդիկ Կարապետյանը և հիշյալ ծրագրերի համակարգողի օգնական Մանե Խաչատրյանը:

Հանդիպման ընթացքում ամփոփվեցին Ժիրայր Նիշանյանի անվան կրթաթոշակառուների 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակի առաջադիմության արդյունքները:

26.03.2014 Թ. ԱՇՆԱՆ ԱՐԵՎ

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերությունը Կանանց միամսյակի շրջանակում կազմակերպել էր գրական քննարկում՝ նվիրված Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» կինովիպակի գլխավոր հերոսուհի Աղունի կերպարի առանձնահատկություններին:

Նախքան քննարկմանն անցնելը ուսանողները խոսեցին մեծն գրողի կյանքի ու գրական գործունեության մասին՝ Մաթևոսյանին ներկայացնելով որպես յուրահատուկ ոճ ունեցող և ժամանակակից իրականությունն ամբողջականության տեսանկյունից ու խորապես պատկերող գրող:

Աղունի կերպարը ներկայացվեց տարբեր դիտանկյուններից՝ որպես հայ մայր, անձնագոհ հայ կին, ընտանիքի հարս: Նրա կերպարը համեմատության մեջ դրվեց մեր ժամանակների հայ կանանց հետ:

27.03.2014 Թ. ԱՄՓՈՓՎԵՑ ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՐԿԱՍՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Մարտի 26-ին Երևան քաղաքում՝ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում, «Վորլդ Վիժն. Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության և «Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հարավային Կովկասի երկրներում և Ռուսաստանի Դաշնությունում ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ու ազդեցության նվազեցմանն ուղղված երկրների համագործակցություն» ծրագրի ամփոփիչ հանդիպումը:

Հանդիպմանը ներկա էին ինչպես ծրագրի համակարգողներ և պատասխանատուներ, այնպես էլ գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, կամավորներ:

Գավառի պետական համալսարանը ներկայացնում էին ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետներ Նոնա Սուրադյանը և Հայարփի Մկրտչյանը:

«Վորլդ Վիժն. Հայաստան»-ի ծրագրի համակարգող Անուշ Սահակյանը բովանդակալից շնորհանդեսով ներկայացրեց ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների միջոցով արտագնա աշխատողներին աջակցելու տարածաշրջանային ուղեգրման կառուցակարգերը, նշվեց, որ երկու տարվա ընթացքում իրականացվել են թե՛ հանրային իրազեկման, թե՛ շահերի պաշտպանության միջոցառումներ, բազմաթիվ հանրային քարոզարշավներ, հանդիպումներ են տեղի ունեցել Գավառի և Ստեփանավանի 14 համայնքներում, ծրագ-

րի շրջանակում համագործակցության դաշտ է ստեղծվել նաև առողջապահական կառույցների հետ:

29.03.2014 Թ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԳՊՀ դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Մամիկոն Հակոբյանը համալսարանականներին ներկայացրեց դասախոսություն՝ «Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցական միջոցների կիրառումը ուսումնական գործընթացում» թեմայով:

Պարոն Հակոբյանը խոսեց անիմացիաների, վիրտուալ լաբորատորիաների, սինուսային, ուղղորդող մեխանիզմների, կոնային փոխանցումների մասին, անդրադարձավ MATLAB համակարգի միջոցով մոդելավորման ծրագրին, դրանից օգտվելու պահանջներին և գործիքակազմին:

29.03.2014 Թ. ԳՊՀ-ԻՆ ՀԱՍԱՆԵԼԻ ԿԼԻՆԵՆ ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի նախածեռնած «Շրջիկ դասագրքեր» ("Traveliry textbooks") ծրագրի ներկայացուցիչների և բուհի պրոֆեսորադասախոսական, ուսանողական անձնակազմերի միջև:

Ծրագրի նպատակն էր աջակցել մարզերում գործող համալսարաններում անգլերենի որակյալ դասավանդմանը՝ նրանց ծանոթացնելով ԱՄՆ դեսպանատան էլեկտրոնային շտեմարաններին և բուհերի գրադարաններին տրամադրելով մասնագիտական անհրաժեշտ գրականություն:

ԱՄՆ տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի տնօրեն Ներսես Հայրապետյանը և տնօրենի օգնական Աննա Մկրտչյանը լսարանին ներկայացրին դեսպանատան տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի պաշտոնական կայքէջը (<http://elibraryusa.state.gov>), խոսեցին էջում ներառված էլեկտրոնային գրքերի հսկայածավալ բազայի բովանդակության, ոլորտների մասին, պարզաբանեցին հիշյալ շտեմարաններից օգտվելու կանոնները:

Հայաստանում ԱՄՆ դեսպանության տեղեկատվական ռեսուրսների կենտրոնը համալսարանին նվիրեց ավելի քան երեք տասնյակ դասագրքեր և մենագրություններ անգլերենի դասավանդման մեթոդների, քերականության, թարգմանչական հմտությունների զարգացման և լեզվի ուսուցման վերաբերյալ:

02.04.2014 Թ. ԳՊՀ-Ն ԶՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ՔԵՍԱԲԱՀԱՅԵՐԻՆ

Գավառի պետական համալսարանի գիտական խորհուրդը, պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմը, ուսանողները խորապես մտահոգված լինելով Քեսաբում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններով՝ բողոքի ձայն բարձրացրին՝ Քեսաբում ռազմական գործողությունների դադարեցման և քեսաբահայերի իրավունքների պաշտպանության համար:

Համալսարանում կազմակերպվեց ստորագրահավաք՝ դիմելով Միավորված ազգերի կազմակերպության Երևանյան գրասենյակ և խնդրելով ՄԱԿ-ի միջամտությունը՝ զինյալների մուտքը Քեսաբ արգելելու, խաղաղություն հաստատելու, մարդկանց կոպտորեն խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու՝ դրանով իսկ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր հռչակագրի նորմերի և միջազգային իրավունքի հանրաճանաչ մյուս սկզբունքների պահանջների իրականացման համար:

03.04.2014 Թ. ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՏՈՆԵՐԻՆ

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում Բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի երկրորդ կուրսի ուսանողները՝ Օտար լեզուների ամբիոնի դասախոս Աննա Բալագոզյանի ղեկավարությամբ, կազմակերպել էին ցերեկույթ՝ նվիրված գարնանային տոներին:

Ուսանողները գեղեցիկ շնորհանդեսներով ներկայացրին գարնանային գունագեղ և պայծառ տոների մասին հետաքրքիր տեղեկատվություն, անդրադարձան մարտի 8-ին՝ Կանանց միջազգային օրվան, ապրիլի 1-ին՝ Հունորի և երգիծանքի համաշխարհային օրվան, ապրիլի 7-ին՝ Մայրության և գեղեցկության տոնին, Սուրբ Ջատկին, խորին հպարտությամբ խոսեցին Մայիսյան հաղթական եռատոնի մասին:

06.04.2014 Թ. ՄԱՅՐԸ՝ ԳԱՐՆԱՆ ԵՎ ՍԻՐՈ ՅՄԱՅՔՈՎ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողների կողմից կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված Կանանց, մայրության, գեղեցկության և հավերժական սիրո տոնին:

Միջոցառման ընթացքում ուսանողները գեղեցիկ և հուզիչ բանաստեղծություններ ձոնեցին հայ կանանց ու մայրիկներին, կատարեցին նրանց նվիրված հոգեթով երգեր: Տղամարդկանց կողմից հնչեցին բազմաթիվ շնորհավորանքներ՝ ուղղված ԳՊՀ բոլոր աշխատակցուհիներին և ուսանողուհիներին:

09.04.2014 Թ. ԽՐԱԽՈՒՍՎԵՑ ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Գավառի պետական համալսարանի աշխատակիցներ Արմինե Համբարձումյանը, Մարիամ Նախրատյանը, Վիկտորյա Խաչատրյանը, Կարինե Մարուխյանը և Մանանե Հակոբյանը 2013-2014 ուսումնական տարվա ընթացքում մասնակցեցին Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված վերապատրաստումների չորս փուլերին:

Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակում նրանք հանդիպեցին Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունից ժամանած փորձագետ, պրոֆեսոր Ուիլիամ Բոյլի հետ:

Հանդիպման ընթացքում պրոֆեսոր Բոյլն ամփոփեց խորհրդատվության չորս փուլերը, նշեց համալսարանի աշխատակիցների ակտիվ մասնակցությունը և իր գոհունակությունը հայտնեց ԳՊՀ ներկայացուցիչների աշխատանքների, ներկայացրած շնորհանդեսների վերաբերյալ:

10.04.2014 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ԲՐԱԳԱ ՔԱՂԱՔՈՒՄ

Մարտի 31-ից ապրիլի 5-ը Պորտուգալիայի Բրագա քաղաքում տեղի ունեցավ եվրոպական միության Տեմպուս «Մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների զբաղվածությունային ուղղված բարձրագույն կրթական ցանց» (HEN-GEAR) ծրագրին մասնակից կազմակերպությունների և «ԱլմաԼաուրեա» համալսարանների կոնսորցիումի համատեղ աշխատաժողովը՝ նվիրված հետազոտական խմբերում աշխատանքների ընթացքի քննարկմանը և հետագա անելիքների պարզաբանմանը:

Հանդիպման ընթացքում ուղիղ տեսակապի միջոցով Իտալիայի Բոլոնիայի համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Ջանկամիլո Գասպերոնին ներկայացրեց սոցիոլոգիական հարցման արդյունքները, որը կատարել էր՝ օգտագործելով 2013-2014 թվականներին իտալական համալսարանների շրջանավարտների մասին «ԱլմաԼաուրեայի» տվյալների բազայում առկա տեղեկատվությունը:

Հանդիպմանը Գավառի պետական համալսարանից մասնակցում էին պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, ծրագրային խմբի անդամներ Գուրգեն Մուրադյանը և Սիփան Արևշատյանը:

Արսեն Ապրոյանը և ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի մասնագետ Սիփան Արևշատյանը ներկայացրին ԳՊՀ-ի շրջանավարտների բազայի ստեղծման աշխատանքները և շրջանավարտների զբաղվածությունային բարձրացման նպատակով այդ տվյալների օգտագործման ուղիները՝ նշելով, որ ծրագրի փորձնական մասնավարտված է և մեկնարկում է նոր փուլ, ինչը ենթադրում է բազայում ԳՊՀ 2013-2014 ուսումնական տարվա բոլոր շրջանավարտների տվյալների ընդգրկում:

Հանդիպման ավարտին «AlmaLaurea»-ի փորձագիտական խմբի կողմից ներկայացվեցին հետագա աշխատանքների պլանը, ժամանակացույցը և յուրաքանչյուր համալսարանից սպասվող վերջնարդյունքները:

10.04.2014 Թ. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ապրիլի 8-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր սեմինար-քննարկում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովազարդի միջնակարգ դպրոցի աշակերտական և ուսուցչական անձնակազմի հետ:

Համալսարանականների և աշակերտների քննարկման թեման շրջակա միջավայրի քիմիական աղտոտվածության և համաճարակների առաջացման հավանականությունն էր:

**11.04.2014 Թ. «ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ»-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ**

Ապրիլի 10-ին «Վիվասել-ՄՏՍ» ընկերության գլխավոր գրասենյակում կազմակերպվել էր հանդիպում ընկերության «Կրթական հիմնադրամ» նախագծի շրջանակում ուսման վարձի փոխհատուցում ստացող պվելի քան 100 ուսանողների հետ:

Վերջին չորս տարիների ընթացքում ծրագրում ընդգրկվել են Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հատուկ կարիքներով, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող շուրջ 300 ուսանողներ:

Գավառի պետական համալսարանի ավելի քան 30 ուսանողներ օգտվում են ընկերության կողմից ուսման վարձավճարի փոխհատուցման ծրագրից:

12.04.2014 Թ. ԸՆՏՐՎԵՑԻՆ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՐՆԵՐ

Գավառի պետական համալսարանում կայացավ ԳՊՀ ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության նախագահների ընտրություն:

Սահմանված ընտրակարգի համաձայն՝ առաջադրվել և նախընտրական ծրագիր էին ներկայացրել 3 թեկնածուներ՝ համապատասխանաբար ինքնառաջադրման սկզբունքով ՈՒԽ նախագահի թափուր պաշտոնին հավակնում էին Հունանիտար մասնագիտությունների իրավագիտություն բաժնի 2-րդ կուրսի ուսանող Ավետիք Ստեփանի Նանագուլյանը և Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Սաթենիկ Աշոտի Քաստակցյանը, իսկ ՈՒԳԸ նախագահի պաշտոնի համար թեկնածություն էր ներկայացրել միայն Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Նունե Արամայիսի Միրիբյանը:

ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների ընտրական հանձնաժողովի անմիջական դիտորդությամբ բուհի առկա ուսուցման ֆակուլտետների կուրսերի ավագները և ֆակուլտետային ՈՒԽ, ՈՒԳԸ անդամներն առաջադրված թեկնածուներից փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրեցին ուսանողական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ:

Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության նախագահներ ընտրվեցին համապատասխանաբար Ավետիք Նանագուլյանը և Նունե Միրիբյանը:

Ընտրության ավարտից հետո կազմակերպվեց մամլո ասուլիս ԳՊՀ խորհրդի նախագահ, ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի հետ, որի շրջանակում նորընտիր ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահները, ինչպես նաև «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացի ուսանողներն իրենց հարցերն հղեցին բանախոսին:

13.04.2014 Թ. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՕՐԵՐ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի նախաձեռնությամբ «Ֆրանսիական օրերը Հայաստանում» ծրագրի շրջանակում կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված հայ-ֆրանսիական բազմաբնույթ առնչություններին:

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, ԳՊՀ պրոֆեսոր Վիկտոր Կատվայանը, արտասահմանյան գրականության դասախոս, ԳՊՀ պրոֆեսոր Արա Առաքելյանը, ԳՊՀ հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Համլետ Ղաջոյանը, ԳՊՀ դասախոսներ Աշխունջ Պողոսյանը, Արմեն Ղարազյոզյանը և Նորայր Ղազարյանն անդրադարձան հայերենի և ֆրանսերենի համեմատական քննությանը, հայ-ֆրանսիական գրական, փիլիսոփայական, գիտական, պատմական ու մշակութային առնչություններին, մասնավորապես նշվեց Եղիշե Չարենց-Շարլ Բողլեր գրական ընդհանրությունների մասին:

19.04.2014 Թ. ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՑԱՇԱՐ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի մարզադահլիճում կազմակերպվել էր սեղանի թենիսի համահամալսարանական մրցաշար:

Խաղը կազմակերպվել էր Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի նախաձեռնությամբ:

Խաղը կազմակերպվեց երկու փուլերով՝ աղջիկների և տղաների խմբերում, օլիմպիական կանոնների համաձայն:

Աղջիկների խմբում երրորդ հորիզոնականը կիսեցին ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) բաժնի առաջին կուրսի ուսանողուհի Ջարուհի Ղամարյանը և նույն ֆակուլտետի Պատմություն բաժնի առաջին կուրսի ուսանողուհի Քրիստինե Լազյանը: Երկրորդ տեղը զբաղեցրեց Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Աիդա Ասրիբաբյանը, իսկ առաջին հաղթական մրցահարթակին կանգնեց նույն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Մարիաննա Հակոբյանը:

Տղաների խմբում համապատասխանաբար երրորդ, երկրորդ և առաջին տեղերը զբաղեցրին Բնագիտական ֆակուլտետի աշխարհագրություն բաժնի 4-րդ կուրսի ուսանող Արեն Չիչոյանը, ՀՄՖ Իրավագիտություն բաժնի 2-րդ կուրսի ուսանող Դարվին Ավետիսյանը, Բնագիտական ֆակուլտետի սերվիս բաժնի 1-ին կուրսի ուսանող Գրիգոր Մարուխյանը, ովքեր արժանացան պատվոգրերի:

19.04.2014 Թ. ԾԱՌԱՏՈՒՆԿ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Համալսարանականների համատեղ ջանքերով Հրանտ Հակոբյանի անվան փողոցում տնկվեցին Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության աջակցությամբ տրամադրված 100 հացենի:

Ծառատունկին զուգընթաց կազմակերպվեց նաև շաբաթօրյակ, և ԳՊՀ աշխատակիցներն ու ուսանողները մաքրեցին ԳՊՀ մասնաշենքերի հարակից տարածքները:

20.04.2014 Թ. ՆՇՎԵՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները մասնակցեցին Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցում Սուրբ Հարության տոնի նախօրեին մատուցվող ճրագալույցի պատարագին, որի ավարտից հետո երիտասարդները Աստծո տնից օրհնված լույսը բերեցին Գավառի պետական համալսարան:

Արդեն բուհում ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվեց Սուրբ Ջատկի տոնակատարություն՝ պահպանելով զատկական բոլոր ավանդույթները:

23.04.2014 թ. Ո՛Չ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Հրաչյա Աճառյանի անվան լսարանում Հայոց Մեծ Եղեռնին նվիրված զեկուցումներով հանդես եկան Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները:

Միջոցառման ավարտին Գոհար Ղաղոյանը ԳՊՀ գրադարանին նվիրեց Մելինե Անունյանի հեղինակած «1919-1921թթ. դատավարությունների վավերագրերը՝ ըստ Օսմանյան մանուկի» 1-ին և 2-րդ մատենաշարները:

23.04.2014 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում կազմակերպված հանրապետական ուսանողական գիտաժողովին, որը նվիրված էր բուհի հիմնադրման 80-ամյակին:

ԳՊՀ ուսանողներ Գեղամ Աթեյանը, Սարգար Հովհաննիսյանը, Արտակ Դռնոյանը, Ռիմա Կոտուկյանը, Բաբկեն Ղարաբաղցյանը, Խաչիկ Բոստանջյանը, Սարիամ Ավետիսյանը և ԳՊՀ շրջանավարտ Հայարիի Մկրտչյանը զեկուցումներ ներկայացրին բանասիրության, տնտեսագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, կրթության մեջ դրանց դերի և նշանակության վերաբերյալ:

25.04.2014 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Գավառի պետական համալսարանի միջազգային ծրագրերի շրջանակում եվրոպական մի շարք հեղինակավոր բուհերում կրթություն ստացած ուսանողները ներկայացրին իրենց ուսումնառության վերաբերյալ շնորհանդես-հաշվետվություններ:

Հանդիպմանը ներկա էին եվրոպական Միության «TEMPUS» ծրագրի ազգային գրասենյակի աշխատանքների համակարգողներ Լանա Կառլովան, Անի Թորոսյանը, ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական անձնակազմի ներկայացուցիչներ:

Տնտեսագիտական և Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողներ Գեղամ Աթեյանը, Արեգ Սինանյանը, Ռիմա Կոտուկյանը, Գառնիկ Գափոյանը, Շուշան Բադասյանը, Աշոտ Գինոսյանը բովանդակալից շնորհանդեսների միջոցով ներկայացրին Իտալիայի Տուրինի, Պավիայի, Իսպանիայի Վալենսիայի, Կորունայի, Բելգիայի Գենտի, Էստոնիայի Տալինի համալսարաններում 6-ից 10 ամիս ժամկետներով ուսումնառության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, խոսեցին տվյալ բուհի հիմնադրման, կրթական համակարգի առանձնահատկությունների, առկա կրթական ծրագրերի, ուսումնասիրած դասընթացների, ուսումնառությանը զուգահեռ կազմակերպված պրակտիկաների, արտալսարանային միջոցառումների և պատմամշակութային վայրեր այցելությունների մասին:

Նրանք համեմատական զուգահեռներ անցկացրին հայաստանյան և եվրոպական կրթական համակարգերի միջև՝ վեր հանելով դրանց ընդհանրությունները և տարբերությունները:

25.04.2014 Թ. ՃԱՆԱԶՈՒՄ, ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ, ՀԱՏՈՒՑՈՒՄ...

Ապրիլի 24-ին Գավառի պետական համալսարանի ուսանողները՝ Հունանիտար մասնագիտությունների և Տնտեսագիտական ֆակուլտետների դեկաններ Համլետ Ղաջոյանի և Սամվել Ամիրխանյանի գլխավորությամբ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում գլուխ խոնարհեցին անմար կրակի առաջ՝ իրենց հուշի ծաղիկները խառնելով կարմիր կակաչների բնական ծովին:

Գավառի պետական համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները «Ասպարեզ» լրագրողների ակումբի հետ համատեղ, ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում կազմակերպեցին նաև ֆլեշմոբ, որի ընթացքում երիտասարդ համալսարանականները հայոց եռագույնով պատկերեցին «1915», ներկայացրին հայ ժողովրդի միասնականության, ամրության ու տոկունության խորհուրդը, և մեկ անգամ փաստեցին, որ ոչինչ չի մոռացվել, ոչ ոք չի մոռացվել:

26.04.2014 Թ. ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի կողմից կազմակերպվել էր ուսանողական գիտա-ժողով՝ նվիրված ինֆորմատիկայի զարգացման ժամանակակից ուղղություններին:

ԳՊՀ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսի ուսանողները հանդես եկան գիտական զեկուցումներով՝ ներկայացնելով սիներգետիկայի էությունը, նպատակը, մոդելները, օրինաչափությունները, կիրառնետիկայի հիմնական հասկացությունները, սկզբունքները, դրանց ունեցած դերը և նշանակությունը:

26.04.2014 Թ. ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՕՐԵՐ ԳՊՀ-ՈՒՄ

Հունանիտար մասնագիտությունների և Բանասիրական ֆակուլտետների դեկաններ Համլետ Ղաջոյանի, Թաթուլ Ասոյանի և Գավառի երաժշտական դպրոցի տնօրեն, ԳՊՀ դասախոս Արփինե Զարգարյանի նախաձեռնությամբ բուհում կազմակերպվել էր ցերեկույթ՝ նվիրված ֆրանսիական մշակույթին, մասնավորապես, արվեստին և գիտությանը:

Ապագա մանկավարժները ներկայացրին ֆրանկոֆոնիայի միջազգային տոնի ստեղծման պատմությունը, անդրադարձան անդամակցող պետություններին:

Տիկին Զարգարյանը ներկայացրեց ֆրանսիական երգարվեստը, հիշեց աշխարհահռչակ ֆրանսիացի արվեստագետներին, երգիչներին, մասնավորապես ֆրանսիահայ շանսոնյե Շառլ Ազնավուրին, Մերիյ Մատյեին, Էդիտ Պիաֆին, Ժո Դասենին, Ռոզի Արմենին, Պատրիսիա Կասսին, Լարա Ֆաբիանին:

Պարոն Ղաջոյանն իր ելույթում անդրադարձավ «սալոնային» մշակույթին և ֆրանսիական լուսավորիչներին:

27.04.2014 Թ. ԱԶՔԵՐԻՍ ՄԵՋ ԳԱՐՆԱՆ ՕՐԵՐ...

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանը վերածվել էր շիրազյան զարնանային պարտեզի: ԳՊՀ ուսանողական գիտական ընկերությանը

կից ստեղծված Ստեղծագործողների ակումբի ուսանողները խորին հպարտությամբ և երախտագիտությամբ տոնեցին հայոց մեծանուն բանաստեղծ Յովհաննես Շիրազի ծննդյան 100-ամյակը:

ԳՊՀ ուսանողները տեսանյութի միջոցով ներկայացրին անմահության ճամփորդ երգչի կյանքն ու գրական գործունեությունը, ծաղկաթերթ կամարների եռամիասնության ներքո կատարեցին նրա հրաշալի ու հոգեթով բանաստեղծությունները:

02.05.2014 Թ. ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր ժամանակակից մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներին նվիրված ֆակուլտետային ուսանողական գիտաժողով:

Ֆակուլտետի Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) բաժնի 2-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսերի ուսանողներն իրենց զեկուցումների շրջանակում անդրադարձան բնավորության և վարքի դրսևորման հարաբերակցությանը, նախադպրոցականների տագնապայնության առանձնահատկություններին ու հաղթահարման ուղիներին, ընթերցանության կազմակերպման փոխգործուն մեթոդներին, ինչպես նաև աշուղական երգարվեստին, կարևորեցին խաղերի նշանակությունը սովորողների բառապաշարի հարստացման գործում:

03.05.2014 Թ. ՇԱՇԿՈՒ ՄՐՑԱՇԱՐ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր շաշկու համահամալսարանական մրցաշար, որն անցկացվեց շաշկու միջազգային կանոններին համապատասխան՝ շրջանաձև եղանակով:

Ծավալված հետաքրքիր խաղի արդյունքում առաջին, երկրորդ և երրորդ հորիզոնականները համապատասխանաբար զբաղեցրին Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողներ Վրեժ Վանյանը, Տիգրան Չանդոյանը և Լիպարիտ Ստեփանյանը, ովքեր արժանացան պատվոգրերի:

03.05.2014 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՀԵԼՍԻՆԿԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Եվրոպական Միության «TEMPUS. ATHENA- Կայուն և ինքնավար բարձրագույն կրթական համակարգերի խթանումը Արևելյան հարևանության տարածքում» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի ներկայացուցիչները՝ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, մասնակցեցին Ֆինլանդիայի Հանրապետության Հելսինկիի համալսարանում կայացած աշխատաժողովին, որը նվիրված էր բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսական կառավարման հիմնախնդիրներին:

Ներկայացվեցին Ֆինլանդիայի բարձրագույն կրթական համակարգը, հետազոտական, կիրառական գիտությունների և այլ համալսարանների ֆինանսավորման կառուցակարգերը: Քննարկվեցին բուհերի ֆինանսական պլանավորման սկզբունքներն ու

փուլերը, ֆինանսական կառավարման առանձնահատկությունները, բյուջետային գործընթացը կարգավորող նորմերը:

07.05.2014 Թ. ԼԱՏԻՆԵՐԵՆԸ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գավառի պետական համալսարանի օտար լեզուների ամբիոնի դասախոս Նանա Ռափյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր բաց դաս՝ «Լատիներենը բժշկության մեջ» խորագրով, որը Բնագիտական ֆակուլտետի դեղագործական քիմիա բաժնի 1-ին կուրսում դասավանդվող «Լատիներեն լեզու» դասընթացի յուրօրինակ ամփոփումն էր:

Ապագա դեղագործները միջոցառման շրջանակում ներկայացրին բժշկության մեջ հայտնի հիվանդությունների, դեղաբույսերի, մարդու մարմնի մասերի լատիներեն անվանումները, ներկայացրին մարդու առողջության և բժշկության վերաբերյալ լատիներեն թևավոր խոսքեր և արտահայտություններ, խոսեցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաստատված դեղատոմսերի օրինակելի ձևի և լրացման ճիշտ կարգի մասին: Ուսանողները հայերենով և լատիներենով արտասանեցին Հիպոկրատի երդման տեքստը, ինչպես նաև միաձայն առ Աստված հնչեցրին Տերունական աղոթքը:

Միջոցառման երկրորդ մասում անցկացվեց մրցույթ-վիկտորինա, որի արդյունքում հաղթող ճանաչված ուսանողները ստացան խորհրդանշական նվերներ:

07.05.2014 Թ. ԲԱՆԱՎԵՃ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում կազմակերպվեց տնտեսագիտության արդի հիմնախնդիրներին նվիրված բանավեճ-քննարկում:

Քննարկման ընթացքում նույն ֆակուլտետի ֆինանսներ և Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժինների մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողներ Քնարիկ Ղարիբյանը, Նելի Մարտիրոսյանը, Նինա Գեչի-Պարոնյանը և Դիանա Միրիբյանը ներկայացրին «Ֆինանսական համակարգի կարգավորման մեթոդները և կազմակերպման սկզբունքները», «Քաղաքացիական խորհրդի գործունեության և կադրային քաղաքականության հիմնական ուղղությունները», «Մաքսային և հարկային քաղաքականությունը և մաքսային վերահսկողության իրականացման ժամանակակից ուղղությունները» թեմաներով զեկուցումներ:

08.05.2014 Թ. ԿԱՆԳ ԱՌ, ԱԿՆԹԱՐԹ...

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվել էր գրական ցերեկույթ՝ նվիրված Համո Սահյանի ծննդյան 100-ամյակին:

Ուսանողները միջոցառման ընթացքում անդրադարձան մեծ քնարերգուի կյանքին ու գրական գործունեությանը, արտասանեցին նրա հոգեպարար բանաստեղծություններից:

09.05.2014 Թ. ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների համար կազմակերպվել էր գիտական սեմինար՝ «Արդյունաբերության հիմնական ճյուղերը և ներկա իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով:

Սեմինարը վարեց Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի, արդյունաբերության քաղաքականության վարչության պետի տեղակալ, ԳՊՀ շրջանավարտ Կորյուն Գևորգյանը:

Բանախոսը բովանդակալից շնորհանդեսի միջոցով լսարանին ներկայացրեց արդյունաբերական քաղաքականության նպատակը, խնդիրները, սկզբունքները, անդրադարձավ թեմայի հիմնական ուղղություններին և գործիքակազմին:

09.05.2014 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ԵՌԱՏՈՆԸ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ ուսանողական խորհուրդը կազմակերպել էր գեղեցիկ ցերեկույթ՝ նվիրված 1945 թվականի մայիսի 9-ին Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակին, 1992 թվականին Շուշիի ազատագրման 22-րդ տարելիցին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի կազմավորմանը:

Ուսանողները խորին հպարտությամբ խոսեցին 1945 թվականի մայիսյան հաղթանակի մասին, հիշեցին Խորհրդային Միության հերոսի կոչմանն արժանացած հայ զորահրամանատարներին, քաջարի մարտիկներին և փառաբանեցին նրանց անգնահատելի գործը՝ հանուն հայրենիքի ազատության:

Միջոցառմանը ներկա էին ազատամարտիկներ Յովհաննես Սիրիբյանը, Յովհաննես Ղաջոյանը և Ռուբիկ Խաչատրյանը, ովքեր ականատեսի աչքերով ներկայացրին Ղարաբաղյան մարտերի ծանր ընթացքն ու հաղթական ավարտը և բարեմաղթեցին հայոց երկրին ու հայ ժողովրդին միմիայն խաղաղ ու անամպ երկինք:

10.05.2014 Թ. ԳՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Գավառի պետական համալսարանում մեկնարկեց 2013-2014 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացը:

Բուհի և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողները մեկ ամսվա ընթացքում մասնագիտական առարկաներից հանձնեցին ամփոփիչ ատեստավորման քննություններ, բակալավրիատի շրջանավարտները շնորհանդեսների ձևով ներկայացրին և պաշտպանեցին իրենց ավարտական աշխատանքները, իսկ մագիստրոսները՝ մագիստրոսական թեզերը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից գործընթացն իրականացվեց սահմանված կարգով:

14.05.2014 Թ. ՊՐԱԿՏԻԿԱ ԱՊԱԳԱ ՀԱՇՎԱՊԱՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառում բաժնի 2-րդ կուրսի ուսանողներն այցելեցին «Դիլիջան ջուր» հանքային ջրերի գործարան:

Ապագա հաշվապահները տեղում ծանոթացան ընկերության արտադրական գործունեությանը, շրջեցին արտադրամասում, հետևեցին շալցման գործընթացին:

Համալսարանականները եղան նաև Ալավերդու «Իրիս. B and B» հյուրատանը, որի օրինակով ծանոթացան Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջային բիզնեսի առանձնահատկություններին:

14.05.2014 Թ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՄ «TEMPUS. VERITAS» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Եվրոպական Միության «TEMPUS. VERITAS» (Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի ներդրում՝ հիմնված Ջալցբուրգյան սկզբունքների վրա) ծրագրի շրջանակում մայիսի 5-7-ը Ավստրիայի Գրացի համալսարանում տեղի ունեցավ վերապատրաստում (<http://www.wus-austria.org/news/0/443.html>):

Գավառի պետական համալսարանից վերապատրաստումներին մասնակցեցին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և Ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի մասնագետ Արմինե Գրիգորյանը:

ԳՊՀ խումբը ներկայացրեց համալսարանում ծրագրի նպատակների իրականացման համար առկա գիտական, ակադեմիական, նյութատեխնիկական հնարավորությունները: Շեշտվեց համալսարանի պատրաստականությունն ու պլանավորված հետագա քայլերը Ֆինանսներ մասնագիտության գծով բարձրագույն կրթության երրորդ աստիճան ներդնելու առումով:

15.05.2014 Թ. ԲԱՑ ԴԱՍ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր բաց դաս՝ նվիրված Հայաստանում Ֆրանկոֆոնիայի օրերին:

Բնագիտական ֆակուլտետի սերվիս բաժնի առաջին և երկրորդ կուրսերի ուսանողները բովանդակալից շնորհանդեսի միջոցով ներկայացրին Ֆրանսիայի Հանրապետության կազմավորման, բնակչության, աշխարհագրական դիրքի, մշակույթի, գիտության մասին տեղեկատվություն, անդրադարձան Ֆրանսիայի պատմամշակութային հուշարձաններին, ազգային ավանդույթներին, նորաձևությանը և խոհանոցին:

16.05.2014 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ «ՏԵՄՊՈՒՄ. ԱՐՄԵՆՔԱ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Եվրոպական Միության «ՏԵՄՊՈՒՄ. ԱՐՄԵՆՔԱ» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ քառօրյա աշխատաժողով Դանիայի Թագավորության Օրիուսի համալսարանում:

Գավառի պետական համալսարանից հանդիպմանը մասնակցում էր պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

Ծրագրի մասնակից ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները ծանոթացան Դանիայի Թագավորության որակավորումների ազգային շրջանակին և այդ ոլորտում նրա կուտակած փորձին:

Ծրագրի հայաստանյան մասնակիցները քննարկեցին Հայաստանի որակավորումների ազգային շրջանակը, լսեցին գործընկերների դիտողությունները:

**16.05.2014 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՅԻՆ ՀԱՂԹԵՑ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ
ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆՈՒՄ**

Մայիսի 15-ին Երևանի պետական համալսարանում անցկացվեց ռուսաց լեզվին, խոսքարվեստին և գրականությանը նվիրված մրցույթ-փառատոնի հերթական փուլը:

Համացանցային հարթակում կազմակերպվեց ռուսաց լեզվի իմացությունը ստուգող, նախապես առաջադրված թեմաներով ստեղծագործական աշխատանքների մրցույթներ, ինչպես նաև ռուսական մշակույթի, լեզվի, պատմության իմացության վիկտորինա և երգի մրցույթ:

Այս տարի մրցույթին մասնակցության հայտ էին ներկայացրել Գավառի պետական, Երևանի պետական, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական, Ռուս-հայկական (Սլավոնական), Վանաձորի պետական համալսարանների, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողները:

Գավառի պետական համալսարանը ներկայացնում էր Բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի 20 ուսանող:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվեց Գավառի պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Մարինե Պողոսյանը, ով հնարավորություն ստացավ մեկնելու Սանկտ Պետերբուրգ և մասնակցելու փառատոնի եզրափակիչ փուլին:

**17.05.2014 Թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝
ՆՎԻՐՎԱԾ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ**

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ ուսանողական հանրապետական գիտաժողով՝ նվիրված բուհի հիմնադրման 20-ամյակին:

Գիտաժողովը նախաձեռնել էր Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը՝ Հայաստանի Հանրապետության նախագահի հովանու ներքո իրականացվող Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի ֆինանսական օժանդակությամբ:

Գիտաժողովին մասնակցության հայտ էին ներկայացրել Երևանի պետական, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական, Հայաստանի ազգային ազրարային համալսարանների, Գյումրու Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Գևորգյան հոգևոր ճեմարանի ուսանողներ:

Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվեցին ութ մասնագիտական բաժանմունքներում:

17.05.2014 Թ. ԳՐՔԻ ՏՈՆ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի սրահում կազմակերպվել էր Երևանի պետական համալսարանի կողմից նվիրաբերված 200 միավոր գրքի ցուցադրություն:

Երևանի պետական համալսարանի հիմնադրման 95-ամյա հոբելյանի առթիվ Հայաստանի մայր բուհը հանդես էր եկել նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության մարզային բուհերի, Արցախի պետական համալսարանի, ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ուսումնական հաստատությունների և Երևանի քաղաքային գրադարաններին նվիրելու ԵՊՀ հրատարակչության լույս ընծայած գրքերից:

Այս գեղեցիկ առաքելությամբ Գավառի պետական համալսարանում հյուրընկալվել էին Երևանի պետական համալսարանի ներկայացուցիչները՝ ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը, Պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Սինասյանը, ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կարեն Գրիգորյանը, Հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Պապին Մուրադյանը և Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության պետ Արշակ Հովհաննիսյանը:

Բացի նվիրաբերված գրքերից, ցուցադրված էին նաև ԳՊՀ դասախոսների հեղինակած մենագրությունները, դասագրքերը, բառարանները, ուսումնամեթոդական ձեռնարկները, Գավառի պետական համալսարանի հրատարակած գիտական հոդվածների ժողովածուները:

**17.05.2014 Թ. ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ ՃԱՆԱՉՎԵՑ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՎԱՐԱՋԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ**

Մայիսի 16-ին Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան ամփոփեց գործունեության 10-ամյակի շրջանակում կազմակերպված հոբելյանական միջոցառումների շարքը:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց ասոցիացիայի կողմից առաջին անգամ իրականացվող «Ազգային ուսանողական մրցանակաբաշխություն 2013»-ի արդյունքները, և հայտարարվեց «Տարվա լավագույն ուսանող» անվանակարգի հաղթողի անունը:

Լավագույն ուսանողի կոչման համար պայքարում էին Հայաստանի Հանրապետության մեկ տասնյակից ավելի բուհերի 52 ուսանողներ, որոնցից 2-րդ փուլ էին անցել լավագույն 6-ը:

Լավագույն վեցնյակի մեջ էր նաև Գավառի պետական համալսարանի մագիստրոս, այժմ արդեն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ասպիրանտ Վարազդատ Ավետիսյանը, ով մրցույթի արդյունքում ճանաչվեց Տարվա լավագույն ուսանող:

**18.05.2014 Թ. ԿԱՅԱՑԱՎ ԲՈՒՅԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
24-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ**

Մայիսի 15-ին և 16-ին Երևանի պետական համալսարանում կայացավ Բարձրագույն ուսումնական հաստատությունների եվրոպական ասոցիացիայի (EURASHE) 24-րդ տարեկան համաժողովը, որը կրում էր «Աշխատանքային շուկայի որակավորումները» խորագիրը:

Գիտաժողովի բացման արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ:

Գավառի պետական համալսարանի պատվիրակության կազմում էին ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը:

Գիտաժողովի առանցքային թեման մասնագիտական կրթության որակավորումների և աշխատաշուկայի կարիքների համադրումն էր:

18.05.2014 Թ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ՝ «ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳԻՇԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ

«Թանգարանային գիշեր» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի ուսանողները՝ Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Համլետ Ղաջոյանի ուղեկցությամբ, եղան քաղաքամայր Երևանի մի շարք թանգարաններում:

Ողջ գիշեր համալսարանականները մեծ խանդավառությամբ շրջեցին Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, ՀՀ ազգային պատկերասրահում, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի Հ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանում, Արամ Խաչատրյանի, Ավետիք Իսահակյանի տուն-թանգարաններում, ակտիվորեն մասնակցեցին կազմակերպված միջոցառումներին ու ակցիաներին և վառ տպավորություններով վերադարձան Գավառ:

21.05.2014 Թ. ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ՝ ԳՊՀ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Գավառի պետական համալսարանի աշխատակիցներ Արմինե Համբարձումյանը, Մարիամ Նախրատյանը, Վիկտորյա Խաչատրյանը, Կարինե Մարությանը և Մանանե Հակոբյանը 2013-2014 ուսումնական տարվա ընթացքում մասնակցել են Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված վերապատրաստումների չորս փուլերին:

Ապրիլի 7-ին կայացած հանդիպման ընթացքում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունից ժամանած փորձագետ, պրոֆեսոր Ուիլիամ Բոյլն ամփոփեց խորհրդատվության չորս փուլերը և փաստեց բուհի աշխատակիցների ակտիվ մասնակցությունը վերապատրաստումների ողջ ընթացքին:

Վերապատրաստումների շրջանակում ԳՊՀ ներկայացուցիչներին շնորհվեց «Ընթացիկ գնահատում և թեստավորում՝ հանուն արդյունավետ ուսուցման և ուսումնառության» դասընթացի մասնակցության հավաստագրեր:

21.05.2014 Թ. ԳՊՀ ՌԻՍԱՆՈՂԻ ՎԱՐԱԾ ԲԱՑ ԴԱՍԸ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանություն բաժնի 1-ին կուրսի ուսանող Նարեկ Օհանյանի նախաձեռնությամբ և ֆակուլտետի դեկանատի աջակցությամբ «Կենդանաբանություն» առարկայի շրջանակում կազմակերպվել էր բաց-դաս՝ «Հայաստանի թռչունները» խորագրով:

Դասի ընթացքում Նարեկ Օհանյանը մասնագետի հմտությամբ բովանդակալից շնորհանդեսի միջոցով ներկայացրեց Հայաստանի թռչնատեսակները, խոսեց աղավմի-

ների, որորների ընտանիքների, հավազգիների, ճնճղուկազգիների, բվերի, սագանմանների մասին, անդրադարձավ նրանց անվանումների հայերեն, ռուսերեն, անգլերեն և լատիներեն տարբերակներին, բնադրման և ձվադրման ժամանակահատվածներին ու տեղանքներին, սնման հիմնական աղբյուրներին և այլն:

Ապագա կենսաբանը լսարանին ներկայացրեց թռչունների անկենդան մարմիններից իր պատրաստած ցուցանուշները, ինչպես նաև կիսվեց թռչնաբանության մեջ ունեցած իր փորձով և կատարած ուսումնասիրությունների արդյունքներով:

23.05.2014 Թ. ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 22-ին Հայաստանում Եվրոպական Միության կենտրոնում «Եվրոպայի օրվա տեղեկատվական շաբաթ» ծրագրի շրջանակում կազմակերպվել էր Եվրոպայում կրթության հնարավորությունների մասին քննարկում:

Հանդիպմանը ներկա էին Եվրոպական մի շարք հեղինակավոր բուհերում կրթություն ստացած ուսանողներ Գավառի պետական, Երևանի պետական, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական, Հայաստանի ազգային ագրարային և այլ համալսարաններից: Նրանք եկել էին իրենց սեփական փորձը ներկայացնելու մյուս ուսանողներին:

Գավառի պետական համալսարանի պատվիրակության կազմում էին Տնտեսագիտական և Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողներ Գեղամ Աթեյանը, Ռիմա Կոտոլկյանը, Արեգ Սինանյանը և Շուշան Բադալյանը, ովքեր բովանդակալից շնորհանդեսների միջոցով ներկայացրին Իտալիայի Տուշիայի, Պավիայի, Իսպանիայի Վալենսիայի և Բելգիայի Գենտի համալսարաններում 6-ից 10 ամիս ժամկետներով ուսումնառության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, անդրադարձան տվյալ բուհի հիմնադրման պատմությանը, այնտեղ իրականացվող կրթական ծրագրերին, դասընթացներին, կազմակերպված պրակտիկաներին, արտալսարանային միջոցառումներին, ինչպես նաև երկրի ավանդույթներին ու ազգային առանձնահատկություններին:

24.05.2014 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ` ՃԱՄԲԱՐԻ ՋՈԿԱՏԱՎԱՐՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող ամենամյա ծրագրի շրջանակում Երևան քաղաքի և ՀՀ մարզերի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները` որպես ջոկատավարներ ներգրավվեցին դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքներում:

Հիշյալ ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի ուսանողները հանդիպեցին Հանքավանի «Հասմիկ» ճամբարի տնօրեն Ժորա Մուրադյանի հետ:

Հանդիպման նպատակն էր ապագա ջոկատավարներին ծանոթացնել ճամբարի գործունեությանը, աշխատանքային ծրագրին, պայմաններին, ներկայացնել ջոկատավարի իրավունքներն ու պարտականությունները, նրանց դերակատարությունը ճամբարական երեխաների հանգստի կազմակերպման գործում:

**28.05.2014 Թ. ՆՇՎԵՑ ՄԱՅԻՍԻ 28-Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՕՐԸ**

Մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին Հանրապետության կայացման օրը, Գավառի պետական համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կազմակերպվել էր երթ դեպի Սարդարապատի հուշահամալիր, որտեղ ուսանողները՝ ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Համլետ Ղաջոյանի գլխավորությամբ, մասնակցեցին կազմակերպված միջոցառումներին, բեմադրեցին հայոց խրոխտ քոչարին, շրջեցին հուշահամալիրի տարածքով:

Համալսարանականները գլուխ խոնարհեցին հայրենիքի համար իրենց կյանքը զոհած քաջարի մարտիկների անմար հիշատակի առաջ և երգվեցին լինել հայ ազգի արժանի զավակներ:

01.06.2014 թ. ԲՈՒՅԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՅԱՆՁ

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական Միության «TEMPUS. PICASA-Բուհերի միջազգայնացման խթանում Արևելյան հարևանության երկրներում՝ մշակութային և կառուցվածքային փոփոխությունների միջոցով» ծրագրին:

Ծրագրի շրջանակում մայիսի 28-ից 30-ը Ավստրիայի Հանրապետության Գրաց քաղաքում տեղի ունեցավ աշխատաժողով՝ նվիրված բուհերի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, բովանդակային և կառուցվածքային բարեփոխումների, համալսարանների միջազգայնացման գործընթացների խթանման հարցերին:

Եռօրյա աշխատաժողովին մասնակցեցին ծրագրին անդամակցող քսանհինգ բուհերի և կրթության կառավարման լիազոր մարմինների ներկայացուցիչներ:

Գավառի պետական համալսարանից հրավիրված էին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի մասնագետ Մանանե Հակոբյանը:

Աշխատաժողովի մասնակիցները բուհերի միջազգայնացումը որակեցին որպես ժամանակի հրամայական պահանջ, քննարկեցին համալսարանների միջազգայնացման քաղաքականության ու ռազմավարության հիմնական խնդիրներն ու ուղղությունները, Եվրոպական Միության «TEMPUS. PICASA» ծրագրի նպատակներն ու ակնկալվող ելքային արդյունքները:

**02.06.2014 Թ. ԳՊՀ-ՈՒՄ ԱՎԱՐՏՎԵՑ ԱՄՓՈՓԻՉ
ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**

Շուրջ մեկ ամիս Գավառի պետական համալսարանում ընթանում էր 2013-2014 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացը, որն ավարտվեց ս. թ. հունիսի 1-ին:

Գավառի պետական համալսարանի և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման ֆակուլտետների ավարտական կուրսերի ավելի քան 470 ուսանողներ մասնագիտական շուրջ 25 առարկաներից հանձնեցին ամփոփիչ ատեստավորման քննություններ, բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտները շնորհանդեսների ձևով ներկայացրին և պաշտպանեցին իրենց ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը:

06.06.2014 Թ. «Օ՛, ՄԱՐԻ» ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողները՝ ԳՊՀ գրադարանավարներ Նահրա Պետրոսյանի և Ալվարդ Թոռչյանի նախաձեռնությամբ, կազմակերպել էին գրքի քննարկում՝ նվիրված Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական կառավարման միջազգային ինստիտուտի տնօրեն, իրավագիտության դոկտոր, ԳՊՀ պատվավոր բարերար Ռոբերտ Ենգիբարյանի «Օ՛, Մարի» վեպին:

Ուսանողները համառոտ կերպով ներկայացրին հեղինակի կյանքը և մասնագիտական գործունեությունը, անդրադարձան «Օ՛, Մարի» վեպի կառուցվածքին, նշեցին, որ այն բաղկացած է երկու՝ «Ընտրություն» և «Երկվություն» գլուխներից, որոնք ամփոփված են գրքի շուրջ 600 էջերում, խոսեցին վեպի սյուժեից, վեպում նկարագրված իրադարձություններից, քննարկեցին վեպի հիմքում դրված գաղափարները և դրանց արդիականությունը, անդրադարձան մարդու ճակատագրի վրա ժամանակի և հասարակարգի ունեցած ազդեցությանը, կատարեցին կերպարային վերլուծություններ և համեմատական զուգահեռներ անցկացրին նրանց միջև:

08.06.2014 Թ. ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԱՍԵՐԸ

Հունիսի 8-ին մեկնարկեցին Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2014 թվականի 2-րդ կիսամյակի դասերը:

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար Հեռակա ուսուցման ֆակուլտետում ներդրվեց անվտանգության համակարգ, որի միջոցով սկսեց կատարվել ուսանողների հաճախումների հաշվառումն էլեկտրոնային տարբերակով:

10.06.2014 Թ. ՄԵԿՆԱՐԿԵՑ ԵՄ «TEMPUS. LAMANCHE» ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

Երևանի պետական համալսարանում մեկնարկեց Եվրոպական Միության «Tempus. LaManche» ծրագրի 4-րդ աշխատաժողովը՝ նվիրված բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների նախաձեռնմանը և կառավարմանը:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցում էին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, Ակադեմիական քաղաքականության վարչության մեթոդիստ Սաթենիկ Սարգսյանը, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հայարփի Մկրտչյանը, Որակի ապահովման բաժնի մասնագետ Մանանե Հակոբյանը, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի մասնագետ Սիփան Արևշատյանը:

Մասնակից 23 բուհերի, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանի պատվիրակները ներկայացրին կատարած աշխատանքների հաշվետվություն:

11.06.2014 Թ. ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏԱՐԵՂԱՐՁԴ, ՀԱՅՈՑ ՍԱՅՐ ԲՈՒՅ

Կայացավ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 95-րդ տարեդարձին նվիրված գիտական խորհրդի հանդիսավոր նիստը, որի ընթացքում Գավառի պետական համալսարանի անունից բուհի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Ռուզաննա Հակոբյանը շնորհավորանքի և բարենաղթանքի խոսքեր հղեց ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանին և բոլոր համալսարանականներին:

Հանդիսավոր նիստի ընթացքում համալսարանականներին հանձնվեցին մեդալներ, պատվավոր կոչումներ, պատվոգրեր ու շնորհակալագրեր:

ԵՊՀ ոսկե մեդալով պարգևատրվեց նաև ԳՊՀ աշխարհագրության ամբիոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի դասախոս Արամայիս Ավագյանը:

**12.06.2014 Թ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ**

Երևանի պետական համալսարանում բուհի հիմնադրման 95-րդ տարեդարձի և Եվրոպական Միության «Tempus. LaManche» ծրագրի շրջանակներում կայացավ միջազգային գիտաժողով, որին մասնակցեցին նաև Գավառի պետական համալսարանի պատվիրակները:

Գիտաժողովը կրում էր «Կրթությունը 21-րդ դարում. հիմնախնդիրներ և մարտահրավերներ» խորագիրը:

Գիտաժողովի ընթացքում քննարկվեցին բարձրագույն կրթության համակարգի առջև ծառայած սոցիալական, ֆինանսա-տնտեսական, կազմակերպական և այլ խնդիրների լուծման, փոխակերպվող և մշտապես զարգացող հասարակության կրթական պահանջներին պատշաճ արձագանքելու և դրանք բավարարելու հնարավոր կառուցակարգերը:

Լիագումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին բարձրագույն կրթության որակի ապահովմանը, համալսարանների միջազգայնացմանը, մասնագիտական կրթության գիտական, տեղեկատվական, մեթոդաբանական և տեխնոլոգիական հիմքերի ամրապնդմանը նվիրված բաժանմունքներում:

14.06.2014 Թ. ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

Եվրոպական Միության «Tempus IV. LaMANCHE. Բարձրագույն կրթության փոփոխությունների նախաձեռնում և կառավարում» ծրագրի շրջանակում ս. թ. հունիսի 9-13-ը Երևանի պետական համալսարանում կայացավ Եվրոպական Միության «Tempus. LaManche» ծրագրի 4-րդ աշխատաժողովը՝ նվիրված բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների նախաձեռնմանը և կառավարմանը:

Աշխատաժողովի ավարտին Գավառի պետական համալսարանի պատվիրակներ, Ակադեմիական քաղաքականության վարչության մեթոդիստ Սաթենիկ Սարգսյանը, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հայարփի Մկրտչյանը, Որակի ապահովման բաժնի մասնագետ Մանանե Հակոբյանը, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի մասնագետ Սիփան Արևշատյանը ստացան հավաստագրեր:

**15.06.2014 Թ. ԵՄ «TEMPUS. LEAGUE» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ
ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական Միության «Tempus. LeAGUe – Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրին, որի համակարգողը Շվեդիայի Թագավորության Կառլ Լինեոսի անվան համալսարանն է:

Ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր ծրագրի ղեկավար պրոֆեսոր Ուլֆ Ռոզեին:

Հանդիպման ընթացքում պրոֆեսորը ներկայացրեց հարատև կամ շարունակական կրթության նպատակներն ու խնդիրները, ընձեռած հնարավորությունները, քննարկվեցին Հայաստանում հարատև կրթության զարգացման հեռանկարները:

Հանդիպման ընթացքում կարևորվեց հարատև կրթության դերն անձի կայացման, նոր որակի գիտելիքների ձեռքբերման, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների և կարողությունների ձևավորման և մրցունակության ապահովման գործում:

Ներկայացվեց Գավառի պետական համալսարանի փորձը՝ շարունակական կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ:

**18.06.2014 Թ. ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
ԳՐԴ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԸ**

Հունիսի 16-17-ը «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամում կայացավ Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի Գ-րդ լիագումար նիստը:

Նիստին ներկա էին ինչպես ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ ու անդամներ, այնպես էլ բարձրագույն կրթության ոլորտի փորձառու մասնագետներ:

Գավառի պետական համալսարանի պատվիրակությունը ներկայացնում էին Ուսանողական խորհրդի նախագահ Ավետիք Նանագուլյանը, ՈւԽ անդամներ Աիդա Ասրիբաբայանը, Սարիամ Սառյանը և Ռադիկ Սարուխանյանը:

Օրակարգի համաձայն՝ քննարկվեցին և քվեարկության դրվեցին բարձրագույն կրթությանն առնչվող ներքին կանոնակարգերի նախագծեր, արձանագրություններ, հաշվետվություններ, միջնորդություններ, գործողությունների ծրագրեր, անդամության հայտեր, առաջիկա միջոցառումների հյուրընկալման հայտեր, միջազգային նախագծեր, կատարողականներ, բանաձևեր և որոշումներ:

**18.06.2014 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԵՄ «TEMPUS. VERITAS»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

Հունիսի 16-ին և 17-ին Ս. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «Tempus. Veritas» (Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի ներդրում՝ հիմնված զալցբուրգյան սկզբունքների վրա) ծրագրի աշխատաժողով:

Աշխատաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ Համաշխարհային համալսարանական ծառայությունից (Ավստրիա), Տեխնոլոգիայի թագավորական ինստիտու-

տից (Շվեդիա), Ջիրոնայի (Իսպանիա), Բաթ Սպա (Միացյալ Թագավորություն), ինչպես նաև Գավառի պետական, Երևանի պետական, Հայաստանի պետական տնտեսագիտական, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական, ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային, Հյուսիսային, Վանաձորի պետական մանկավարժական համալսարաններից:

Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի պատվիրակներ:

Գավառի պետական համալսարանի պատվիրակության կազմում էին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հրաչյա Ջաքոյանը, Բանասիրական ֆակուլտետի փոխդեկան Մարինե Բադալյանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը, ովքեր իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան ընթացող աշխատանքներին, բարձրացրին հիմնահարցեր, որոնք քննարկվեցին աշխատաժողովի ընթացքում:

Երկօրյա աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին Ջալցբուրգի սկզբունքներին համապատասխան բարձրագույն կրթության երրորդ աստիճանի նոր չափորոշիչների, պահանջների մշակման և կիրարկման, ինչպես նաև արդյունավետ գործիքների կիրառմանը վերաբերող հարցեր:

21.06.2014 Թ. ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր ֆակուլտետային ուսանողական գիտաժողով՝ նվիրված մանկավարժության արդի հիմնախնդիրներին:

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) բաժնի 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողները «Երեխայի հոգեկանի զարգացման առանձնահատկությունները՝ ըստ տարիքային փուլերի» թեմայի շրջանակում ներկայացրին գիտական զեկուցումներ:

22.06.2014 Թ. ԲՈՒՀԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԳԼՈՐԱԼԱՑՎՈՂ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Եվրոպական Միության «TEMPUS. PICASA – Բուհերի միջազգայնացման խթանում Արևելյան հարևանության երկրներում՝ մշակութային և կառուցվածքային փոփոխությունների միջոցով» ծրագրի շրջանակում հունիսի 18-ից 21-ը Բելգիայի Թագավորության Լյուվեն քաղաքում տեղի ունեցավ աշխատաժողով՝ նվիրված բուհերի միջազգայնացման ռազմավարության, քաղաքականության, գործիքների ու կառուցակարգերի մշակման ու ներդրման խնդիրներին:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և ակադեմիական քաղաքականության վարչութ-

յան որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը:

Քննարկվեցին ծրագրին մասնակից համալսարանների միջազգայնացման քաղաքականության հիմնական ուղղությունները, միջազգայնացման նպատակները, դրանց կենսագործման ձևերն ու միջոցները, անդրադարձ կատարվեց բուհերի միջազգայնացման ոլորտում իրականացրած համեմատական ուսումնասիրության և վերլուծության (բենչմարքինգի) արդյունքներին, առաջավոր փորձին, ներկայացվեցին բուհերի միջազգային իրավասության (կոմպետենտության) նշանակությունը, շրջանակը, գործիքները:

25.06.2014 Թ. ԱՄՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Ամերիկայի Միացյալ Նահանգների Կենտրոնական բանկի խորհրդական, բանկային վերահսկողության տնօրեն, ամերիկահայ Սարգիս Դանիելի Յոզուրտջյանին:

Հանդիպմանը ներկա էր Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարար, ԳՊՀ խորհրդի նախագահ Յրանուշ Հակոբյանը:

Այցելության նպատակն էր ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում տնտեսագետ ուսանողների համար կարգալ դասախոսություն գլոբալացվող աշխարհում բանկային համակարգի և բանկերի գործառնությունների վերաբերյալ:

Բանախոսը ուսանողներին ներկայացրեց արդի աշխարհում բանկային համակարգի գործունեության հիմնական սկզբունքները, համաշխարհային տնտեսական ճգնաժամի առաջացման պատճառները, սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները, անդրադարձավ երկրի ֆինանսական կայունության ապահովման կառուցակարգերին, փոքր և միջին բիզնեսի զարգացման ուղիներին:

28.06.2014 Թ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՏԵՄՊՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «Տենպուս» ծրագրերում ընդգրկված աշխատանքային խմբերի հանդիպում:

Աշխատաժողովի ընթացքում խմբերը ներկայացրին VERITAS, ARMENQA, GOVERN, PACT ծրագրերի հիմնական ուղղությունները, կատարված աշխատանքները, ինչպես նաև նախանշված անելիքները:

Քննարկվեցին միջծրագրային հարցեր, որոնք կնպաստեն ծրագրերի նպատակների իրականացմանը:

30.06.2014 Թ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Հունիսի 27-ից 29-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում կայացավ միջազգային համաժողով՝ «Բարձրագույն կրթություն՝ առանց խտրականության. Բոլոնիայի գործընթացի համատեքստում» խորագրով:

Համաժողովը նվիրված էր միջազգային իրավունքի նորմերին համաձայն չճանաչված պետությունների քաղաքացիների բարձրագույն կրթության իրավունքի լիարժեք իրացման հիմնահարցերին:

Համաժողովին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և ուսանողական խորհրդի անդամ Արեգ Սինանյանը:

Համաժողովի ընթացքում Գավառի պետական համալսարանի և Արցախի պետական համալսարանի միջև կնքվեց համագործակցության հուշագիր:

Արցախի պետական համալսարանին մվիրաբերվեցին գրքեր, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածուների 12-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ թողարկումները, ԳՊՀ դասախոսների մենագրություններ և ուսումնամեթոդական ձեռնարկներ:

02.07.2014 Թ. ԳՈՐԾԱՐԿՎԵՑ ԳՊՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի մասնագիտական էլեկտրոնային գրադարանի՝ E-Library GSU կայքի շնորհանդեսը, որը համացանցային տիրույթում հասանելի կլինի www.library.gsu.am հասցեով:

Նախագծի հեղինակ-մշակողներ, ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորողներ Վարազդատ Ավետիսյանը և Մարգար Հովհաննիսյանը ներկայացրին համակարգի ընծեռած հնարավորությունները, անդրադարձան համակարգի տեղեկատվական, ծրագրային և տեխնիկական ապահովումներին, առկա կարգացանկերին:

Մարգար Հովհաննիսյանն առցանց ռեժիմում ներկայացրեց կայքի բովանդակությունը, բաժինները և ենթաբաժինները, ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի կառուցվածքը և գործառույթները:

04.07.2014 Թ. ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանում մեկնարկեցին առկա ուսուցման ընդունելության կենտրոնացված բանավոր քննությունները «Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» առարկաներից:

Մինչ քննության սկիզբը ընդունող հանձնաժողովը դիմորդներին ներկայացրեց ընդունելության բանավոր քննությունների ընթացակարգը, գնահատման չափանիշները և գնահատականների բողոքարկման կարգը:

Քննություններն ընթացան ընդունելության կարգի պահանջներին համաձայն:

05.07.2014 Թ. ԲԱՐԻ ԵՐԹ, ՍԻՐԵԼԻ՝ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

Ավանդույթի համաձայն՝ հուլիսի 5-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրը, Գավառի պետական համալսարանում կազմակերպվել էր գեղեցիկ ցերեկույթ՝ ԳՊՀ պատրաստած մասնագետների 17-րդ սերնդի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողություն:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ Սփյուռքի նախարար, ԳՊՀ խորհրդի նախագահ տիկին Հրանուշ Հակոբյանը, Իտալիայից ժամանած հյուրեր՝ Արևելյան Եվրոպայի, Ռուսաստանի և Հայաստանի Կաթողիկե եկեղեցու հոգևոր առաջնորդ, գերաշնորհ տեր Ռաֆայել սրբազանը, Իտալիայի Հանրապետության Լոմբարդիայի մարզի օրդենի ներկայացուցիչներ պարոն Կարմելո Սկարսելլան և Մարիո Կարոտենուտոն, ԳՊՀ պրոֆեսորա-

դասախոսական, վարչական և ուսանողական համակազմը, շրջանավարտներ և ծնողներ:

Ավանդույթի համաձայն՝ Գեղարքունյաց թեմի հոգևոր առաջնորդ գերաշնորհ տեր Մարկոս եպիսկոպոս Յովհաննիսյանը կատարեց ԳՊՀ շրջանավարտների օրհնության կարգ:

Հանդիսավոր կերպով հանձնվեցին Գավառի պետական համալսարանի բակալավրիատն ու մագիստրատուրան ավարտած ուսանողների գերազանցության դիպլոմները, վկայականներ հանձնվեցին ԳՊՀ իրավաբանական կլինիկան, «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ», «Անդրոգոգիկայի՝ մեծահասակների կրթության հիմունքներ» դասընթացները հաջողությամբ ավարտած և Ջինիշյան հիշատակի հիմնադրամի Ուսանողական ծրագրային թիմի ակտիվ ուսանողներին:

Միջոցառման վերջում տեղի ունեցավ ԳՊՀ մագիստրոսների երդման հանդիսավոր արարողությունը:

**05.07.2014 Թ. ԵՐԻՏԱՍԱՐԴ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՎԱՅՐՈՒՄ**

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմություն բաժնի բակալավրի շրջանավարտներն իրենց քառամյա կրթության վկայագրերը՝ դիպլոմները, հանդիսավոր կերպով ստացան սրբազան ու խորհրդանշական վայրում՝ Սևանա թերակղզու վրա բազմած պատմական Սևանավանքի բակում:

**09.07.2014 Թ. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում կայացավ հանդիպում ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամներ, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար պարոն Դավիթ Հարությունյանի և ՀՀ Սահմանադրական դատարանի խորհրդական պարոն Գևորգ Դանիելյանի հետ:

Նրանք հանգամանալից ներկայացրին ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը: ԳՊՀ ներկայացուցիչները հնչեցրին հարցեր բարեփոխումների նպատակների, հայեցակարգային մոտեցումների և ուղղությունների, պետության կառավարման ձևի հնարավոր փոփոխության, իշխանության բաժանման և պետական իշխանության մարմինների միջև զսպումների և հակակշիռների կառուցակարգերի ապահովման, դատական իշխանության անկախության երաշխավորման, տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման սահմանադրաիրավական հիմքերի ապահովման, մարդու իրավունքների պաշտպանության մասին:

Գավառի պետական համալսարանից հանդիպմանը մասնակցեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, դեկաններ Համլետ Ղաջոյանը, Սամվել Ամիրխանյանը, Մարտին Ավագյանը, ինչպես նաև համալսարանի մագիստրատուրայի և բակալավրիատի մի խումբ ուսանողներ:

**19.07.2014 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԵՄ «TEMPUS. GOVERN»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

Հուլիսի 13-ից 18-ը Ավստրիայի Հանրապետության Գրաց քաղաքում կայացավ աշխատաժողով եվրոպական Միության «TEMPUS. GOVERN-ինքնավարության և հաշվետվողականության խթանում. Բարձրագույն կրթության ոլորտում Բոլոնիայի սկզբունքներին համահունչ արդյունավետ փոփոխությունների կառավարման արդի համակարգի զարգացում» ծրագրի շրջանակում:

Աշխատաժողովին մասնակցեցին ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներ, Գավառի պետական համալսարանի և ծրագրին մասնակից հայաստանյան մյուս բուհերի ռեկտորներ և պրոռեկտորներ, Որակի ապահովման ազգային կենտրոնի, Հայաստանի գործատուների միության, Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի պատվիրակներ, ինչպես նաև Ավստրիայի Գրացի, Բելգիայի Լյուվենի, Մեծ Բրիտանիայի Bath Spa համալսարանների, Ուսումնառության և նախաձեռնությունների եվրոպական կենտրոնի, Իտալիայի, Գերմանիայի համալսարանական համայնքի ներկայացուցիչներ:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեց Գրացի և Մեծ Բրիտանիայի Bath Spa համալսարանների կազմակերպական կառուցվածքն ու զարգացման ռազմավարական ծրագիրը, կառավարման և ինքնավարության ապահովման կառուցակարգերը, անդրադարձ կատարվեց եվրոպական բուհերի զարգացման հայեցակարգային ուղղություններին, բովանդակային և կառուցվածքային բարեփոխումներին և այլն:

Կայացավ մտքերի փոխանակություն ՀՀ բուհերում Բոլոնյան հռչակագրի սկզբունքների կիրառման, կրեդիտային համակարգի պահանջների իրականացման վերաբերյալ:

**24.08.2014 Թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ
ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ**

Ավանդույթի համաձայն՝ Գավառի պետական համալսարանում կազմակերպվել էր հանդիպում ԳՊՀ առաջին կուրսեցիների և նրանց ծնողների հետ:

ԳՊՀ առաջին կուրսեցիներին ողջունեցին բուհի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ֆակուլտետների ղեկաններ Թաթուլ Ասոյանը, Մարտին Ավագյանը, Սամվել Ամիրխանյանը և Համլետ Ղաջոյանը:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին ԳՊՀ-ում ներդրված կրեդիտային համակարգի սկզբունքները, ուսանողների կարգապահական կանոնները, հանրապետական և միջազգային համագործակցության ծրագրերը:

ԳՊՀ ծրագրավորող Վարադրատ Ավետիսյանը հանգամանակից կերպով առցանց ներկայացրեց Գավառի պետական համալսարանի էլեկտրոնային ուսուցման E-learning GSU համակարգից և ԳՊՀ E-library GSU էլեկտրոնային գրադարանից օգտվելու կանոնները, ընձեռած հնարավորությունները և առավելությունները:

Հանդիպման ավարտին ծնողները և ուսանողները դիտեցին բուհի գործունեության մասին պատմող տեսաֆիլմ:

**25.08.2014 Թ. «ԲԱՁԵ-2014» ՀԱՎԱՔԻ ՀԱՂԹՈՂ
ՃԱՆԱԶՎԵՑ ՆԱՐՆՋԱԳՈՒՅՆ ՃԱԿԱՏԸ**

Օգոստոսի 18-ից 24-ը Ծաղկաձոր քաղաքի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հանգստյան տանն անցկացվեց «Բազե-2014» համահայկական երիտասարդական հավաքը:

Հավաքին, ըստ համապատասխան անվանակարգերի, մասնակցեցին Գավառի պետական համալսարանի ներկայացուցիչներ՝ Տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսներ բաժնի 2-րդ կուրսի ուսանող Վեմիր Ամիրխանյանը (վոլեյբոլ, սպորտլանդիա), Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի ուսանող Ավետիք Նանագուլյանը (շախմատ), Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Սաթենիկ Թովմասյանը (ազգային խաղեր), Բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի շրջանավարտ Արփիմե Աղոյանը (նկարչություն), Հեռակա ուսուցման ֆակուլտետի ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանող Պապին Հովեյանը (հրաձգություն), ԳՊՀ թիմակիցներ Լուսինե Սայադյանը (նորաձևություն), Էրիկ Գևորգյանը (բռնցքամարտ), Անուշ Ղազարյանը (երգ):

ԳՊՀ թիմը նարնջագույնների կազմում վաստակեց հինգ ոսկե մեդալ և արժանացավ պատվոգրերի:

Ն. Վ. Սուրադյան,

Հ. Է. Մկրտչյան

*ԳՊՀ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի
մասնագետներ,*

Վ. Կ. Ավետիսյան՝

ԳՊՀ www.gsu.am կայքի ծրագրավորող

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՈԱԽՈՍԱՀԱՍԱՐՆԵՐԻ
ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

<i>Ազգանուն, անուն, հայրանուն</i>	<i>Ժառայողական</i>	<i>Էլեկտրոնային փոստի հասցե</i>
ԳՊՀ-ի կառավարման խորհրդի նախագահ Հակոբյան Հրանուշ Հրանտի	0-60-46-02-01 0264-2-57-75	minister@mindiaspora.am
ԳՊՀ ղեկավար Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	0-60-46-02-01	rector@gsu.am
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կուտուզյան Նելլի Ալբերտի	0-60-46-04-03	n.kutuzyan@gsu.am
Տնտեսական գծով պրոռեկտոր Ապրոյան Արսեն Հրաչիկի	0-60-46-12-64	a.aproyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկան Ասոյան Թաթուլ Արտիկի	0-60-46-12-44	t.asoyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Մարտին Պատվականի	0-60-46-12-55	m.avagyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Ղաջոյան Համլետ Գրիշայի	0-60-46-12-70	h.ghajoyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	0-60-46-12-66	s.amirkhanyan@gsu.am
Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ	0-60-46-12-90	a.hambardzumyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Բադալյան Մարինե Միքայելի	0-60-46-12-40	m.badalyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Հերզոյան Մարիամ Նորիկի	0-60-46-12-60	m.hergnyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	0-60-46-12-70	gohar.gevorgyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Գարեյան Մելանյա Վոլոդյայի	0-60-46-12-50	m.gareyan@gsu.am
Ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ղարիբյան Ալինա Ամբիկի	0-60-46-12-42	a.gharibyan@gsu.am
Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Մուրադյան Պապին Օնիկի	0-60-46-12-99	p.muradyan@gsu.am
Կադրերի և հատուկ բաժնի պետ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	0-60-46-12-41	kh.safaryan@gsu.am
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ	0-60-46-12-56	g.harutyunyan@gsu.am

Հարությունյան Գևորգ Գագիկի		
Արխիվի վարիչ Կարապետյան Անուշ Վազգենի	0-60-46-12-49	a.karapetyan@gsu.am
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	0-60-46-12-46	g.muradyan@gsu.am
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	0-60-46-12-49	l.sirunyan@gsu.am
ԳՊՀ 1-ին գրադարանի վարիչ Պետրոսյան Նահրա Ֆահրադի	0-60-46-12-68	n.petrosyan@gsu.am
ԳՊՀ 2-րդ գրադարանի վարիչ Հակոբյան Ելենա Հայկի	0-60-46-12-50	e.hakobyan@gsu.am
ԳՊՀ թանգարանի ֆոնդապահ Քեչիշյան Մերի Սերյոժայի	0-60-46-12-49	m.keshishyan@gsu.am
Ուսանողական խորհրդի նախագահ Նանագուլյան Ավետիք Ստեփանի	0-60-46-12-70	a.nanagulyan@gsu.am
Ուսանողական գիտական ընկերության նախագահ Միրիբյան Նունե Արամայիսի	0-60-46-12-77	n.miribyan@gsu.am
Ավագ պարետ Զաքոյան Տարիել Հրաչիկի	0-60-46-12-86	t.zaqoyan@gsu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրեր, զարգացումներ, արդյունքներ	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին	7
ԳՊՀ միջազգային համագործակցության ծրագրեր	44
ԳՊՀ միջազգային համագործակցության հուշագրեր	96
Դասախոսների գործունեություններ	97
Ուսումնագիտական գործունեություն	106
Բանասիրական ֆակուլտետ	125
Բնագիտական ֆակուլտետ	141
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ	165
Տնտեսագիտական ֆակուլտետ	185
Հեռակա ուսուցման ֆակուլտետ	206
Ակադեմիական քաղաքականության վարչություն	213
ԳՊՀ գրադարան	221
ԳՊՀ Վ. Ավետյանի անվան պատմության թանգարան	227
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժին	230
Տեղեկատվական համակարգերի զարգացման և սպասարկման աշխատանքներ	238
ԳՊՀ համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոն	245
ԳՊՀ արհեստակցական միություն	247
Ուսանողական խորհուրդ	248
Ուսանողական գիտական ընկերություն	252
ԳՊՀ իրավաբանական կլինիկա	254
Տնտեսատեխնիկական գործունեություն	257
ԳՊՀ հիշարժան միջոցառումներ	262
Տեղեկատու	314

CONTENTS

Projects, Development and Results	3
General information about GSU	7
GSU International Cooperation Programs.....	44
GSU International Cooperation Memorandums	96
Business Trips of the Academic Staff.....	97
Educational and Research Activities	106
Department of Philology	125
Department of Natural Sciences	141
Department of the Humanities.....	165
Department of Economics	185
Department of Part-Time Education.....	206
Academic Policy Department	213
GSU Library	221
GSU History Museum after V. Avetyan	227
GSU Public Relations and Information Department.....	230
Activities for IT Development and Service.....	238
GSU University-Employer Cooperation, Alumni and Career Center.....	245
GSU Trade Union	247
Student Council	248
Student Scientific Society	252
GSU Legal Clinic	254
Economic-Technological activity	257
GSU Memorable Events.....	262
Telephone and E-mail Directory.....	314

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ACTIVITY REPORT
OF THE ACADEMIC YEAR 2013-2014

ԳՊՀ
Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան1,
հեռ. (37460) 46-02-01
կայք. www.gsu.am
էլ. փոստ՝ info@gsu.am

GSU
Gegharkunik Marz
1 Hrant Hakobyan Str., Gavar
tel. (37460) 46-02-01
website: www.gsu.am
e-mail: info@gsu.am
